


10238

2970



1 DEC 20
24 SEP 2

ՅԿՇՄԶ

Հ-21

uy

ՀԱՄԼԵՆԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ԲԱՆԱԶԵՎԵՐՆ ՈՒ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՔԶ-Բ ՔԵ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1929

01 JUN 2013

10238



1347-52

ԿՈՍՏԵՐԻՏԵԿԱՆՆԵՐ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՐԻՏԵԱՆԻ ՊՐՈԼԵՏԱՆՆԵՐ, ՅԵՐԻՏԵԱՆԻ ԳՅՈՒԴԱՅԻՆՆԵՐ

Բանվորների և գյուղացիների կառավարությունն այսօր հանձնեց Համլենկոմիտեի օմիտեթյան 8-րդ համագումարին Կարմիր Դրոշի շքանշան՝ պրոլետարական ամենաբարձր պարգևը: Այդ շքանշանով պարգևատրված է ամբողջ լենինյան կոմյերիտօմիտեթյունն ի նշան այն համառ պայքարի, վորը նա մղել է՝ հասկավոր բանվորների ու գյուղացիների հետ ձեռք ձեռքի տված՝ քաղաքացիական պատերազմի բազմաթիվ ճակատներում:

Այդ շքանշանն ստանալու իրավունքը նվաճել են այն լերիտասարդ բանվորներն ու գյուղացիները, վորոնց կարմիր արյունով են ներկված մեր դրոշները, վորոնց սիրտը դադարել է բաբախել հանուն հաղթության, ովքեր իրենց կյանքի գնով պրոլետարական դիկտատուրայի հաղթանակն են տվել մեզ, ովքեր արհամարհանքով են ընդունել մահն սպիտակ-գվարդիականների ձեռքից:

Ընդունելով Կարմիր Դրոշի շքանշանը, մենք այսօր հարգում ենք նրանց հիշատակը, նրանց քաջագործությունները:

Ընկերներ.

Խող յուրաքանչյուրը ձեզնից լավ հիշի այս. շքանշանը վոշ միայն պարգև է, շքանշանը մի մեծ պար-

տավորութիւնն եւ, վոր հանձն եւ առնում լենինյան կոմիտէի տախտակութիւնը:

Կրկնակի եւ չեռակի ավելանում եւ չորսաքանչյուր կոմիտէի տախտակն իւր պատասխանատուութիւնը իր միութեան, բայց ի կենսական կուսակցութեան եւ խորհուրդների իշխանութեան առաջ:

Կարմիր-դրոշակայինի կոչմանն արժանի չե հաւում մեջ պարգեւը միայն պարծանքի զգացում առաջ կրելի, ով կգոռողանա եւ չի դնի իր առաջ աչք հարցը. ի՞նչ պարտականութիւններ եւ դնում ինձ վրա Կարմիր Դրոշի շքանշանը:

Համլենի կոմիտէի տախտակութեան 8-րդ Համամիութենական համագումարը հիշեցնում եւ լենինյան կոմիտէի տախտակութեանն այդ պարտականութիւնների մասին:

Չարի ու բռնութեան աշխարհի, գիշատիչների աշխարհի եւ կառուցվող սոցիալիզմի չեղելի միջև մղվող պայքարը դեռ շարունակվում եւ: Պատրաստվիր, կոմիտէի տախտակն, պատրաստվիր, յերիտասարդ բանվոր ու գյուղացի՝ նորից գենք վերցնելու, նորից հեծնելու մարտական նիւթը: Սովորիր պաշտպանվել. սովորիր հաղթել:

Սոցիալիզմը հեռավոր ապագայի գործ չեւ: Սոցիալիստական հասարակութիւնն այսօր արդեն կոփվում եւ մեր Փաբլիկաներում ու գործարաններում, մեր լայնածիր դաշտերում: Ոգնիր՝ ռաջիոնալացման լենիստական սոցիալիստական արդունարեւութիւնը: Քո ամուր ձեռքերի մեջ սու տրակտորի ղեկը, ջնջիր չքավորական հողամասերի սահմանները, կովիր՝ գյուղում կոլեկտիվ տնտեսութեանը զարկ տալու համար:

Ամեն մի նոր ակումբ, խրճիթ-ընթերցարան,

մսուր, ամեն մի նոր կուլտուրական ոջախ—խոշոր քայլեր են կուլտուրական հեղափոխութեան ճանապարհին:

Կոմիտէի տախտակներ.

Դեպի կենցաղի բարրիկադները,—հին, փտած հասկացողութիւնների ու սովորութիւնների, նախապաշարմունքների դեմ, հանձն ընդհանրական գրագիտութեան եւ կուլտուրականութեան, հանձն չեղբայրական, ընկերական վերաբերմունքի դեպի կինը եւ դեպի իրար, հանձն պայծառ ու լուսավոր կյանքի, հանձն կոմունիստական բերկրալից կենցաղի:

Լենինիստի արեգակնային եւ դաժան կոչումը պետք եւ բարձր դասել ամեն բանից: Բարձր անձնական կապվածութիւնից ու հարմարութիւններից, բարձր իր «յեսից»: Հիշիր, վոր դու կոմունիզմի մարտիկ ես, կոմիտէի տախտակն ես, Կարմիր-բանակային ես: Առաջին պլանում—դասակարգի շահերը, հասարակութեան շահերը:

Ֆերիտասարդ Կարմիր-դրոշակայիններ:

Չեր անունից, լենինիստների չեղմիտիոն բանակի կողմից համագումարը հայտարարում եւ Խորհրդային Միութեան կառավարութեանը.

Մեր գիտելիքները, մեր մկանները եւ մեր կյանքը պատկանում են բանվորների ու գյուղացիների իշխանութեանը: Մենք չխնայեցինք նրանց քաղաքացիական պատերազմի հրաշունչ տարիներում, մենք ազանց ափսոսանքի, առանց տրտունջի կոհարերենք նրանց նոր փորձութիւնների եւ հաղթանակների ուրերին: Սպասում ենք մեր հրամանատարների հրամանին:

Մենք չերբեք չենք նշավակի կարմիր Դրոշի շքանշանը, վոր ախոր հանձնվեց մեզ: Մենք չերդ-վում ենք արդարացնել այն, յերդվում ենք նոր փառ-քով պատել կարմիր բանակի և կարմիր նավատորմի դրոշակները:

Մենք յերդում ենք տալիս՝ չիջեցնել մեր ձեռ-քերը, մինչև վոր չհնչեն «Ինտերնացիոնալի» հաղթա-կան հնչյուններն ամենուրեք, ուր թափվում է ախոր բանվորների ու գյուղացիների արյունն ու քրտինքը:

Մենք հանդիսավոր կերպով խոստանում ենք խորհրդային կառավարութանը ամենաջերմ մասնա-կցութունն ունենալ նրա բոլոր ձեռնարկութիւններում և նրա ամբողջ աշխատանքի մեջ: Դաշտում և գործարա-նում, կարմիր-բանակայինի զորանոցում և կոոպերա-տիվի վաճառասեղանի մոտ մենք կկատարենք մեր փոքրիկ գործը, հիշելով, վոր այդ գործը մի մասնիկն է այն մեծ գործի, վորը սոցիալիզմի շինարարու-թյունն է կոչվում:

Կարմիր դրոշակային վորոտալից վողջույն բալ-շեխների կուսակցութեանը, վորի ղեկավարութեամբ մենք կովել ենք խորհուրդների իշխանութեան համար մղված մեծ պայքարի ահեղ ու վճռական ուղիներն, վո-րը սովորեցնում է մեզ աշխատել և կռուցել սոցիա-լիստական հասարակութեան շենքը, և վորի դրոշակնե-րի տակ մենք կհասնենք վերջնական հաղթանակի՝ բանվոր դասակարգի հաղթանակին ամբողջ աշխար-հում:

Համկեցկոմյեթիսմիութեան Տ-րդ Համամիու-թեցական համագումար

ՀԱՄԿԵՑԿՈՄԵԹԻՏԻՄԻՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ ՀԱՅՎԵՏՎՈՐԹՅՈՒՆԸ

(Բանաձեւով բնկ. Ձապլիցի զեկուցման շուրջը)

Համկեցկոմյեթիսմիութեան Տ-րդ համագումարը
Համկեցկոմյեթիսմիութեան Կեցկոմի **բաղաձայն**
գիծը համարում է ճիշտ **յեւ** **ճիշտ** **գործնական աշ-**
խատանքը՝ բավարար:

ԽՍՀՄ-ի դարգացման ներկա շրջանը բնորոշ է նրանով, վոր սրվել են դասակարգային հակասու-թյունները և պայքարը թե ԽՍՀՄ-ի և կապիտալիս-տական աշխարհի փոխհարաբերութիւնների բնագա-վառում, և թե յերկրի ներսում: Յեթե Խորհրդային Միութեան աճումն ու ամրապնդումն ավելի մեծ ա-տելութիւնն է առաջ բերել կապիտալիստական պե-տութիւնների կողմից դեպի ԽՍՀՄ-ը և ուժեղացրել է տնտեսական ու ռազմական ինտերվենցիայի վտանգը, ապա ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսութեան սոցիալիս-տական տարրերի աճումն ու պրոլետարական պետու-թեան զրոհը կապիտալիստական տարրերի դեմ ուժե-ղացրել են պրոլետարիատի թշնամի դասակարգերի դիմադրութիւնը յերկրի ներսում:

Միաժամանակ սրվել է դասակարգային պայքարը՝ պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիութեան ա-ճող սերունդը նվաճելու, իր կողմը գրավելու համար: Թշնամի դասակարգերը հուշս ունեն, վոր աշխատա-վոր յիրիտասարդութեան նոր սերունդը, վորը դաս-տիարակվում է նոր տնտեսական քաղաքականութեան պայմաններում և վորը չունի պրոլետարիատի կողմից բուրժուազիայի դեմ՝ թե ցարիզմի շրջանում և թե

քաղաքացիական կռիւները շրջանում մղված դասակարգային պայքարի փորձը, չի կարող լինել բայցևս վիզմի գործի շարունակողը և «համաձայնութեան կզտ կապիտալիստական Սերմուտքի հետ», այսինքն՝ կզտ բուրժուական ռեստավրացիայի ճանապարհով: Ահա թե ինչու պրոլետարիատի հակառակորդ ուժերը պայքար են մղում չերիտասարդութունն իրենց կողմը դրավելու համար, ձգտելով այդ չերիտասարդութեան աճող ակտիվութունն ուղղել (направить) սոցիալիզմի և պրոլետարական դիկտատուրայի դեմ: Յերիտասարդութեան շարքերը նվաճելու համար մղվող այդ պայքարը տեղի չե ունենում մեր կյանքի ամենաբաղձազան բնագավառներում և արտահայտվում է ամենաշուրջահատուկ ձևերով, սկսած այնպիսի չերուլթնիքից, ինչպիսին են հոգևորականութեան և կրօնական, աղանդավորական կաղմակերպութունների գործունեւթյան աշխուժացումը, նացիոնալիստական տարրերի ակտիվութեան ուժեղացումը, կուլակի պայքարը՝ գլուղի աշխատավոր չերիտասարդութեանն իր կողմը դրավելու համար, մինչև մատերիալիստական աշխարհայացքը բուրժուական իդեալիստական փիլիսոփայութեանը հակադրելը (դրականութեան մեջ և բարձրագույն դպրոցի ուսանողութեան շարքերում):

Մեր չերիտասարդութեան կենցաղի մեջ նմանապես համառ պայքար է տեղի ունենում հնի ու նորի միջև: Նոր կենցաղի տարրերը պայքարում են հին տրագիգիանների ու սովորութեների դեմ: Մեղչանական ինդիվիդուալիզմը, մանր սեփականատիրոջ եզդիզմը, քաղքենիութունը, ալկոհոլիզմը — դեռ խոշորագույն խոչընդոտներ են հանդիսանում նոր կուլտուրա-

կան կոմունիստական կենցաղի կառուցման ճանապարհին:

Այդպիսի պայմաններում Համլենկոմչերիտմիութեան հիմնական խնդիրն է՝ վճռական հարձակման դիմել կուլտուրական և իդեոլոգիական ֆրոնտում, անխնա հակահարված տալ հակապրոլետարական իդեոլոգիայի ամեն տեսակի արտահայտութուններին, զարկ տալ աշխատավոր չերիտասարդութեան դասակարգային ինքնագիտակցութեանը, վճռականութեամբ պայքարել միութեան դասակարգային պրոլետարական դժի խեղաթուրումների դեմ, առավելագույն չափով խտացնել կոմչերիտմիութեան շարքերը, բարձրացնել քաղաքի և գյուղի պրոլետարական խավերի ակտիվութունը և ամրապնդել նրանց ղեկավար դերը:

Ամբողջովին հավանութուն տալով Կենտկոմի դժին և այն բոլոր ձեռնարկումներին, վոր իրագործել է Կենտկոմը տրոցկիստական ռպպոզիցիայի դեմ մղվող պայքարում, համագումարը գտնում է, վոր տրոցկիստների լիակատար գաղափարական պարտութունն ու քայքայումը կուսակցութեան մեջ ու կոմչերիտմիութեան շարքերում գաղափարականապես ամրապնդեցին կոմչերիտմիութունը և վերացրին այն կարևորագույն խոչընդոտներից մեկը, վորը խանգարում էր համախմբել կոմչերիտական շարքերը, իրական հակահարված տալ բոլոր հակապրոլետարական ազդեցութուններին, ինչպես նաև հնարավորութուն ընձեռեցին կոմչերիտմիութեանն իր ստեղծագործական ուժերն ամբողջովին գործադրել շինարարական աշխատանքի համար:

Կոմչերիտմիութեան կարևորագույն խնդիրն ան-

ցած ժամանակաշրջանում չեղել է այն, վոր նա բան-
վոր և գյուղացի յերիտասարդության զանգվածներին
մասնակից ե արել սոցիալիստական շինարարության
գործին, հիմք ունենալով այդ յերիտասարդության
անհատական շահերի գուգորդումը հասարակականի
հետ և այդ մասսաների ակտիվությունը կազմակեր-
պելու նոր ձևերի ու մեթոդների կիրարկումը: Այդ
բնագավառում կատարված գլխավոր նվաճումն այն ե,
վոր սվեյացի ե կոմյերիսմիության դերը, վորպես
կուսակցության ոգնականի դեր՝ կուսակցության կող-
մից կատարվող կուլտուր-տնտեսական աշխատանքի
ասպարիզում: Այդ հաջողությունը ձեռք ե բերված
շնորհիվ աշխատանքի այնպիսի ձևերի կիրառման, վո-
րոնք նպաստում են կոմյերիտականների և բանվոր
յերիտասարդության համախմբմանը սոցիալիստական
շինարարության կոնկրետ խնդիրների շուրջը կամա-
վորության, նախաձեռնության և ինքնագործունեյու-
թյան հիմունքով (սիրող-կազմակերպողներ, կենցա-
ղային կորիզներ, ռացիոնալացնող գրուպպաներ, հար-
վածային բրիգադներ՝ արտագրության մեջ, արտա-
դրական կոնկուրսներ և անվանակոչի և այլն): Միայն
ընթանալով այդ ճանապարհով՝ միությունը վոչ խոս-
քով, այլ գործով կկարողանա աշխատավոր յերիտա-
սարդության ամբողջ մասսային մասնակից անել սո-
ցիալիստական շինարարության բոլոր ճյուղերին և
լուծել միութենական կյանքի այնպիսի ցավոտ հար-
ցեր, վորպիսին են՝ բոլոր կոմյերիտականներին գործ-
նական շինարարական աշխատանքի մասնակից անելը
և միության շարքերում նկատվող աննորմալ հոսսու-
նությունը (текучесть) լիկվիդացիայի լենթարկելը:

Կամավորության զարգացումը կոմյերիտական
աշխատանքի ասպարիզում բնավ չի նշանակում, թե
պետք ե հրաժարվել այն պարտադիր պահանջներից,
վոր առաջադրվում են կոմյերիտականներին Համլեն-
կոմյերիտմիության կանոնադրությամբ: Դրանից
յերևում ե միայն այն, վոր միութենական դեկավարու-
թյունը պետք ե բարելավվի և վոչ թե թուլացվի: Մի-
այն քաղաքական և պրակտիկ ճիշտ դեկավարության
դեպքում յերիտասարդության ակտիվության կազմա-
կերպումը՝ կամավորության հիմունքով՝ կարող ե ըն-
թանալ սոցիալիստական հունով:

Սակայն համագումարը միանգամայն անբավա-
րար ե համարում Համլենկոմյերիտմիության հաջողու-
թյունները մասսաների ակտիվության կազմակերպ-
ման նոր ձևեր ու մեթոդներ կիրարկելու ասպարի-
զում: Այդ ուղղությամբ միայն առանձին քայլեր են
արված. գլխավոր աշխատանքը հետո չե կատարվելու.

Աշխատանքի նոր ձևերի ու մեթոդների անցնե-
լու ճանապարհին խոշորագույն խոչընդոտը այն ան-
շարժությունը, հնամուլությունն ու բյուրոկրատիզմն
են, վոր գոյություն ունեն դեկավար ապարատում ու
միության ակտիվի շարքերում: Կոմյերիտմիության
կյանքում բուն դրած այդ ախտերը վճռականությամբ
արմատախիլ անելու համար անհրաժեշտ ե վերակազ-
մել միության բոլոր դեկավարձարմիրների աշխատան-
քը այն ուղղությամբ, վոր ամրապնդվի այդ մար-
միրների կապը մասսաների հետ, և ավելի մեծ ճկու-
նությունն ու շարժունությունն ստեղծվի միութենա-
կան դեկավարության մեջ, Համագումարն առաջար-
կում ե Կենտրոնական Կոմիտեյին և միության բոլոր

դեկավար մարմիններին ամենակարճ ժամանակամիջոցում վերականգնել իրենց աշխատանքի սխտանքն այն ձևով, վոր մշտական դեկավար աշխատավորներն առնվազն իրենց բանվորական ժամանակի կեսը նվիրեն բջիջներում և ստորին կաղմակերպութուններում նրանց կողմից կատարվող աշխատանքին, ուղենլով ստորին կաղմակերպութուններում աշխատող միութենական աշխատավորներին և հսկելով կենտկոմի և միության տեղական կոմիտեների ղերեկտիվների կատարմանը: Ընդ ամին անհրաժեշտ և նկատի ունենալ այն, վոր վորքան ցածր և (ստորագույն և) միության դեկավար մարմինը, այնքան ավելի շատ ժամանակ պետք և նվիրի նա բջիջներում կատարվելիք անմիջական աշխատանքին:

Ակտիվի՝ կոմյերիտական աշխատանքից կտրվելու չերեուցթների և միության դեկավար մարմիններում չերեան չեկող բյուրոկրատիզմի ու կղղիացման (замкнутость) դեմ պայքարելը, միութենական ամբողջ կյանքն աշխուժացնելը, կոմյերիտմիության պրոլետարական կորիզի ղեկավար դերն ամրապնդելը հնարավոր են միայն այն դեպքում, չեթե համարձակ ծավալվի բայլշեկյան ինքնաքննադատություն: Միայն ինքնաքննադատության ծավալման և կոմյերիտական, կուսակցական ու խորհրդային իրականության բոլոր ցավոտ կողմերի մերկացման դեպքում կարող և բարձրանալ ակտիվի պատասխանատվությունը միութենական մասնաների առաջ, կարող են միլիոնավոր մասնաները մասնակից արվել պրոլետարական պետության շինարարական աշխատանքին և պայմաններ ստեղծվել կոմյերիտականների բայլշեկյան դաստիարակության համար:

Բախլության համար: Ընդամին միությունը պետք և հատուկ ուշադրություն դարձնի աշխատավոր չերիտասարդական մասնաներին մասնակից դարձնելու պետական ասպարատի բարելավման գործին և բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարին: Համագումարը հավանություն և տալիս միության կենտրոնական որդան՝ «Комсомольская Правда»-ի աշխատանքին, մանավանդ բյուրոկրատիզմի դեմ պայքարելու բնագավառում:

Առանց ներմիութենական դեմոկրատիա իրագործելու և ինքնաքննադատությունը զարգացնելու, անհնար և նաև միության անդամների քաղաքական կրթութությունն աշխուժացնելը: Քաղաքացիների և խմբակների աշխուժացումը հնարավոր և միայն այն դեպքում, չեթե նրանց աշխատանքը սերտորեն կապվի միութենական և կուսակցական կյանքի հրատապ խնդիրների հետ և ինքնաքննադատության տարր մտցվի միության անդամների քաղաքական կրթության ամբողջ բովանդակության մեջ: Ընդգծելով մարքսիզմ-լենինիզմն ուսուսմասիրելու պարտադրությունը յուրաքանչյուր կոմյերիտականի համար, համագումարն առանձին ուշադրություն և դարձնում ակտիվի թեորետիկական կվալիֆիկացիան բարձրացնելու անհրաժեշտության վրա: Իսկ այդ կարելի չե իրագործել միայն այն դեպքում, չեթե յուրաքանչյուր ակտիվիստ լինի վող միայն կաղմակերպող, այլև պրոպագանդիստ, կատարելով վորոշ պարտականություններ բանվոր կոմյերիտականների քաղաքական կրթության վերաբերյալ:

Համագումարն առանձնապես պարտավորեցնում և

բոլոր կոմյերիտական կազմակերպություններին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել հակակրոնական պրոպագանդ ծավալելու համար, միջոց առնել ազանդավորական կազմակերպությունների հետ պայքարելու գծով:

Գյուղի բաժնակիր և չքավորի վրա հենվելով, Համլենկոմյերիտությունը՝ միջակային-գյուղացիական չերիտասարդության մասսաներում ազդեցություն ձեռք բերելու ճիշտ գիծն ապահովել է բանվոր չերիտասարդության ղեկավար դերի ամրապնդումը ԽՍՀՄ-ի չերիտասարդական շարժման մեջ, վերացրել է հակամիջակային թեքումը և կոմյերիտությունը դարձրել է գյուղում իսկական մասսայական կազմակերպություն: Հացամթերման վերջին կամպանիան, վորի մեջ կոմյերիտությունն ակտիվ մասնակցություն ունեցավ, չեկավ հաստատելու միության այդ անվիճելի նվաճումները: Բայց միաժամանակ այդ կամպանիան պարզորոշ յերևան բերեց բազմաթիվ փաստեր, վորոնք վկայում են Համլենկոմյերիտության դասակարգային գծի խեղաթյուրման մասին՝ միության տեղական կազմակերպությունների գործունեության ասպարիզում: Այդ խեղաթյուրումներն արտահայտվում են վորպես Համլենկոմյերիտության մի շարք գյուղական բջիջների աշխատանքի սխալ ղեկավարություն, բջիջներ, վորոնք փոխանակ վարելու գյուղացիության արտադրական կոոպերացման և չերիտասարդությունից քաղաքակրթված (цивилизованный) կոոպերատորների սերունդ դաստիարակելու գիծը, ավելի հակամետ են յեղել բարձրացնելու անհատական գյուղացիական տնտեսությունը, դաստիարակելու միանձնյա տնտեսներ: Միաժամանակ շատ խեղաթյուրումներ են տեղի

ունեցել միության վրա գյուղում կարգավորելու գործում, վորի շնորհիվ լավագույն միջակի դիմակի տակ միության մեջ են հողոսկել միջակների ունևոր վերնախավը (беркуты) և կուլակային տարրերը: Այդպիսի խեղաթյուրումների և բաժնակրության ու չքավորության մեջ հակադրված անբավարար աշխատանքի հետևանքով հանցամիտման կամպանիայի շրջանում յերևան են բերված մի շարք փաստեր, վորոնք վկայում են, վոր կոմյերիտությունն գյուղական միջանի բջիջներ դարձել են կուլակության պոչը, ոժանդակել են նրան, կուսակցության և խորհրդային իշխանության ձեռնարկումների դեմ են դուրս չեկել, դառնալով այդպիսով գործիք կուլակության ձեռքին: Միության գլխավոր խնդիրները գյուղում աչժ հետևյալներն են. ոգտագործել գյուղի կոմյերիտականների և անկուսակցական աշխատավոր չերիտասարդության ամբողջ մասսային՝ կուսակցությանն ոգնելու գյուղատնտեսության կոլեկտիվացման գործում, վճռականորեն մաքրել միությունը տեղ գտած ու խցկված կուլակային և ունևոր տարրերից, ավելի մեծ յեռանդով ներգրավել չքավորներին ու բաժնակրներին կոմյերիտություն մեջ, ապահովել վերջիններիս ղեկավար դերը կոմյերիտություն գյուղական բջիջներում, միության շարքերն ընդունել միայն իսկապես լավագույն միջակներին, աչսինքն՝ սակավազոր և քաղաքականապես վատահիլի միջակներին, ինչպես նաև վճռականորեն պայքարել գյուղում տեղի ունեցող դասակարգային պայքարը անտես առնելու և աչն քողարկելու ու կուսակցական գիծը խեղաթյուրելու բոլոր յերևույթների դեմ:

Միութեան զատակարգային դերքերի ամրապնդումը, նրա աշխատանքի բոլոր ասպարեզներում, կոմյերիտմիութեան շարքերում գտնվող միջակային գյուղացիական չերիտասարդութեան մասսաներին վերադաստիարակելու և վերամշակելու խնդիրը պահանջում են Համլենկոմյերիտմիութեանից առավելագույն ուշադրություն դարձնելու բանվոր չերիտասարդութեան մեջ մասսայական աշխատանք կատարելու վրա, ուշադիր գտնվելու դեպի նրա կարիքները և կատարելու միութեան VI համագումարի վորոշումները՝ բոլոր չերիտասարդ պրոլետարներին կոմյերիտական շարքերը ներգրավելու մասին: Համագումարը դատապարտում և ակտիվի վորոշ մասում չեղած այն տրամադրությունները, վորոնք ուղղված են ամբողջ բանվոր չերիտասարդութեանը կոմյերիտմիութեան շարքերը ներգրավելու դեմ, և գտնում և, վոր այդ տրամադրությունները միայն քողարկում են մի շարք կազմակերպությունների անգործունեությունը այդ ասպարիզում: Համագումարը հատուկ ուշադրություն և հրավիրում վոչ վորակյալ, ցածր վարձատրվող բանվոր չերիտասարդութեան, ինչպես նաև աղջիկ-բանվորուհիների մեջ աշխատանքի վրա: Միութեան մասսայական աշխատանքը պետք և հարմարեցվի բանվոր չերիտասարդութեան առանձին խավերին և միաժամանակ պետք և ապահովել Համլենկոմյերիտմիութեան գործունեությունը չերիտասարդ անկուսակցական բանվորների կողմից քննադատելու պայմաններ, գումարելով տրվյալ համբարություն, գործարանի, շրջանի ամբողջ բանվոր չերիտասարդութեան ընդհանուր ժողովներ և կոնֆերենցիաներ: Անհրաժեշտ և, վորպեսզի արհես-

տակցական, խորհրդային և կոոպերատիվ աշխատանքի համար առաջ քաշվեն վոչ միայն կոմյերիտականներ, այլև ակտիվ չերիտասարդ անկուսակցական բանվորներ: Միայն այդ ճանապարհով կարելի չե ապահովել Համլենկոմյերիտմիութեան ամուր կապը պրոլետարական չերիտասարդութեան մասսաների հետ և վերացնել միութենական կազմակերպությունների՝ գործարանային չերիտասարդութեանից կտրվելու չեղևությունները:

Կուլտուրական հեղափոխությունն անհրաժեշտ է շրջանը, վերակառուցումը և արդյունաբերության սոցիալիստական ռացիոնալացումն առանձին սրություններ առաջադրում են պրոլետարական պետությանը՝ նոր կուլտուրական, պրոլետարիատին նվիրված կազմակերպատրաման խնդիրը, սկսած շարքային վորակյալ բանվորից և վերջացրած բարձրագույն կրթություն ստացած մասնագետով: Ավելի քան չերեկից Միութեանը պետք և ուշադրություն առնի պրոլետարական չերիտասարդութեան, ինչպես նաև անչափահասների բանվորական կրթության խնդիրները: Համալենկոմյուն տալով Կինտկոմի գծին այն բյուրոկրատիկ խեղությունների դեմ պայքարելու ասպարիզում, վոր չերեան են յեկել բանվոր չերիտասարդութեան աշխատանքի վերաբերյալ սոցիալիստական որենսդրության խնդիրներում, — մի որենսդրություն, վորն ապահովում և այդ չերիտասարդութեան աշխատանքի կազմակերպումը և նրա կրթությունը սոցիալիստական հիմունքներով, — համագումարը գտնում և, վոր ժողովրդական տնտեսության զարգացման առաջիկա հնգամյակում անհրաժեշտ և միջոցներ ձեռք բանի մար-

124

1347-2



սիմալ չափով առաջ գնալու այդ ուղղությամբ, ձգտելով, վոր վերակազմված ֆարգործուսդպրոցներն ընդգրկեն անչափահասների ամբողջ բրոնյան:

Համագումարը գտնուում է, վոր պրոլետարական դիկտատուրայի պայմաններում պրոլետարիատի նոր կադրեր պատրաստելու գործում անհրաժեշտ է հետապնդել վոչ միայն բանվորի նեղ-արտադրական ուսուցման նպատակը, մի բան, վոր անխուսափելիորեն դարձնելու չի բանվորին մեքենայի մի մասնիկն, այլ վորակալ աշխատավոր, արտադրական բովանդակ պրոցեսսի գիտակից մասնակից, սոցիալիստական տնտեսության ստեղծագործող դաստիարակելու նպատակը:

Հակառակ տեսակետները՝ ֆորդիզմ ու կապիտալիստական ռացիոնալացման մեթոդների փոխադրում կնշանակեն խորհրդային հողի վրա:

Միաժամանակ համագումարը գտնուում է, վոր անչափահասների (подросток) բրոնյան լիկվիդացիայի չենթարկելու, նրանց աշխատանքն արտադրությունից վերացնելու, ֆարգործուսդպրոցները լիկվիդացիայի չենթարկելու առաջարկները, վոր պաշտպանություն են գտնում տնտեսավարների մի մասի կողմից, նպատակ ունեն բեկանելու դեռահաս բանվորների աշխատանքի վերաբերյալ սոցիալիստական որենսդրությունը և վոչ մի առնչություն չունեն Մարքսի և Լենինի հայացքների հետ, վորոնց տեսակետից անչափահասների աշխատանքն արտադրության մեջ անչափահասների կոմմունիստական դաստիարակության հիմքն է:

Շարունակելով պայքարը բանվոր չերիտասար-

դության առանձին խմբերում չերևան լեկոդ համաձայնողական ցեխային տրամադրությունների դեմ, մոբիլիզացիայի չենթարկելով այդ չերիտասարդության ստեղծագործական ակտիվությունը սոցիալիստական ռացիոնալացման գործի շուրջը, միևնույն ժամանակ պետք է հաստատուն կերպով պաշտպանել չերիտասարդության աշխատանքի վերաբերյալ գոյություն ունեցող որենսդրությունը:

Արձանագրելով, վոր արհմիությունները մինչև այժմ բավականաչափ ուշադրություն չեն դարձրել բանվոր չերիտասարդության աշխատանքի և կրթության խնդիրների վրա և թույլ պայքար են մղել չերիտասարդական աշխատանքի վերաբերյալ որենսդրության խեղաթյուրումների դեմ, համագումարը պահանջում է Համարհմխորհից (ВЦСПС) վերջ տալ այդ աննորմալ դրությանը:

Յերկրի ինդուստրացումը և գյուղատնտեսության կոլլեկտիվացումը դժվարանում են շնորհիվ աշխատավոր մասսաների կուլտուրական հետաձևացության: Ահա թե ինչու ժողովրդական կրթության խնդիրներն առաջնակարգ նշանակություն են ստանում: Համագումարը գտնում է, վոր ժողովրդական կրթության ալժըմյան սիստեմը, մանավանդ բարձրագույն և միջնակարգ դպրոցները, վճռական վերակազմության կարիք են զգում,—նպատակ ունենալով ավելի սերտ կերպով կապելու այդ սիստեմի աշխատանքը չերկրի տնտեսական կարիքների հետ: Վճռականությամբ պաշտպանելով Լուսժողկոմատի պահանջները իր բյուջեն ընդարձակելու վերաբերյալ, համագումարը միաժամանակ առաջադրում է կուսակցությանը և կառավարությանը

կուսժողովուրդն ամրապնդելու նոր, թարմ ուժերով, վորոնք կապված են արհեստակցական, կոմյերիտական և տնտեսական կազմակերպությունների հետ:

Համագումարը հանձնարարում է Համլենկոմի-րիտմիությանը միության միջից մի շարք լավագույն աշխատավորներ տրամադրել ժողովրդական լուսավորության մարմիններում աշխատելու համար: Միա-ժամանակ անհրաժեշտ է առանձնապես ընդգծել կուս-ժողովուրդն ապալարատում նկատվող անշարժության և հնամուլության դեմ պայքար մղելու խնդիրը, մանա-վանդ բարձրագույն դպրոցի ղեկավարության դժով, վորի (դպրոցի) վերաբերմամբ պետք է մի շարք քաջ-լեր անել՝ կապելու նրա արտադրության հետ:

Համագումարը գտնում է, վոր պետք է բարելավ-վի բարձրագույն դպրոցների ուսանողության նյու-թական ղրությունը՝ թողականների հափն ավելացնելու միջոցով, և հանձնարարում է կենտկոմին միջնորդու-թյուն հարուցել այդ մասին համապատասխան մար-մինների առաջ:

Դպրոցական աշխատանքի ասպարիզում միու-թյան կարևորագույն խնդիրը այն պայքարն է, վոր պետք է մղվի՝ դպրոցը վարից-վեր մատչելի դարձնե-լու բանվորի, բատրակի և չքավորի համար (նյութա-կան պայմանների ապահովություն, ոգնություն պատ-րաստման հարցում, սոցիալական կազմի կարգավո-րում, ուղադրություն՝ դեպի աշակերտության և ու-սանողության մեջ կատարվող աշխատանքը):

Համագումարն անբավարար է համարում կենտկո-

մի, ինչպես նաև միության տեղական կոմիտեների աշխատանքը պիտիերական շարժումը ղեկավարելու ասպարիզում և պարտավորեցնում է կենտկոմին և լու-լոր տեղական կազմակերպություններին վճռական մի-ջոցներ ձևւք առնել՝ բարելավելու այդ կարևորագույն աշխատանքը՝ համագումարի վորոշումները կատարե-լու հիմունքով:

Համագումարը միանգամայն անթույլատրելի չե համարում այժմյան միջադպարին կացության պայ-մաններում միության կողմից ուղադրության թուլա-ցումը չերիտասարդության մեջ կատարվող մասսայա-կան-ազմական աշխատանքին, ինչպես նաև բանակի ու նավատորմի կոմյերիտական կազմակերպություն-ների: Համագումարն առանձնապես ընդգծում է այն խնդիրը, վոր բարձրագույն և ազմա-ծովային դըպ-րոցների կազմը պետք է լրացվի լավագույն բանվոր կոմյերիտականներով:

Համլենկոմյերիտմիության առաջ ղրված խնդիր-ների լուծումը հնարավոր է միայն անախալ ու կանո-նավոր ղեկավարության ղեպքում: Մինչդեռ հաճախ կուսակցական ղեկավարությունը հանդում է ձևակա-նության, մանր խնամակալության և վարչականու-թյան, այն ժամանակ, յերը գաղափարական ղեկավա-րությունը, չերիտասարդության շարքերում կատար-վող պրոցեսների ուսումնասիրությունը, Համլենկոմ-յերիտմիության աշխատանքի հետ կապված դժվարա-գույն խնդիրը լուծելիս նրան ոգնելու գործը թույլ հիմքերի վրա չեն ղրված:

Համագումարն առաջադրում է Համկոմկուսի (Բ) կենտկոմին այդ թերութիւնները վերացնելու անհրաժեշտութեան խնդիրը և գտնում է, Վոր կուսակցական ղեկավարութեան բարելավման պայմաններում կոմյւրիտմիութեան դերը, Վորպես կուսակցութեան ոգնականի և ռեզերվի դեր, անհամեմատ ավելի մեծ կլինի, քան այժմ է:

ԿԻՄ-ի ՀԱՄԼԵՄԿԱՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏԳԵՄԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Բանաձև ընկ. Շացկինի ղեկուգման շուրջը)

Լսելով ԿԻՄ-ի Համլեմկամյերիտմիութեան պատգամավորության հաւանքավորութեանը, կոմյերիտմիութեան VIII համագումարը հաւանքութեան է տալիս պատգամավորության քաղաքական գծին յեւ նրա գործնական աշխատանքին:

Կապիտալիստական ռացիոնալացումը, Վորի հետեւանքով ավելանում է բանվոր յերիտասարդութեան տեսակարար կշիռն արտադրութեան մեջ և պատերազմի վտանգի աճումը սրում է գասակարգային պայքարը՝ յերիտասարդութեան նվաճման համար: Յերիտասարդական աշխատանքի աճող շահագործումը, քաղաքական ռեակցիայի հարձակումը յերիտասարդ պրոլետարներին իրավունքների և կազմակերպութիւնների դեմ, աշխատավորների մատաղ սերնդի հետզհետեւ լայն չափերի հասնող միլիտարիզացումը և ռեֆորմիստական յերիտասարդական շարժման աստիճանական բուրժուական ակներև վերասերումն առաջացնում յեւ ուժեղացնում են բանվոր յերիտասարդութեան ձախացման պրոցեսը: Հակառակ մասնակի կայունացման առաջին շրջանին, յերիտասարդ պրոլետարների լայն մասսաներում աճում է քաղաքական ակտիվութիւնը:

և հեղափոխական պայքարի դուրս գալու պատրաստակամությունը, Վորն իր արտահայտությունն է գրտնում մի շարք լեռնասարգական գործադուլների մեջ բանվոր լեռնասարգության կողմից ընդհանուր գործադուլներում ցուցաբերվող ակտիվ մասնակցության ձեվով լեվ լեռնասարգության սոցիալիսական ինքնացիտնալի եզնաժամի լեվ բուրժուական լեռնասարգական կազմակերպությունների ներսում լեռնական լեկող ոպպողիցիոն քամադուլությունների մեջ:

ԿԻՄ-ի առաջ գրված հիմնական խնդիրն է մաքսիմալ չափով ծավալել բանվոր լեռնասարգության մասսայական պայքարը գործարանում, գարոցում, բանակում լեվ ալն, ինչպես նալեվ բանվոր լեռնասարգության հեղափոխականացումն արագացնել լեվ նրա կազմակերպական ձեվավորումն իրագործել: Չմոռանալով, Վորն տնտեսական պայքարի ասպարիզում գլխավոր ուղադրությունը պետք է դարձնել ընդհանուր պրոլետարական գործադուլների վրա, անհրաժեշտ է համարձակ կերպով լեռնասարգական գործադուլներ ծավալել ամեն տեղ, ուր դրա համար լեռնատարդ և հասակավոր բանվորների համապատասխան տրամադրություն կա, և ղեկավարությունն իր ձեռքը վերցնել: Անհրաժեշտ է ուժեղացնել պայքարը՝ մենշևիկյան շարքերում գտնվող լեռնատարդ բանվորներին մեր կողմը գրավելու համար, առանձին ուղադրություն դարձնելով «ձախ» սոցիալ-դեմոկրատների դեմ մղվող պայքարի և նրանց կողմից լեռնատարգական շարժման մեջ հայտնաբերված ռեակցիոն գործունեյությանը, ինչպես նաև լեռնատարգության սոցիալիստական ինտերնացիոնալի շարքերից հեռացող լե-

րիտասարդ պրոլետարներին մեր կադմակերպությունների մեջ ներգրավելու վրա:

Անհրաժեշտ է ավելի մեծ ուղադրություն նվիրել բուրժուական լեռնատարգական միությունների շարքերում աշխատավոր լեռնատարգության մեջ տարվող աշխատանքին, հաշվի առնելով նրանց դժգոհության տրտահայտման ուրույն ձևերը, հատուկ ադիտացիա և պրոպագանդա մղելով նրանց մեջ:

Համագումարը նշում է ԿԻՄ-ի բաղափական ամբաղնզումը, Վորն ղեկավարությունը և սեկցիաներն անողոր պարտության մատնեցին տրոցկիստական ոպպողիցիալին և ոգնեցին կոմիտեներին լեռնա ձիշտ գիծ կլերառելու միջադգալին կոմունիզմի արմատական տակտիկական խնդիրներում: Բանվոր լեռնատարգության ձախացման պատճառով և կոմլեռնում միությունների աշխատանքի շնորհիվ առել է միությունների բաղափական ազդեցությունը մասսաների վրա:

Սակայն քաղաքական ազդեցության աճումն իր արտահայտությունը չի գտել ԿԻՄ-ի անդամների թվի աճման մեջ: Յեթե այդ թվի նվազումը վերջին շրջանում, Վորն կատարվում է ի հաշիվ անլեգալ միությունների, առաջ է լեկել գլխավորապես Չինաստանում, Իտալիայում, Բուլգարիայում և ալ տեղեր տիրող սպիտակ տերրորի հետեանքով, ապա ԿԻՄ-ի հիմնական լեգալ սեկցիաների բանակական զարգացման կանգ առնելը լեվ ԿԻՄ-ի քարհերոսն հսկայական հոսունության (текучесть) առաջ գալը չի կարելի բացատրել միմիայն որչեկտիվ պայմաններով (ռպրեսսիաների ուժեղացումով Ֆրանսիայում, Չեխո-Սլովակիա-

յուստ և ալլն): Կս պիտտալիզմի մասնակի կալուցանցման միշտ աճող հակասութիւններ, բանվոր յերիտասարդութեան ձախացման և ԿիՄ-ի քաղաքական ազդեցութեան ուժեղացման շրջանում միանգամայն հնարավոր ու անհրաժեշտ ե կոմյերիտմիութեաններ շահումը հիմնական կապիտալիստական յերկրներում: Աճար-ժուրյաճ (застой) հաղթահարումը, վորի պատճառ-նքը պեճ և վորոնք, առաջիճ հերթիճ, կոմյերիտ-միութեաններ շահարճի քերութեաններ մեջ, ԿիՄ-ի կենտրոնական խնդիրճ և հանդիսանում այժմ:

ԿիՄ-ի դժվարութեաններ շահարճի հաղթահարումն ան-հնարին և անընդունելի յե նրա քաղաքական ալտի-վութեանը պալկացնելու ճանապարհով, մի ճանա-պարհ, վորը դարձնելու յե նրան կուլտուրնիկական, այսինքն՝ ելապես սոցիալ դեմոկրատական կազմակեր-պութեան: Նմանապես չի կարող ընդունելի լինել այն առաջարկը, վորի համաձայն լեզալ կոմյերիտմիութեաններ և ԿիՄ-ի կողքին, բանվորական սպորտիվ և կուլտուր-կրթական կազմակերպութեաններ, արհ-միութեաններին կից յերիտասարդական սեկցիաների և այլնի կողքին պետք և կազմակերպվեն բանվոր յերի-տասարդութեան նոր անկուսակցական միութեաններ և բանվոր յերիտասարդութեան ինտիլնացիոնալ՝ քաղաքական խուզված ծրագրով կամ ունիվերսալ-կուլտուրնիկական բնույթով:

ԿիՄ-ի գործկոմի փետրվարյան պլենումը միան-գամայն ճիշտ նշեց միջազգային կոմմունիստական յի-րիտասարդական շարժման հերթական խնդիրները:

Միութեանների կազմակերպչական աշխատանքի ուժեղացումը (առաջին հերթին՝ գործարանային քիջ-

ների շինարարութեանն ու ամրապնդումը, ստորին դեկավար մարմինների ուժեղացումը, ալտիվի դաս-տիարակութեանը) առաջին նախադրչալն և՛ ԿիՄ-ի քա-ղաքական ազդեցութեան և բանվոր յերիտասարդութեան կազմակերպչական ընդգրկումի միջև ստեղծված մկրատը վոչնչացնելու համար:

Միութեանական աշխատանքի աշխուժացումն ա-մենից առաջ քիջներում պետք և նպաստի անհորմալ հոսունութեանը (текучесть) հաղթահարելու գործին, ամրացնելով յերիտասարդ բանվորներին կոմյերիտա-կան կազմակերպութեաններում: Չդառնալով կուլ-տուրնիկական կազմակերպութեան, հիշելով, վոր գըլ-խավորը քաղաքական պալքարին մասնակցելն և, ԿիՄ-ի սեկցիաները պետք և կուլտուր-կրթական լայն աշխատանք ծավալեն, իրենց գործունելութեան բոլոր ասպարեզներում աշխատանքի նոր կենդանի մեթոդ-ներ մտցնեն, հաշվի առնեն յերիտասարդ բանվորների և այն պահանջներն ու կարիքները, վորոնց բավա-րարումը մինչև այժմ յեղել և բուրժուազիայի և սո-ցիալ-դեմոկրատիայի մոնոպոլիան: ԿիՄ-ի սեկցիանե-րը պեճ և դառնալ իսկական, ավելի յերիտասարդա-կան կազմակերպութեաններ, բան միճել այժմ և յեղել:

Պակաս կարեւորութեան չի ներկայացնում նաև կոմյերիտմիութեան և անկուսակցական բանվոր յերի-տասարդութեան շարժիչ միջոցների խնդիրը: Այդ յե-րիտասարդութեան մեծամասնութեանը, կապիտալիզմի պայմաններում, այնքան և ճնշված նյութապես ու հո-գեպես, վոր նրան չի կարող կազմակերպչորեն ընդ-գրկել կոմմունիստական յերիտասարդական կազմակեր-

պությունը: ԿԻՄ-ի 2-րդ կոնգրեսը, վորը մեծապուշն դեր խաղաց կոմունիստական չերիտասարդական շարժման պատմության մեջ, վորը լիկվիդացիայի չենթարկեց «սովանգարդիզմը», վորն առաջին անգամ պարզորոշ դրեց ԿԻՄ-ի առաջ մասսայական կազմակերպություն դառնալու խնդիրը, սխալ գիրք բռնեց ու ժանդակ մասսայական կազմակերպությունների և բանվոր չերիտասարդության ժարմինների հանդեպ, համարելով նրանց կոմչերիտմիության «մրցակիցներ»: Այդ դերքը, վորը ժխտվեց հետագա ասարիների աշխատանքի փորձով, պետք է հիմնովին վերաքննության չենթարկվի ԿԻՄ-ի առաջիկա կոնգրեսի կողմից: Բանվոր չերիտասարդության մասսայական մարմինների և կազմակերպությունների շինարարությունը, նրանց ղեկավարության ստանձնումը, այդ կազմակերպություններում ունեցած ազդեցության կազմակերպչական ոգտագործումը ԿԻՄ-ի կարեորագուշն խնդիրներից մեկն են հանդիսանում: Մասնավորապես անհրաժեշտ է արմիություններում կազմակերպել չերիտասարդական հանձնաժողովներ և չերիտասարդական սեկցիաներ, տալով նրանց կառուցմանն ու աշխատանքին մասսայական բնույթ, ուժեղացնել աշխատանքը բանվորական սպորտի միություններում և դրանց չերիտասարդական բաժանմունքներում, ազատախոհների (свободолюбивых) միություններում և այլն:

Անկուսակցական բանվոր չերիտասարդության մեջ աշխատանք կատարելու հետ միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել ԿԻՄ-ի աշխատանքը գյուղացիական չերիտասարդության ցեղանում: ԿԻՄ-ի յուրաքանչյուր սեկցիան պետք է ունենա կոնկրետ պա-

հանջներ ծրագրել գյուղացիական չերիտասարդության համար, և պետք է վոչ միայն այդ չերիտասարդության կիսապրոլետարական տարրերին ներգրավել մեր շարքերը, այլև ստեղծել սեկցիաներ կամ չերիտասարդության բաժիններ՝ հեղափոխական գյուղացիական կազմակերպություններին կից: Այնտեղ, ուր աչդպիսիները չկան, կամ վորտեղ այդ տեսակի մարմինները չեն ապահովում բավականաչափ ազդեցություն գյուղացիական չերիտասարդության վրա, կարելի չէ ստեղծել հատուկ գյուղացիական չերիտասարդական կազմակերպություններ զանազան անունների տակ, չեթե հնարավորություն կա նրանցում կոմունիստական ղեկավարություն ապահովել: Անհրաժեշտ է, վոր Գյուղինտերնի աշխատանքն ուժեղացվի գյուղացիական չերիտասարդության մեջ:

ԿԻՄ-ի աշխատանքի մեջ հետզհետե ավելի մեծ նշանակություն են ստանում գաղութային լեվ կիսագաղութային յերկրները: Զինական կոմչերիտմիությունը, վորը հերոսաբար կռվում է հեղափոխության առաջին շարքերում, վորը խոշոր կադրեր է պահպանել, չնայած սպիտակ տերրորի անլուր խժոժություններին, մի շարք ղժվարություններ է կրում ալժմ, ղժվարություններ, վորոնց հաղթահարման գործում պետք է չինական կոմչերիտմիությանն ոգնության գալ մմբողջ միջազգային կոմունիստական չերիտասարդական շարժումը: Զինական կոմչերիտմիությանը, ինչպես և չինական կոմկուսակցությանն սպառնացող գլխավոր վտանգը, այդ՝ մասսաներից կտրվելն է, մի բան, վոր պուտչիզմով (ապստամբականությամբ), ավանգարդիզմով և այլնով տարվելու հետևանք է հան-

դիսանում: Համագումարը զոհունակությամբ նշում և կիՄ-ի և չինական կոմյերիտմիության կենտկոմի պաշքարը թե այդ վտանգի և թե կոմյերիտմիությունը լիկվիդացիայի չենթարկելու տենդենցների դեմ: Բանվոր և գյուղացի յերիտասարդության լայն մասսաներին նվաճելը, իր կողմը գրավելը չինական կոմյերիտմիության կենտրոնական խնդիրն և հանդիսանում այժմ:

Պետք և շարունակել միությունը բանվորականացնելու քաղաքականությունը՝ գործարանային բըջիջներն ամրապնդելու, բանվորական ակտիվ առաջ քաշելու և ալլնի միջոցով, մաքառելով միաժամանակ ինտելիգենցիայի վերաբերմամբ ցուցաբերվող մախայկյան (махаевских) տրամադրությունների դեմ:

Կոնսպիրացիան կատարելագործելու միջոցով իր կադրերը պահպանելը կենսական անհրաժեշտություն և հանդիսանում չինական կոմյերիտմիության համար, վորը լուծելով այս բոլոր խնդիրները, այդպիսով Չինաստանի յերիտասարդ պրոլետարներին և գյուղացիներին կնախապատրաստի գալիք զինված ապստամբության համար:

Չինական հեղափոխության փորձը ցույց տվեց, վոր առաջադեմ գաղութներում և կիսագաղութներում, վորտեղ կապիտալիստական արդյունաբերութուն և պրոլետարների բավական ստվար թիվ կա, հնարավոր և անհրաժեշտ և կոմյերիտմիություն կազմակերպել և բնավ պարտադիր չե յերիտասարդության ազգային-հեղափոխական կազմակերպություններ (Գոմինդանի տիպի) ստեղծելը: Այդ փորձը հաջվի կառնի Հնդկաստանի բանվոր յերիտասարդությունը, մի յերկիր, ուր

հոկայական տրագությամբ աճում և հեղափոխական հուժկու ալիքը: Հնդկաստանի բանվոր յերիտասարդության հիմնական խնդիրը կոմյերիտմիությունը ըստեղծելն և, մի միություն, վորի կողքին հնդկական պայմաններում կարող և առաջ գալ յերիտասարդության բանվորա-գյուղացիական կազմակերպություն կամ բանվորա-գյուղացիական մամուլին կից յերիտասարդական սեկցիա: Հնդկաստանի, ինչպես նաև լատինական Ամերիկայի յերիտասարդական շարժման խնդիրները հետզհետե ավելի մեծ նշանակություն են ստանում կիՄ-ի համար:

Իր առաջ դրված խնդիրները լուծելու համար կիՄ-ը պետք և մեծ ուշադրություն նվիրի ակտիվ, միջազգային կոմունիստական յերիտասարդական միջազգային կոմունիստական յեվ գասթաուակե-ժարժման կադրեր առաջ քաշելու յեվ գասթաուակելու գործին: Անհրաժեշտ և, վոր կոմկուսակցությունները յեվ Կոմիցեսերնի գործկոմն ավելի մեծ ուշադրություն և ցուցաբերեն յերիտասարդական շարժման դեկավաությանը: Նմանապես անհրաժեշտ և, վոր կիՄ-ը և նրա սեկցիաներն ուժեղացնեն պրոլետարական շարժման դեկավաությունը, մի շարժում, վորը մի շարք յերկրներում անկում և ապրում և քանակապես յետ և մնում սոցիալ-դեմոկրատական մանկական կազմակերպությունների զարգացումից:

Ինտերնացիոնալ դոստիարակության և Համկեն-կոմյերիտմիության խնդիրները բացառիկ քաղաքական նշանակություն են ստանում այժմ, յերբ սրվել և պայքարը բայլելիլյան նոր սերունդ նվաճելու համար:

Վոչ միայն քաղաքը, այլև գյուղը պետք է մտանակից արվի Համլենկոմյերիտմիության ինտերնացիոնալ աշխատանքին, վրը շտիկնիզմի և նացիոնալիզմի բոլոր արտահայտություններին հակադրում և բալլչեիկյան ինտերնացիոնալիզմը: Այդ նպատակով անհրաժեշտ է, ամենից առաջ, վոր Համլենկոմյերիտմիությունը ավելի ակտիվ մասնակցություն ունենա ԿԽՄ-ի աշխատանքներում: Համլենկոմյերիտմիությունը պետք է միշտ տեղյակ լինի ԿԽՄ-ին վերաբերող խնդիրներին, պետք է քննություն անի այդ խնդիրներն իր բնիշներին և ակտիվ ժողովներում:

7-րդ համագումարին հաջորդող շրջանում զգալապես բարելավվել է Համլենկոմյերիտմիության կազմակերպությունների շեֆալից աշխատանքը, մասնավորապես՝ Լենինգրադի և Ուրալի կազմակերպություններին: Համագումարը կոչ է անում բոլոր տեղական կազմակերպություններին հետևելու նրանց որինակին, ուժեղացնելու և սխտեմատիկացիայի յենթարկելու շեֆային ոգնությունը:

Ուտարերկրյա բանվոր յերիտասարդություն պատգամավորություններ ԽՍՀՄ հրավիրելու փորձը ցույց տվից, վոր այդ պատգամավորությունները վերին աստիճանի կարևոր շաղկապող ողակ են հանդիսանում մեր և կապիտալիստական յերկրների աշխատավոր յերիտասարդության միջև և մեծ չափով նպաստում են խորհրդային յերկրի յերիտասարդության ինտերնացիոնալ դաստիարակության գործին: Ուստի և համագումարն անհրաժեշտ է համարում, վոր այսուհետև ել յեղբայրական պատգամավորություններ հրավիրվեն

արտասահմանից, հաշվի առնելով բնդամին նախկին պատգամավորություններին փորձը:

Նշելով խոշոր թերություններ ինտերնացիոնալ դաստիարակության վերաբերյալ աշխատանքի ասպարիզում, համագումարը հանձնարում է Կենսկոմից բնության առեել՝ Կենսկոմից կամ ԿԽՄ-ի Գործկոմից կից հասուկ մարմին սեղծելու հարցը, մի մարմին, վորը պեսե է ղեկավարի ինտերնացիոնալ կապի յեվ մամուլի ու սեղական կազմակերպությունների ինտերնացիայի գործը յեվ ալլը: Համագումարը հանձնարարում է Կենսկոմից լրացուցիչ աշխատավորներ տալ՝ ԿԽՄ-ի Գործկոմի՝ Համլենկոմյերիտմիության պատգամավորության մեջ աշխատելու համար և միջոցներ ձեռք առնել՝ դաստիարակելու միություն մեջ ինտերնացիոնալ աշխատավորների հատուկ կադրեր, մասնավանդ բանվորներից, ըստ հնարավորություն աղատելով նըրանց բոլոր մյուս պարտականություններից: Այդ տեսակետից խոշոր դեր պետք է կատարեն ՄՌՊԻ-ի աշխատավորները, վորոնց միությունը պետք է ավելի մեծ ուշադրություն նվիրի և պաշտպանություն ցույց տա, քան մինչև այժմ է յեղել:

Անհրաժեշտ է բարելավել նաև հրատարակական գործունեությունը միջազգային յերիտաշարժման ինագավառում, այդ նպատակով հրատարակելով պուպուլյար և եփանագին գրականություն այդ խնդիրների շուրջը (նմանապես և առանձին աղբյուրությունների համար, մի բան, վոր մինչև այժմ միանգամայն բացակայել է) և ավելի լավ հիմքերի վրա գնելով «KIM» հանդիսի հրատարակության և տարածման գործը,

ինչպես նաև սիստեմատիկաբար լուսաբանելով **ԿԻՄ**-ի հետ կապված խնդիրները միության մամուլի որդանհերում:

Հաշվի առնելով մի շարք կազմակերպությունների առաջարկները, համագումարը վորոշում է ավելացնել Համակենդունքի միության անդամների խնտերնացիոնալ մոժանքը (ВЗНОС) մինչև տաս կոպեկ հենց այս տարվանից, ընդգծելով, վոր դրա գանձումը (14-րդ միջազգային յերիսասարգական որվա ընթացքում) պետք է կապված լինի գաղափարական բացառողական աշխատանքի հետ:

Համագումարն անհրաժեշտ է համարում, վոր ոսարագգի լեզուներ ուսումնասիրող կամավոր բնկերություն (կամ բնկերություններ) սեղծվի, ըստ վորում այդ ուսումնասիրությունը պետք է կապված լինի արտասանմանյան գրագրություն հետ:

Եսպերանտիստական կազմակերպությունները պետք է ոգտագործվեն ինտերնացիոնալ կապի աշխատանքի ասպարիզում: Համակենդունքի միության կոմիտեները պետք է զեկավարեն այդ կազմակերպությունների մեջ մանող կոմյերիտականերին: Համագումարը, սակայն, գտնում է, վոր կոմյերիտությունը պետք է խորհուրդ տա բանվոր յերիտասարգությանը՝ սովորել կենդանի լեզուներ, և վոր այդ ուղղությամբ պետք է գործ դրվեն թե կոմյերիտություն և թե պետություն գլխավոր ջանքերն ու միջոցները:

Համակենդունքի միությունը պեսե է ալեթվ մասնակցություն ունենա **ԿԻՄ**-ի համաշխարհային 5-րդ կոնգրեսի նախապատրաստման գործում, մասնավորապես՝ **ԿԻՄ**-ի ծրագրի քննարկման խնդրում:

Համագումարը հանձնարարում է կենտկոմին և **ԿԻՄ**-ի Համակենդունքի միության պատգամավորությունը անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել դրա համար:

14-րդ միջազգային յերիտասարգական որվա համար Համակենդունքի միությունը պետք է մորիլիդացիայի յենթարկի բանվորա գյուղացիական յերիտասարգության ամենալայն խավերին **ԿԻՄ**-ի մարտական լողունգների տակ, ոգտագործելով միջազգային յերիտասարգական որվա կամպանիան՝ ինտերնացիոնալ դաստիարակության գործը միության մեջ ուժեղացնելու և բարելավելու համար:

ՏԵՐԻՏԱՐԳՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՏԱՆՔԻ ՏԵՎ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ԺՈՂՈՎՐԻԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՅՄԱՆ ՀՆԳՆՄԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՐԱՆՑՈՒԹՅԱՆ

(Թանաձեվ բնկ. բնկ. Ռուսիանվիչի յեվ Շերադիլոյի գեկուցումների ռուրը)

I

Հակառակ կապիտալիստական հասարակության, վորի մեջ յերիտասարգական աշխատանքը հիմնված է բացառապես շահագործման սկզբունքների վրա և գործադրվում է ձեռնարկատերերի կողմից մեծագույն շահույթներ դուրս բերելու համար, յերիտասարգական աշխատանքը ԽՍՀՄ-ում «շահագործման առարկայից վերածվում է սոցիալիստական դաստիարակության հիմքի» (Համակենդունքի միության ծրագիր):

Անցնելով իշխանություն գլուխ և կազմակերպելով սոցիալիստական արտագրությունը, պրոլետարիատը կիրառում է աշխատանքի այնպիսի կազմակեր-

պուլիտեն, վորն աստիճանում է արտադրողական ուժերի արագ զարգացումը, իր նյութական ու կուլտուրական մակարդակի սխառեմատիկ բարձրացումը, ինչպես նաև բանվորական լայն մասսաներին զլխովին մասնակից է անում չերկրի տնտեսական վերելքի գործին՝ չենթարկելով բանվորների առանձին խմբերի շահերը ամբողջ դասակարգի շահերին: Սոցիալիստական շինարարության գերկա քաջանք պահանջում է աշխատավոր չերիսասարգությունից՝ լարել իր բոլոր ուժերը՝ ոգնելու կուսակցությանը չերկրի ինդուստրիացման գործում, բարձրացնելու աշխատանքի արտադրականությունը, եժանցնելու արդյունաբերական ապրանքների ինքնարժեքը, ինչպես նաև նախաձեռնել գիտելիք ու գիտելիքի ինքնաշարժման վերաբերմունք ունենալու գեղի իր աշխատանքը: Ֆարթկաներում չեմ գործարաններում:

Հետագա առաջընթաց շարժումը դեպի սոցիալիզմ հնարավոր է միայն այն դեպքում, չեթե մենք ունենք պրոլետարիատի նոր կուլտուրական, տեխնիկական զարգացում և դասակարգայնորեն-գիտակից կազմակերպությունը ըմբռնում են արտադրական պրոցեսներին վողջ ընթացքը և գիտակցում են իրենց դերը, վորպես սոցիալիստական արտադրություն կազմակերպողների դեր:

Ահա թե ինչու «հնարավոր է, վոր կոմունիստական չերիտասարգության միությունը դաստիարակի բոլորին վորք հասակից, 12 տարեկանից, և սովորեցնի նրանց գիտակից ու կարգապահ աշխատանքի: Ահա այսպիսով կարող ենք մենք հուսալ, վոր առաջադրված խնդիրները կատանան իրենց լուծումը» (Լե

նին, Ռուս. կոմյերիտմիության III համագումարում արտասանած ձևով):

Պրոլետարիատի նոր կազմակերպության դաստիարակությունը պահանջում է վերակազմել բանվոր չերիտասարգության աշխատանքն ու կրթությունը սոցիալիստական հիմունքներով. պետք է կազմակերպել այնպիսի դպրոցներ, վորտեղ վորոշ մասնագիտություն ուսումնասիրությունը պետք է կապված լինի արտադրողական աշխատանքի հետ՝ հենց արտադրության մեջ, վորտեղ արտադրական ուսուցումը (обучение) պետք է անընդհատ լինի կապված լինի պոլիտեխնիկական հասարակական-քաղաքական գիտելիքների ավանդման հետ, վորովհետև «...անկարելի չէ պատկերացնել ապագա հասարակության իդեալը, առանց կապելու ուսումը չերիտասարգ սերնդի արտադրողական աշխատանքի հետ: Վոչ ուսումն ու կրթությունն առանց արտադրողական աշխատանքի, վոչ արտադրողական աշխատանքն առանց ուսման ու կրթության չեն լինի կարող դրվել այն բարձրության վրա, վոր պահանջում է տեխնիկայի ժամանակակից մակարդակը և գիտական իմացություն հերկա վիճակը» (Լենին, հատոր I), էջ 301, հրատ. 1926 թ.):

Յերիտասարգական աշխատանքի վերակազմությունը սոցիալիստական հիմունքներով հնարավոր դարձավ միայն պրոլետարական պետության կողմից չերիտասարգության աշխատանքի վերաբերյալ սահմանված որոշողությունների հիմունքով (6 և 4-ժամյա բանվորական որ դեռահասների համար արտադրության մեջ, նրանց աշխատանքի չենթարկումը ուսուցման նպատակներին, վարձատրման այնպիսի քաղա-

քականություն, վորն ապահովում է այդ սկզբունքների կիրառումը կյանքում, դեռահասների աշխատանքի արգելումը գիշերային և ֆիզսակար աշխատանքներում, դեռահասների բրոնչայի սահմանում և այլն)։

Աշխատանքի սոցիալիստական կազմակերպման սկզբունքների կիրառման տասնամյա աշխատանքի հետևանքով պրոլետարական պետութիւնը, ՀամԼենկոմբիսմիոնքսն ինիցիատիվ ու ակտիվ մասնակցութեամբ, զգալի արդյունքների չեն հասել։

ա) չերիտասարդութեան նոր կազմերի ներգրավումը արտադրութեան մեջ, պահպանելով չերիտասարդութեան աշխատանքի վերաբերյալ հիմնական որոշողութիւնը,

բ) գործարանային աշակերտութեան դպրոցների ցանցի լայնացումը,

գ) բանվոր չերիտասարդութեան նշուլթական մաշարդակի սիստեմատիկ բարձրացումը (աշխատավարձ, կենցաղային պայմանների բարելավում),

դ) պրոլետարական չերիտասարդութեան մասնաանների կուլտուրական վերելքը։

Այդ բոլոր նվաճումների շնորհիվ բանվոր չերիտասարդութեան ակտիվ մասնակցութիւնն ունեցավ տնտեսական շինարարութեան մեջ, մի հանդամանք, վոր նպաստեց այդ չերիտասարդութեան դասակարգային ինքնագիտակցութեան ամրապնդմանը, քաղաքական ակտիվութեան աճմանը, չերիտասարդութեան առանձին խմբերի շահերն ամբողջ դասակարգի շահերին չենթարկելուն։

Չերիտասարդական աշխատանքի և կրթութեան վերակազմութեան գործի այդ անշեղ զարգացումը սո-

ցիալիստական հիմունքներով տեղի չեն ունեցել այն հակայական դժվարութիւնների ու հակասութիւնների հաղթահարման պայմաններում, վոր բոլորում են մեր յերկրի տեխնիկատնտեսական հետամնացութիւնից և կապիտալիստական ողակումից, մի ողակում, վորի պայմաններում ԽՍՀՄ-ի պրոլետարիատն իր ռոշերի և միջոցների գերագույն լարումով նոր, սոցիալիստական հասարակութիւն է կառուցում։

Այդ դժվարութիւններից խոշորագույնը աշխատավորների չերիտասարդ սերնդի շրջանում գոյութիւն ունեցող գործադրութիւնն է, վորն առաջ է գալիս այնպիսի սոցիալ-տնտեսական պատճառներից, վորպիսին է 1921 թ. սովը, Կարաբային գիւրնակչութիւնը գոյողում, և վորը բացատրվում է նմանապես այն անհրաժեշտ պայմանների բացակայութեամբ (առաջին հերթին՝ աշակերտութեան և ուսանողութեան նշուլթական ապահովութեան բացակայութեամբ), վորոնց շնորհիվ դպրոցը կարող էր ընդգրկել ամբողջ չերիտասարդութեանը։

Արդյունաբերութեան զարգացման բեկման մոմենտներում, չերը նշուլթական ռեսուրսների մաքսիմալ լարում է պահանջվում արդյունաբերութեան ընթացիկ խնդիրները լուծելու համար, բանվոր չերիտասարդութեան աշխատանքի և կրթութեան սոցիալիստական կազմակերպման սկզբունքների գործնական կիրառումը խոշոր դժվարութիւնների չեն հանդիպում։

Այդպես է յեղել նոր տնտեսական քաղաքականութեան անցնելու շրջանում, չերը արդյունաբերական ձեռնարկութիւնների վերակազմում տնտեսավարական հիմունքներով դեռահասների աշխատանքի

չքաղման սպառնալիք ստեղծեց, մի աշխատանք, վոր-
կազմակերպված եր սոցիալիստական որենսդրութեան
հիմունքով, ուստի և պրոլետարական պետութեան
այդ բանը կանխելու համար հատուկ զեկրետով զեռա-
հասները բրոնյա սահմանեց:

Ինչպե՞ս ընթացիկ շրջանում—վերակառուցման
և արդյունաբերութեան սոցիալիստական ռացիոնալաց-
ման շրջանում—այդ հակասութիւնը նմանապես մի
շարք դժվարութիւններ առաջ բերեց յերիտասարդա-
կան աշխատանքի կանոնավոր կազմակերպման ճա-
նապարհին, ինչպէս նաև Համընթակուհիների քաճ
աշխատանքի բնագավառում:

Կուսակցութեանը և կոմերիտմիութեանը միշտ
եւ հաղթահարել են մեր պայմաններում անխուսափե-
լիորեն առաջացող այդ հակասութիւնները վոչ թե
յերիտասարդութեան սոցիալիստական կրթութեան
սկզբունքներէջ հրաժարելու միջոցով, այլ այդ սկզբ-
բունքների գործնական կիրառումն արդյունաբերու-
թեան շահերի հետ ավելի սերտորեն կապելու միջո-
ցով, մի հանգամանք, վորը թեև դանդաղեցնում էր
այդ աշխատանքի թափը, բայց չէր կասեցնում հետա-
գա առաջընթացութեան այդ ուղղութեամբ: Այդ դժ-
վարութիւններով են բացատրվում այն միջանի ձեռ-
նարկումները, վոր հարկադրված կիրառեցին կուսա-
կցութեան ու Համընթակուհիների միութեանը (փաստա-
կար աշխատանքների ցուցակի վերաբնումը՝ այդ
ցուցակը կրճատելու ուղղութեամբ, բրոնյայի նորմերի
վերաբնումը և այլն):

Վերակառուցման և արդյունաբերութեան ռացիո-
նալացման սկզբնական շրջանի դժվարութիւնները

բարեհաջող հաղթահարումը կուսակցութեան և պրոլե-
տարական պետութեան կողմից՝ բանվոր յերիտասար-
դութեան աշխատանքի և կրթութեան սոցիալիստական
կազմակերպման գործի խսկական ծաղկման պայման-
ներ և ստեղծում:

II

Ժողովրդական տնտեսական զարգացումը յիվ յերիտա-
սարդական աշխատանքի վերակառուցումը

1. Կուսակցութեան կողմից յերկիրը ճիշտ ղեկա-
վարելու հետեանքով պրոլետարիատի դասակարգային
ուժի աճումը և բանվոր դասակարգի ու գյուղացիու-
թեան հիմնական զանգվածի շագկապի տմրապնդումը
նախադրյալներ ստեղծեցին պրոլետարիատի համար՝
հետագայում ավելի վճռական, ավելի սիստեմատիկ
հորձակում սկսելու քաղաքի ու գյուղի կապիտալիս-
տական տարրերի դեմ:

Մեր սոցիալիստական արդյունաբերութեանը,
վորպէս առաջատար սկզբունք ժողովրդական տնտե-
սութեան սիստեմում և վորպէս սոցիալիզմի հիմնա-
կան բաղա, պետք է վոչ միայն հասնի, այլև անցնի
կապիտալիստական յերկրների արդյունաբերութեան
զարգացումից, վորպէսզի գործնականապէս ցույց տալ
ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական սիս-
տեմի գերադանց առավելութիւնը կապիտալիստա-
կան յերկրների սիստեմի հանդեպ:

Ահա թե ինչու տնտեսական շինարարութեան
զլխավոր կենտրոնը վերակառուցումն ու արտադրու-
թեան ռացիոնալացումն են հանդիսանում, վորոնք ա-

պահովում են չերկրի ինդուստրիացման թափի արագացումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, ինքնարժեքի իջեցումը, պրոլետարիատի թվական աճումը և նրա նյութական-կուլտուրական մակարդակի բարձրացումը:

2. Վերակառուցումն ու արդյունաբերության ուղիղնալացումն ընթանում են հետևյալ գծով.

ա) ժողովրդական վողջ տնտեսության եներդե-տիկ բազայի կառուցման (չերկրի ելեկտրիֆիկացիան),

բ) մասսայական արտադրության և գործարանների սպեցիալիզացիայի, վորին անհրաժեշտորեն ընթացակցում են արտադրանքի ստանդարտիզացիան, սարքավորման սպեցիալիզացիան, աշխատանքի լայն բաժանումը և անընդհատ աշխատանքի անցնելը,

գ) ներգործարանային տրանսպորտի մեքենայացման, արտադրության պրոցեսի արագացման և գործարանային արտադրանքի եժանացման և

դ) աշխատանքի գիտական կազմակերպման, բանվորական որվա խտացման (уплотнение), աշխատանքի տեմպի արագացման և նրա վորակի բարելավման գծով:

Սյգ բոլորի հետեվաճեով էլական փոփոխու-թյուններ են առաջանում բանվորական ուժի կազմի մեջ: Հետզհետե գերակշիռ ճաճակուրուն կսա-ճան մասսայական կվալիֆիկացիաներ ունեցող բանվորները, վորոճ Գեդ-մասճագրական աշխատանք են կատարում (հասոցի (սսանոկի) լեվ կոճվեյրների մոտ աշխատող բանվորները լեվ ալճ), իճպես Գայեվ գերվորակյալ բանվորները, վորոճ իրագրման (установка), սարման (настройка), ուղղման (заправка)

լեվ հասոցների (станок) ու մեքենաների վերանորոգության հետ կապված աշխատանքներ են կատարում: Հետց գրանով էլ կհասկանեվի առաջիկա հրեգամյակը:

Տերինիկայի և աշխատանքի մեթոդների արագ փոփոխումը, արտադրության տեմպի արագացումն ստիպում են հենց այս հնգամյակում ժողովրդական տնտեսության զարգացման կարևորագույն խնդիրներից մեկը դարձնել սոցիալիստական աշխատավորների նոր կադրեր դաստիարակելը:

Հակառակ կապիտալիստական ուղիղնալիզացիային, վորը բանվորի նկատմամբ բացառապես հետապնդում է նրա աշխատանքն ինտենսիֆիկացիայի յենթարկելու և նրան մեքենայի սոսկ կցորդը դարձնելու նպատակը, սոցիալիստական ուղիղնալացումը պահանջում է զասիարակել Գոր բանվոր, տեխնիկայես գրագետ, աշխատանքի ժամանակակից կուլտուրային լեվ աշխատանքի իճեճեսիվ տեմպին տիրապետող, ճնդունակ՝ հարմարվելու տեխնիկայի ամեն տեսակի փոփոխություններին, իր կատարած աշխատանքից լավագույն արդյունքներ ստանալու ճախանեունություն ու ձեռներեցություն հայճաբերող, լեվ սոցիալիստական արդյունաբերության սեղծագործող ու կազմակերպող հանգիսացող:

Սակայն ուղիղնալացման գործի առաջադրած պահանջների կատարումը հանդիպում է բազմաթիվ դժվարությունների, վորոնցից զխավորները հանդիսանում են բանվորների ցածր կուլտուրական մակարդակը, նրանց վերին աստիճանի անբավարար տեխնիկական գրագիտությունը, աշխատանքի դան-

դադ տեմպը, բանվորների առանձին խմբերի անշարժությունն (КОЧОСТЬ) ու պահպանողականությունը, բանվորներ, վորոնք դեռ վերջնականապես չեն ազատագրվել կապիտալիստական ֆարքիկայի տրագիկաներից և ընդգրկմանում են աշխատանքի նոր, ավելի կատարյալ, ավելի ինտենսիվ մեթոդներին:

Յերրորդ՝ ակտիւ մասնակցութեան ցուցաբերելով կողքիկտիւ տնտեսութեանների տնտեսական կանքում, կոլտնտեսութեան կոմիտեի տակաւն մասնակիցները պետք է լինեն կոլտնտեսութեանների կուլտու-

րական կենցաղի ճիշտ կազմակերպման առաջապահներ, նպատակելով մսուրներ, ճաշարաններ կազմակերպելու, ընակարաններ բարելավելու գործին և այլն:

Դ. Համագումարը նշում է կոմիտեի տնտեսութեան վերին աստիճանի թույլ աշխատանքը խորհրդային տնտեսութեաններում, վորոնք հողոգտագործութեան կողքիկտիւ լիզանակներին և կուլտուրական ձեռնարկումների տարածողներն են գլուղացիութեան մեջ, և առաջարկում է ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ Համլենկոմիտեի տնտեսութեան բջիջների ցանց ծավալելու խորհրդային տնտեսութեաններին կից և աշխուժացնելու այդ բջիջների գործունեութեանը:

Կոմիտեի տնտեսութեանը պետք է լուրջ ոգնութեան ցույց տա կուտակցութեանը խորհրդային տնտեսութեանների տնտեսական ամբապնդման գործում, միջոցներ ձեռք առնելով բարձրացնելու աշխատանքի արտադրողականութեանը, լերիտասարդութեանը ակտիւ կերպով մասնակից դարձնելու արտադրական խորհրդակցութեաններին և ավելի մեծ շահագրգռութեան առաջ բերելու ամբողջ բանվորական մասսայի մեջ դեպի խորհրդային տնտեսութեանների գործունեութեան արդշունքները:

Նշելով գլուղուսդարոցների աննշան թիւը (ընդամենը 10 դարոց 4 հազար խորհրտնտեսութեան հանդեպ), համագումարն առաջարկում է ամենակարճ ժամանակամիջոցում պլանային ուսուցում (գլուղուսդարոցներ, ըրիգադներ) կազմակերպել խորհրտնտեսութեաններում աշխատող դեռահասների համար, միջոցներ ձեռք առնելով առաջիկայում գլուղուսդարոցներ բացելու խորհրտնտեսութեաններին կից: Անհրաժեշտ և

ճորանց ցանցը փարգացել է աչն հաշվով, վոր չուրաքանչուր նահանգական գյուղտրեստին առնվազը մեկ դպրոց ընկնի: Միութեան կազմակերպությունները պետք է աջակցեն պակասեցնելու խորհրտատեսությունների բանվորների հոսունությունը (текучесть) և ստեղծելու բանվորների մշտական կադրեր, այդ նպատակով ոգտագործելով բատրակներին ու չքավորութեանը (մասնավորապես ուսումնասիրել և մշակել բրոնյայի խնդիրը), ինչպես նաև միջոցներ ձեռք առնեն ապահովելու խորհրտատեսությունների բանվոր յերիտասարդութեան աշխատանքի պաշտպանությունը և նրա կուլտուրական կարիքների սպասարկումը: Համլենկոմերիտմիութեան կազմակերպությունները պետք է սխտեմատիկ աշխատանք կատարեն՝ սպասարկելու խորհրտատեսություններում աշխատող սեղոնային յերիտասարդութեանը:

8. Կոմյերիտական կազմակերպությունները պետք է ուժեղացնեն իրենց պրակտիկ գործունեությունը ամբողջ չքավորութեան և միջակների մեծամասնությունը արտադրական-վաճառահոսնական և սպառողական կոոպերացիայի մեջ ներգրավելու ուղղությամբ:

Մասնավորապես համագումարը պարտավորեցնում է կոմյերիտական կազմակերպություններին ավելի յեռանդուն կերպով ներգրավել կոոպերացիայի բոլոր ճյուղերի մեջ բատրակային և միջակային յերիտասարդութեանը: Այդ նպատակով համագումարը հանձնարարում է կենտրոնական կոմիտեին՝ հարուցելու կառավարութեան առաջ հետևյալ խնդիրը. փոխատերերի իրավունքներ տալ կոոպերատիվ տնտեսություն ընդհանուր անդամներին, ընդ սմին

սահմանափակումներ վերապահելով գյուղի կուլակային խավերի համար:

Դրա հետ միասին անհրաժեշտ է պայքար մղել կոոպերացիայի ղեկավար մարմիններն ամրապնդելու համար, գյուղացիութեան չքավորա-բատրակային և միջակային խավերին այդ մարմիններում առաջ քաշելու համար, թույլ չտալով, վոր կուլակային տարրեր սողոսկեն այդ մարմինների մեջ և ոգտագործեն կոոպերացիան իրենց նպատակներին համար:

9. Կոմյերիտական կազմակերպությունները պետք է ոգնեն կուսակցությունը, իրականացնելու իր գիծը հողաշինարարութեան բնագավառում և հակահարված տալու կուլակությունը, վորը փորձեր է անում վիժեցնելու հողաշինարարությունը և ոգտագործելու այն իր տնտեսությունն ախրացնելու համար: Այնուհետև անհրաժեշտ է հետևել, վոր ճշտությամբ կիրառվեն կալիկտիվ տնտեսությունների առաջնահերթ հողաշինարարութեան և սակավագոր ու չքավորական տնտեսությունների արտոնյալ և ձրի հողաշինարարութեան վերաբերյալ որենքները: Անհրաժեշտ է, վոր միութեան բջիջներն ու կոմիտեները միջոցներ ձեռք առնեն կազմակերպելու իրենց մասնակցությունը հողաշինարարութեան նախագծերի քննարկման ու մշակման գործում: Այդ ամբողջ աշխատանքով պետք է նպաստել այն բանին, վոր գյուղացիութեան հիմնական զանգվածն անցնի հողոգտագործութեան այնպիսի ձևերի, վորոնք ավելի չեն համապատասխանում կալիկտիվացման նպատակներին (գյուղացիների տեղափոխումը նոր տեղեր, նոր գյուղեր հիմնելը, ամբողջ գյուղերի հողոգտագործության կալիկտիվ ձև և այլն):

10. Նկատի առնելով գյուղատնտեսութեան կուլ-
լեկտիվացման խնդիրները, անհրաժեշտ է վերակազ-
մել այն կոմյերիտականների մեջ կատարվող աշխա-
տանքը, վորոնք զբաղված են գյուղատնտեսական
աշխատանքով, ընդ մին ձգտելով նրանց դարձնել
տնտեսավարութեան կուլեկտիվ ձևերի նախաձեռնող-
ներ ու կազմակերպողներ: Առանձնապես կարևոր է
այն աշխատանքը, վորը կատարվելու է կոմյերիտա-
կան-տնտեսների շրջանում: Այդ նպատակով անհրա-
ժեշտ է ընդլայնել կոմյերիտական-տնտեսների պար-
բերական խորհրդակցութեաններ գումարելու պրակ-
տիկան, քննութեան առնելով այդ խորհրդակցութեան-
ներում գյուղատնտեսութեան կուլեկտիվացման գործնա-
կան խնդիրները: Կոմյերիտական-տնտեսների խոր-
հրդակցութեաններ գումարելուց զատ, անհրաժեշտ է
ամեն կերպ խրախուսել ու նպաստել, վոր կոմյերիտ-
միութեանը—ինչպես այդ յեղել է դեռ VII համա-
գումարից սկսած,—մասնակցութեան ունենա գյուղա-
տնտեսութեան բարձրացման ու կոոպերացման գործում
նաև այլ ձևով, այն է՝ ագրոհանձնարարութեաններ
կատարելու, գյուղատնտեսական արտադրական խոր-
հրդակցութեաններ հրավիրելու, կոոպերատիվ է հողա-
յին մարմիններում, ինչպես նաև կուլեկտիվ տնտե-
սութեաններում աշխատող կոմյերիտականների խոր-
հրդակցութեաններ գումարելու միջոցով:

Գյուղատնտեսութեան հետ կապված աշխատանքի
ասպարիդում կոմյերիտմիութեանը պետք է բարելավի
և ամրապնդի իր կապը հողմարմինների հետ թե
կենտրոնում և թե տեղերում:

Համագումարը հանձնարարում է Կենտկոմին

ուսումնասիրել և մշակել՝ կոմյերիտականներից կուլեկ-
տիվ տնտեսութեան կազմակերպողներ պատրաստող
դասընթացներ հիմնելու խնդիրը:

III. Հասարակական-բաղաժան, կուլտուր. լուսա- վորական յեվ կրթական աշխատանք

11. Համլենկոմյերիտմիութեան գյուղական կազ-
մակերպութեանների դասակարգային ձևավորման խըն-
դիրը է միութեան դերը գյուղատնտեսութեան կուլեկ-
տիվացման մեջ կարող են իրագործվել միայն այն
ղեկքում, յերբ կոմյերիտմիութեան ամբողջ մասնաշա-
կան հասարակական-քաղաքական, կուլտուր. լուսավո-
րական և կրթական աշխատանքը հետևողականորեն
ու սխտեմատիկաբար կգրսեորի դասակարգային պաշ-
քարի բովանդակութեան ու ընթացքը գյուղում,
զաղափարականապես սպառազինելով համլենկոմյերիտ-
միութեան անդամներին՝ պրոլետարիատին խորթ ու
թշնամի գրուպաներին ու խավերին հակահարված
տալու համար:

Այդ դասակարգային պաշքարը գյուղում տեղի
յե ունենում հասարակական, տնտեսական ու կուլ-
տուրական կշանքի բոլոր շրջաններում: Յուրաքան-
չյուր կոմյերիտական բջիջի անելիքն է, վոր ակտիվ
մասնակցութեան ցույց տալով գյուղի կշանքի այդ
բոլոր բնագավառներում և պրոլետարական-դասակար-
գային գիծ կիրառելով իր առօրյա աշխատանքի մեջ,
պետք է կարողանալ կուսակցութեան ղեկավարութեամբ
կազմակերպել միջակ գյուղացիութեան, չքավորութեան
ու բաղաժանութեան մասնաներին՝ հակահարված տա-
լու կուլտուր. լուսանք:

Հացամթերման վերջին կամպանիան և ինքնահարկման կիրառումը գյուղում ցույց տվին, վոր մի շարք տեղերում կոմյերիտական բջիջներն այդ տեսակետից չգտնվեցին իրենց կոչման բարձրություն վրա, անկարողություն հայտարարելով գյուղացիության աշխատավոր զանգվածներին կուսակցության և խորհրդային իշխանության հերթակոն խնդիրների շուրջը կազմակերպելու գործում: Մի շարք տեղական կոմյերիտական բջիջներ կամ քարշ են չեկել գյուղացիության յետամնաց խավերի յետևից կամ ուղղակի ընկել են սլոբոտարիատին խորթ և անհարազատ կուլակային ազդեցության տակ, դուրս դալով յերեմի կուսակցության ու կառավարության դիրքի տիրելու դեմ (հացամթերման կամպանիայի, ինքնահարկման և այլ առիթներով):

Նման յերևույթների դեմ հաջող պայքար կարող և մղվել միայն այն դեպքում, յիթե դաստիարակչական աշխատանք ծավալվի գյուղական կոմյերիտականների մեջ և կազմակերպվի նրանց սկսիվ մասնակցության գործը գյուղի հասարակական կյանքում: Գյուղական կոմյերիտականները գյուղական կյանքի կոնկրետ փաստերի հիման վրա պետք և կարողանան ըմբռնել դասակարգային պայքարի բովանդակությունն ու մեթոդները, գործնական աշխատանքում փորձառություն ու տոկոսություն ձեռք բերելով այդ պայքարին մասնակցելու համար:

12. Կոմյերիտություն հասարակական պարտականություններից կարևորագույնը գյուղում հանդիսանում և այն լայն ոգնությունը, վոր պետք և ցույց տրվի կուսակցությանը գյուղխորհուրդների, կոոպե-

րատիվ կազմակերպությունների և փոխոգկոմիների հետագա աշխուժացման գործում:

Կոմյերիտական բջիջները պետք և սովորեն համախմբել այդ կազմակերպությունների շուրջը գյուղացիության աշխատավոր մասսաներին, ամեն կերպ աջակցելով, վոր առաջին հերթին չքավորությունն ու բատրակությունն առաջ քաշվին խորհուրդներում, կոոպերատիվ մարմիններում և փոխոգկոմիներում: Պակաս կարևորություն չի ներկայացնում նաև այն խնդիրը, վոր կոմյերիտական բջիջներն ակտիվ մասնակցություն ունենան գյուղական ժողովներում ու հողային ընկերություններում, նպատակ ունենալով ապահովելու այդ մարմիններում գյուղի բատրակային ու չքավորական տարրերի ազդեցությունը:

Առանձին նշանակություն ունի այն աշխատանքը, վոր պետք և կատարվի խորհուրդների, փոխոգկոմիների և կոոպերացիայի մարմինների մեջ ընտրված բատրակների ու չքավորների շրջանում, ինչպես նաև այն ակտիվ ոգնությունը, վոր պետք և ցույց տրվի կուսակցությանը՝ չքավորական գրուպաների աշխատանքը բարելավելու ասպարիզում: Անհրաժեշտ և աշխատանք ծավալել յերիտասարդության անկուսակցական ակտիվի շրջանում, համախմբելով նրան կուսակցական բջիջների շուրջը և ներգրավելով նրա լավագույն մասին կոմյերիտական կազմակերպությունների մեջ:

Այդ բոլոր կազմակերպությունների աշխատանքի մեջ Համլենկոմյերիտության բջիջները պետք և ոգնեն կուսակցությանը՝ ապահովելու գյուղի չքավորական խավերի շահերի առողջա պաշտպանությունը:

Կոոպերացիան և չքավորութեան վարկավորման ֆոնդի բաշխումը, գյուղմիասնակից ազատվող կամ հարկի ղեղչ ստացող տնտեսութեաններէ գյուղական ցուցակներ կազմելու գործին հսկելը, կուլակներէ կողմից չքավորներին շահագործելու ու կեղեքելու յերևութեաների դեմ պայքարելը, — այդ բոլոր կարևորագույն խնդիրները պետք է կազմեն Համլենկոմչերիտմիութեան բջիջներէ պրակտիկ աշխատանքի կենտրոնը:

Համագումարն առանձին ուշադրութեան է դարձնում այն խնդրի վրա, վոր հետագայում ավելի բարելավի Համլենկոմչերիտմիութեան աշխատանքը խորհուրդներում (աշխատանք՝ սեկցիաներում, հանձնաժողովներում և այլն), և նախապատրաստական ավելի լուրջ աշխատանքներ կատարվեն թե Կենտկոմի և թե տեղական կազմակերպութեաններէ կողմից վերընտրական կամպանիայի համար:

13. Ասենաեչական ձեռնարկումներէ մեկը, վոր իրական ոգնութեան և ապահովելու գյուղի չունեոր խավերի համար, այդ խորհրդային որինականութեան ճշգրիտ պահպանումն ու կիրառումն է գյուղում: Ուստի և հանուն խորհրդային որինականութեան մղվող պայքարը պետք է կարևորագույն տեղերից մեկը գրավի Համլենկոմչերիտմիութեան գյուղական բջիջի աշխատանքներում: Դրա համար անհրաժեշտ է, վոր աշխատավոր գյուղացիութեանը լայն կերպով ծանոթանա խորհրդային իշխանութեան կարևորագույն որոշումներին, վոր գյուղում կազմակերպվի տեղեկանքներ տալու գործը, վոր հասարակական հսկողութեան կազմակերպվի՝ դատարաններէ, հողային ու հարկային հանձնաժողովներէ դործունեութեան վերաբերմամբ:

Բացի դրանից անհրաժեշտ է պայքարել այդ մարմիններում նկատվող քաջքուկի, բյուրոկրատիզմի և այն ավելորդ ձևական վերաբերմունքի դեմ, վոր ցույց են տալիս դատարաններն աշխատավոր գյուղացիութեան վերաբերմամբ, ինչպես նաև աջակցել դատական մարմիններին՝ կանոնավորելու իրենց աշխատանքը: Անհրաժեշտ է գյուղական կոմչերիտականներին ավելի լայն կերպով մասնակից անել ԲԴՏ բողոքների բյուրոյի դործունեութեանը ԲԴՏ աջակցող կամավոր գրուպաներ ստեղծելու միջոցով և այլն:

14. Համագումարը պետք է միջոցներ ձեռք առնի իր գյուղում կատարելիք քաղաքա-լուսավորական աշխատանքի բոլոր ձևերը հարմարեցնելու առաջին հերթին չքավոր-բատրակային յերիտասարդութեան կարիքների բավարարմանը վոչ թե խոսքով, այլ գործով, կապելով այդ աշխատանքը գյուղի ղեռնաս սերնդից գյուղի սոցիալիստական վերակառուցման կազմակերպողներ դաստիարակելու խնդիրների հետ:

Համագումարը միանգամայն անհրաժեշտ է համարում բարելավել խրճիթ-ընթերցարանների, թեյարանների, գյուղացու տների և գյուղական պատի լրագրերի աշխատանքը, աջակցելով վոր հիշյալ հաստատութեաններն ընդգրկեն թե յերիտասարդութեանը և թե հասակավոր գյուղացիութեանը: Խրճիթ-ընթերցարանը պետք է կարևորագույն միջոց դառնա՝ բարձրացնելու գյուղի կուլտուրական մակարդակը, վերակառուցելու նրա կենցաղը, արմատախիլ անելու նին տրագիցիաները և ամրապնդելու պրոլետարական ազդեցութեանը գյուղացիութեան լայն մասսաների վրա: Այդ տեսա-

կետից համագումարն անհրաժեշտ է համարում, վոր ուժեղացվի միության մասնակցութունը՝ խրճիթվարների կողք պատրաստելու գործում, ինչպես նաև վորակապես բարելավվի նրանց կազմը:

Կոմյերիտմիությունը պետք է ամեն կերպ պաշտպանութուն ցույց տա գյուղի առաջադեմ խորհրդային տարրերին, մանավանդ գյուղթղթակիցներին, ապահովելով նրանց համար նորմալ պայմաններ գյուղում հասարակական գործունեությունում զբաղվելու և պաշտպանելով նրանց կուլակության հալածանքներից:

15. Համագումարը նշում է, վոր Կոմյերիտմիության հակակրոնական պրոպագանդը վերջին տարիներում չափազանց թուլացել է, և անհրաժեշտ է համարում միջոցներ ձեռք առնել՝ վճռական բեկում առաջ բերելու այդ բնագավառում: Կրոնական և աղանդավորական կազմակերպությունների գործունեությունը կոմյերիտմիությունը պետք է հակադրի գյուղացիական մասսաների ներգրավումը հասարակական-քաղաքական կյանքի մեջ, չեղիտասարդության ազատ ժամերի խելացի ոգտագործումը, հարբեցողության դեմ մղվող պայքարը, ռադիոյի և էլինոյի լայն զարգացումը գյուղում, ինքնակրթական աշխատանքի ծավալումը գյուղացիական չեղիտասարդության մեջ և այլն: Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, վոր կուլտուրկրթական աշխատանքի բովանդակ ընթացքում գունագեղութուն ու պարզութուն լինի, և վերացվեն ցամաքութունը, շարլոնն ու կազոնչինան, վորոնք հաճախ աշակերտությունը վանում են այդ աշխատանքից: Կոմյերիտական կազմակերպությունները կոնգրես փաստերի և որինակաների հիման վրա պետք է մեր-

կացնեն հոգևորականությանը, վորպես կուլակության շահերի պաշտպանի, բարելավեն «Անաստված» ընկերությունների խմբակների աշխատանքը և այդպիսով հակակրոնական աշխատակալ պատրաստեն և ագիտացրոնբացատրողական աշխատանք կատարեն գյուղացիության մեջ, վորպեսզի նա հրաժարվի կրոնական նպատակների համար կատարվող հանդանակութուններից: Աղգային գյուղում դրա հետ միասին անհրաժեշտ է խանգարել կրոնական դպրոցների ստեղծմանը, հակադրելով նրանց խորհրդային դպրոցների ստեղծումն ու ամրապնդումը և խստիվ հետևելով, վոր կատարվեն այդ բնագավառը կարգավորող խորհրդային որոշումները:

16. Համագումարը միանգամայն անթույլատրելի չէ համարում, վոր թույլ ուշադրութուն դարձվի գյուղացիական չեղիտասարդության կրթության խնդիրների վրա, մի բան, վոր նկատելի չէ մի շարք կազմակերպություններում: Ընդհանուր տարրական ուսում մտցնելու աշխատանքը պետք է կենտրոնական տեղ զբաղի կոմյերիտմիության գյուղական կազմակերպությունների գործունեությունում: Առանձնակարգ խնդիր է հանդիսանում այն, վոր իրագործվի կրթության մատչելիութունը բատրակների ու չքավորների չեղիտաների համար, այդ չեղիտաների ոգությունը դպրոցական ֆոնդեր ստեղծելու և կանոնավոր կերպով բաշխելու, նրանց համար ուսումնական ձեռնարկներ, վոտնաման և այլն ձեռք բերելու միջոցով: Դրա հետ միասին անհրաժեշտ է աշխատանք ծավալել՝ պատրաստելու բատրակային չքավորական և միջակային չեղիտասարդությանը բարձրագույն դպ-

լույսներն ու տեխնիկոմներն ընդունվելու համար: Առանձին պետք է դնել գյուղատնտեսական, և մասնավորապես բժշկական ու մանկավարժական բարձրագույն դպրոցների սոցիալական կազմի վճռական բարելավման խնդիրը, կազմակերպելով բանվոր, բառարակ ու չքավոր յերիտասարդության պատրաստումը այդ դպրոցներն ընդունվելու համար և այն հաշվով, վոր ավարտողները վերադառնան գյուղ աշխատելու: Մասնավորապես, համագումարն ընդգծում է այդ բարձրագույն դպրոցների դերը արդյունաբերական բանվորներից գյուղի տնտեսական ու կուլտուրական վերակառուցման կազմակերպողներ պատրաստելու գործում: Միության քննչներն ու կոմիտեները պետք է խստիվ հետևեն բարձրագույն դպրոցներն ուղարկվողների սոցիալական կազմին՝ նրա համար, վոր միության միջոցով անհարազատ աարբեր չուղարկեն բարձրագույն դպրոցները:

Միաժամանակ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի պետական և տեղական բյուջեից միջոցներ տրամադրվեն՝ չքավորության ու բատրակության պատրաստման դասընթացների համար՝ չքավոր ու բատրակ յերիտասարդներին բարձրագույն դպրոցներն ուղարկելու նպատակով:

17. Այդի պայմաններում մեծապես աճում է գյուղացիական յերիտասարդության դպրոցների դերը գյուղատնտեսության կոլեկտիվացման գործում, դպրոցներ, վորոնք քաղաքակրթված հողագործ-կոոպերատորների նոր կադրեր մատակարարող հաստատություն են հանդիսանում: Այդ հողագործ-կոոպերատորները կոչված են լինելու՝ մանր գյուղացիական

տնտեսությունները խոշոր կոլեկտիվ տնտեսությունների վերածելու գործի կազմակերպողներ:

Գյուղյերիտ-դպրոցների առաջ դրված այդ խնդիրներին իրական լուծման համար անհրաժեշտ է՝

ա) 1928—29 ուսումնական տարում վերաքննել գյուղյերիտ-դպրոցների ծրագրերը, նրա հիմնական լծակը դարձնելով գյուղատնտեսության կոլեկտիվացման խնդիրները:

բ) վերակառուցել գյուղյերիտ-դպրոցները և գյուղատնտեսական խմբակների ամբողջ պրակտիկ աշխատանքն այն ուղղությամբ, վոր մանր գյուղացիական տնտեսություններն աստիճանաբար վերածվեն խոշոր կոլեկտիվ տնտեսությունների, այդ նպատակին չենթարկելով գյուղյերիտ-դպրոցների և գյուղատնտեսական խմբակների ագրիկուլտուր աշխատանքը:

գ) ավելի լայն կերպով ծավալել գյուղյերիտդպրոցի աշխատանքը կոլեկտիվ տնտեսություններում (կոլտնտեսությունների փորձի ուսումնասիրությունը, նրանց նվաճումների պրոպագանդը, ագրիկուլտուր ոգնություն կոլեկտիվներին և այլն):

դ) ամեն կերպ բարձրացնել և ամրացնել գյուղյերիտդպրոցների չքավորական-բատրակային կորիզը՝ ստիպենդիալ ֆոնդն ավելացնելու և գյուղյերիտդպրոցներին և յոթնամյակներին կից հանրակացարաններ (ինտերնատներ) կազմակերպելու միջոցով:

ե) հողային և կոոպերատիվ մարմինների ոգնություն կազմակերպել գյուղյերիտդպրոցներն ավարտողների ճիշտ ու նպատակահարմար ոգտագործումը և նրանց ներգրավումը գյուղատնտեսության կոլեկտիվացման աշխատանքներում:

դ) ամեն կերպ ընդարձակել գյուղերի տղաքոցների ցանցը, մասնավորապես այն շրջաններում, վորտեղ խորհ-տնտեսություններն ու կոլտնտեսությունները փոքր թիվ են կազմում: Այդ նպատակով անհրաժեշտ է սահմանափակել վորոշ ժամկետով գյուղական յոթնամյակները վերածումը գյուղերի տղաքոցների:

է) ձեռնամուխ լինել յերեկոյան գյուղերի տղաքոցների կազմակերպմանը:

ը) կազմակերպել ուսուցիչների վերապատրաստումը՝ նրանց ագրոպատրաստականությունը բարձրացնելու ուղղությամբ:

թ) հանձնարարել Կենտկոմին ուսումնասիրել և մշակել գյուղերի տղաքոցների շարունակությունը կազմող յերկամյա դասընթացներ ստեղծելու խնդիրը:

18. Յեկնելով այն բանից, վոր գյուղի վերակառուցման խնդիրը և կոլտնտեսական հեղափոխությունն անիրագործելի չե առանց տարրական գրագիտությունը բարձրացնելու, և նշելով, վոր անգրագիտության վերականգնման գործը մի շարք տեղերում մեծ խոչընդոտների յե հանդիպել, համագումարն առաջարկում և գյուղական կազմակերպությունների գործունեությունը կենտրոնական խնդիրներից մեկը դարձնել անգրագիտության և կիսադրագիտության վերացման աշխատանքը չքավորական-բատրակային յերիտասարդության մեջ: Կատեգորիկ կերպով ղեմ արտահայտվելով անգրագիտության վերացման համար տրամադրվող բոլոր ջանքերի գումարների կրճատման, համագումարը պարտավորեցնում է տեղական կազմակերպություններին՝ վճռական կերպով պահանջել խորհրդային, կոոպերատիվ և հասարակական կազմակերպու-

թյուններից, վոր անվերապահորեն ավելացվեն գյուղում կոլտնտեսական աշխատանք կատարելու համար անհրաժեշտ միջոցներն ու ուժերը:

19. Հավանություն տալով Կենտկոմի վորոշմանը գյուղացիական յերիտասարդության մասսայական թերթ հիմնելու վերաբերյալ, համագումարն անհրաժեշտ է համարում, վոր այդ ձեռնարկումն իրագործվի ամենակարճ ժամանակամիջոցում:

Համագումարը նմանապես նպատակահարմար է դտնում, վոր «Գյուղացիական յերիտասարդության հանդես» թերթը հարմարվի գյուղի ստոքին ակտիվի սպասարկման գործին, և առաջարկում է տեղական կազմակերպություններին զարկ տալ այդ թերթի տարածմանը: Համագումարը հանձնարարում է Կենտկոմին ձեռնարկել կոլեկտիվիզացիայի և մասնավորապես գյուղերի տնտեսության արտադրանք (заочный) տղաքոցների վերաբերյալ խնդիրների շուրջը մասսայական գրականություն հրատարակելու գործին:

IV. Ֆեխասանք բաժնակալին յեվ ճնայնագործական վարձու յեթիսասարգության մեջ

20. Համագումարը նշում է, վոր չնայած բատրակություն մեջ կատարվող աշխատանքի մասնակի հանդուրժումներին, ՀամԼԿՅԵՄ կազմակերպությունների մեծամասնությունը ղեռ այդ աշխատանքը չի դրել անհրաժեշտ բարձրության վրա, մի բան, վոր միանգամայն հակասում է այն քաղաքական դերին, վոր պետք է կատարի բատրակությունը գյուղում:

Համագումարը բոլոր կազմակերպություններին առաջադրում է յերիտասարդ բատրակության մեջ կա-

տարվող աշխատանքն ամեն կերպ բարելավելու խնդիրը: Այդ կարելի չէ իրագործել միայն այն դեպքում, յեթե սերտ կապ հաստատվի ՀամԼԿՅԵՄ կազմակերպությունների և գյուղատնտեսական բանվորների միության միջև, և յեթե կոմյերիտական բժյժները մշտական ոգնություն ցույց տան այդ միությանը՝ գյուղաբանկոմների աշխատանքը բարելավելու գործում: Այդ նպատակով անհրաժեշտ է ավելի մեծ չափով առաջ քաշել բատրակ-կոմյերիտականներին գյուղաբանկոմներում և գյուղլիազորների պաշտոններում, ինչպես և անհրաժեշտ է, վոր կոմյերիտական-բատրակները պարտադիր կերպով մտնեն գյուղաբանկոմների միության մեջ, և բատրակային յերիտասարդությունը սիստեմատիկ կերպով ներգրավվի արհմիության շարքերը:

21. Բատրակային յերիտասարդության դրության իրական բարելավումը կարող է իրագործվել միայն այն դեպքում, յեթե ճշտվի ու բարելավվի բատրակների աշխատանքի վերաբերյալ խորհրդային որենսդրությունը, և աչալուրջ հսկողություն լինի խորհրդային հասարակայնության բոլոր մարմինների և ամենից առաջ ՀամԼԿՅԵՄ կողմից, այդ որենսդրների կիրառման վերաբերմամբ: Յենեղով դրանից, համագումարն առաջարկում է՝

ա) Որենսդրաբար սահմանափակել գեռահաս բատրակների բանվորական որը, սահմանելով նրանց համար բանվորական ժամերի վորոշ մաքսիմում:

բ) Լրացնել ժամանակավոր կանոնները՝ և Աշխատանքի Որենսգիրքը մի շարք որենսդրություններով, վորոնք կկարգավորեն գյուղատնտեսության մեջ

աշխատող փոքրահասակների վարձման և աշխատանքի պայմանները: Համագումարը գտնում է, վոր փոքրահասակ բատրակների սպասարկումը պետք է կազմի գյուղատնտեսական բանվորների միության աշխատանքի անբաժանելի մասը:

գ) Սահմանել գյուղատնտեսական բանվորների աշխատավարձի դրամական մինիմում:

դ) Որենսդրել աշխատանքային պայմանագրերի պարտադիր կնքումը՝ բատրակների և վարձողների միջև:

ե) Իրական հսկողություն սահմանել աշխպայմանագրերի կատարման նկատմամբ, պայքար մղելով տերերի կողմից դեպի բատրակներն անթույլատրելի վերաբերմունք ունենալու բոլոր դեպքերի դեմ, դեռահասներին, փոքրահասակներին և աղջիկ-բատրակուհիներին նրանց ուժերից վեր աշխատանքով ծանրաբեռնելու, ինչպես նաև դեռահասների աշխատանքի պաշտպանության վերաբերալ որենսդրների այլ խախտումների դեմ:

զ) Ակտիվ մասնակցություն ունենալ գյուղատնտեսական բանվորների սոցիալական ապահովագրության վերաբերյալ դեկրետի կիրառման գործում:

է) Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի պայմանագրեր կնքելիս բատրակի համար լիակատար հնարավորություն ստեղծվի մասնակցելու կուլտուրական և հասարակական-քաղաքական կյանքում (ժողովներին մասնակցելը, վարձողի հաշվին լրագրեր ստանալը և այլն):

22. Գոյություն ունեցող ագրարային գերնակչությունը չքավորական և բատրակային գյուղացիա-

կան յերիտասարդության վորոշ խավերում քաղաք չվերլու ձգտում ե առաջ բերում: Քաղաք չվող այդ յերիտասարդությունը, աշխատանք չգտնելով այնտեղ, լրացնում ե քաղաքի գործադուրկներին կադրերը և այսպիսով ծանր պայմանների մեջ ե ընկնում: Կոմյերիտմիության գյուղական կազմակերպություններին խնդիրը կայանում ե նրանում, վոր քաղաք չվերլու այդ ձրգտումին հակադրվի յերիտասարդության աշխատանքը գյուղում գործադրելու հնարավորությունը, մասնավորապես և մանավանդ կոլլեկտիվացման միջոցով, մի միջոց, վորը գյուղացիության չունևոր դանգվածների նյութական դրությունը բարելավելու իրական ձառնապարհ ե հանդիսանում: Դրա հետ միասին անհրաժեշտ ե՝

ա) Անտառտորֆ մշակումների, ինչպես նաև ճանապարհների շինարարության և այլնի համար բանվորական ուժ հրավիրելիս առաջին հերթին աշխատանք ստանալու հնարավորություն ապահովել բատրակ յերիտասարդության համար:

բ) Միջոցներ ձեռք առնել, վոր բատրակային յերիտասարդության սեզոնային գործադրկության ժամանակ փոխադնության գյուղացիական կոմիտեները նյութական ոգնություն ցույց տան այդ յերիտասարդությանը:

23. Յերիտասարդության ստվար մասսաների առկայությունը (наличие) տնայնա-արհեստագործական արդյունաբերության մեջ և նրանց շահերի թույլ պաշտպանությունը ՀամԼԿՅԵՄ առաջադրում են՝ յերիտասարդության այդ խավերի մեջ մասսայական եկոնոմիկական և կուլտուր-կրթական աշխատանք ծավա-

լելու և այդ յերիտասարդությունը կոմյերիտմիության մեջ ակտիվ կերպով ներգրավելու խնդիրը:

Խրախուսելով վարձու տնայնա-արհեստագործական աշկերտության դարգացումը, ՀամԼԿՅԵՄ պետք ե միջոցներ ձեռք առնի, վորպեսզի այդ բոլոր աշկերտների վերաբերմամբ կիրառվեն աշխտորմերը, պաշտպանվի նրանց աշխատանքը (բանվորական ուր, արձակուրդներ, աշխատավարձ) և մշտական հոգատարություն լինի նրանց կվալիֆիկացիան բարձրացնելու վերաբերյալ:

Համագումարը նպատակահարմար ե գտնում, վոր հաշտարար հանձնաժողովներ կազմակերպվեն գյուղխորհուրդներին կից:

Պետք ե ամեն կերպ ուժեղացվի տնայնա-արհեստագործական աշկերտության դպրոցներ ու դասընթացներ կազմակերպելու աշխատանքը, ըստ վորում կոմյերիտական կազմակերպությունները պետք ե միջոցներ ձեռք առնեն մեծ չափով ներգրավելու այդ կրթական հաստատությունների մեջ չքավորությունն ու բատրակությունը, նրանց ստիպենդիալ կարգով ապահովելու միջոցով: Դրա հետ միասին համագումարը նպատակահարմար ե գտնում, վոր գյուղացիական յերիտասարդության դպրոցներին և || աստիճանի գյուղական դպրոցներին կից ուսուցանող արհեստանոցներ և տնայնա-արհեստագործական դասընթացներ կազմակերպվեն:

Միաժամանակ պիտք ե անհրաժեշտ պայմաններ ստեղծել, վորպեսզի յերիտասարդությունն ավելի մեծ չափով մասնակից արվի տնայնա-արհեստագործական արտեղներին, ինչպես նաև արտեղներ կազմակերպվեն:

տնայնա-արհեստագործական դպրոցներն ավարտող
յերիտասարդությունից:

**V. Պրոլետարական ղեկավարութեան ամրապնդումը
յեւ կոմյերիսմիութեան անմահ կարգավորումը**

24. Գյուղում՝ դասակարգային պայքարի սրման
պայմաններում, միլիոնավոր գյուղացիական տնտե-
սությունների համայնացման մեծագույն խնդիրների
հանդեպ, պրոլետարական ղեկավարութեան ամրապնդ-
ման խնդիրներն առաջնակարգ նշանակութիւն են
ստանում:

Պրոլետարական ղեկավարութեան դերն, ավելի յե-
աճում այն պատճառով, վոր վերջին տարիները յերի-
տասարդութեան միջակային խավերի մասսայական
հոսանք եւ սկսվել դեպի միութեան շարքերը, ինչպես
նաեւ այդ դերն աճում եւ այդ տարրերին վերադաս-
տիարակելու անհրաժեշտութեան շնորհիւ:

Այդ հանգամանքն ավելի սուր կերպով դնում եւ
ՀամԼԿՅԵՄ առաջ մի ուրիշ խնդիր, այն եւ կոմմունիս-
տական-դաստիարակչական աշխատանքը գյուղում ու-
ժեղացնելու խնդիրը, եւ առաջին հերթին՝ այդ աշխա-
տանքը կոմյերիտմիութեան գյուղական կազմակեր-
պութիւններում ուժեղացնելու խնդիրը, մի. աշխա-
տանք, առանց վորի անհնարին եւ ամբապնդել պրոլե-
տարական ղեկավարութիւնը: Դաստիարակչական աշ-
խատանքի բովանդակ ընթացքում անհրաժեշտ եւ յեղինել
այն բանից, վոր «կոմյերիտմիութեանը բանվորա-
գյուղացիական կազմակերպութիւն եւ ըստ իր կազմի
եւ պրոլետարական ըստ իր նպատակների ու խնդիր-
ների»:

25. Միլիոնավոր գյուղացիական տնտեսութիւն-
ների սոցիալիստական վերակառուցման եւ գյուղական
կոմյերիտականների կոմմունիստական դաստիարակու-
թեան խնդիրները չեն կարող լուծվել միայն, միութեան
գյուղական կազմակերպութիւնների ուժերով: Այդ
խնդիրների լուծումը դրված եւ ամբողջ կոմյերիտմիու-
թեան եւ առաջին հերթին նրա հիմնական պրոլետարա-
կան կազմակերպութիւնների վրա:

Այդ խնդիրների տեսակետից բացառիկ նշանա-
կութիւն եւ ստանում գյուղի կուլտշեֆութիւնը: Մինչ-
դեռ կոմյերիտմիութեան մի շարք քաղաքային կազ-
մակերպութիւնները շեֆական աշխատանքը համա-
րում են սոսկ ձևականութիւն, թերագնահատելով նրա
հսկայական նշանակութիւնը աշխատանքի պայմաննե-
րում, մի հանգամանք, վոր վերջին հաշիւով վարկաբե-
կում եւ շեֆութեան գաղափարն իսկ: Համադրումարը
միանգամայն անբավարար եւ համարում կոմյերիտմիու-
թեան աշխատանքի մասնակցութիւնը շեֆնկերութիւն-
ների աշխատանքներում, ինչպես եւ այդ ընկերու-
թիւններում աշխատող կոմյերիտականների ղեկավա-
րութիւնը: Կուլտշեֆութիւնը պետք եւ դառնա գյուղի
սոցիալիստական վերակառուցման գլխավոր լծակներից
մեկը եւ կոմյերիտմիութեան աշխատանքի կարևորա-
գույն բնագավառներից մեկը:

Անհրաժեշտ եւ կազմակերպել պարբերական ար-
տադրական անվանակոչեր (переключки)՝ գյուղական
եւ գործարանային բջիջների միջև (հումքի վորակի,
ֆարրիկատների եւ այլնի մասին):

26. Յեղինելով այն բանից, վոր գյուղացիական
տնտեսութիւնների համայնացման խնդիրները պե տ

ե կենտրոնական տեղ բռնեն կուսակցական և կոմյունիստական աշխատանքի մեջ, համագումարն առաջարկում է ՀամԼԿՅԵՄ Կենտկոմին կազմակերպել բանվորական ակտիվի հատուկ պատրաստումը (իրեն՝ գյուղի պրոլետարական և կիսապրոլետարական խավերի մասնակցութեամբ)՝ կոմյունիստիկության գյուղական կազմակերպությունների մեջ ուղարկելու համար: Հըսկայական նշանակութիւն տալով կուսակցութեան և պետական կազմակերպությունների կողմից՝ կոլլեկտիվ տնտեսութեան կազմակերպողներ պատրաստելու համար հիմնվող դասընթացներին, համագումարը հանձնարարում է ՀամԼԿՅԵՄ Կենտկոմին՝ միջոցներ ձեռք առնել, վոր բանվորական կոմյունիստական ակտիվն ընդունի այդ դասընթացները, ինչպես նաև ակտիվ ստեղծել՝ խիստ ընտրութիւն կատարելու, քաղաքականապես ակնհայտ հետևողական ու կայուն տեղական աշխատավորներին առաջ քաշելու և վերապատրաստելու միջոցով:

27. Պրոլետարական ղեկավարութեան ամրապնդումը հնարավոր է այն դեպքում, յեթե ճիշտ կարգավորվի միութեան աճումը գյուղում և յեթե ապահովվի յերիտասարդութեան սրբոլետարական և կիսապրոլետարական թարրերի վճռական աղղեցութիւնը գյուղական կազմակերպություններում և նրանց ակտիվութեամբ:

Յեղնելով դրանից, համագումարն առաջարկում է.

ա) Միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ամբողջ գյուղատնտեսական բանվոր յերիտասարդութիւնը, բատրակները և տնայնագործական արդյունաբերութեան վարձու յերիտասարդ բանվորները ներգրավեն ՀամԼԿՅԵՄ մեջ:

բ) Լայն կերպով ներգրավել միութեան մեջ չքավորական յերիտասարդութեանը, մանավանդ այս կամ այն տեսակի կոլլեկտիվ տնտեսութիւններում միավորվածներին (об'единенных):

28. Անհրաժեշտ է վորոշ չափով կանգնեցնել միութեան աճումը կոմյունիստիկության գյուղական կազմակերպութիւններում իհաշիվ միջակային յերիտասարդութեան, մի բան, վոր չի նշանակում, թե պետք է դադարեցնել իսկապես լավագոյն միջակներին (միջակային յերիտասարդութեան ակտիվութիւնը չպետք է անուշադրութեան մատնվի ՀամԼԿՅԵՄ կողմից) ընդունելութիւնը ՀամԼԿՅԵՄ մեջ: Միութեանը պարտավոր է պահպանել իր աղղեցութիւնն ու ղեկավարութիւնը միջակային յերիտասարդութեան նկատմամբ, իր յետեից տանելով նրան՝ գյուղի բովանդակ հասարակական կյանքում:

«Լավագոյն միջակ» ասելով միութեանը նկատի յե ունեցել և նկատի ունի միջակային յերիտասարդութեան այն մասին, վորի տնտեսութիւնը թեև առավելութիւն ունի չքավորականի հանդեպ, բայց, համենայն դեպս, իր տիպով սակավագոր է, վորն իր հասարակական աշխատանքով ապացուցել է, վոր նվիրված է կուսակցութեան և միութեան շահերին, վորն ակտիվ կերպով ոժանդակում է կոլլեկտիվացման գործին, չքավորութեան ու բատրակութեան մեջ կատարվող աշխատանքին, պայքարում է կուլակի դեմ և հասկանում է, վոր կուսակցութեան հենարանը գյուղում, ղեկավար կորիզը իրեն, գյուղացիութեան ներսում՝ այդ չքավորութիւնն ու բատրակութիւնն է:

ՀամԼԿՅԵՄ, սոցիալ-դասակարգային գնահատա-

կանի և անհատական խիստ ընտրանքի հիմունքով, պետք է իր շարքերն ընդունի միայն այդ իսկապես լավագույն միջակներին:

29. Դրա հետ միասին համագումարն առաջարկում է վճռականությամբ պայքարել այն բոլոր փորձերի դեմ, վոր անում է կուլակութունը միության շարքերը սողոսկելու համար, ինչպես նաև պայքարել այն անփութից և անուշադիր վերաբերմունքի դեմ, վոր նկատվում է դեպի բատրակային ու չքավորական յերիտասարդությունը, անխնա կերպով վտարելով կոմյերիտմիության շարքերից անհարազատ տարրերին, մերկացնելով կուլակության և ունեորդների այն փորձերը, վոր անում են նրանք՝ խափանելու չքավորության ու բատրակության աճող կազմակերպվածությունը և ազդեցությունը գյուղի հասարակական-քաղաքական ամբողջ կյանքում: Դյուղական բլիշները պետք է արմատախիլ անեն—առաջին հերթին իրենց շարքերից—չքավորության ու բատրակության դերը թերագնահատելու, պրոլետարիատի և չքավոր ու միջակ գյուղացիության շողկապն ամրապնդելու և միջակային յերիտասարդության մասսաների վրա կոմունիստական ազդեցությունն ընդարձակելու գործում այդ չքավորության ու բատրակության կազմակերպման նշանակությունը չհասկանալու բոլոր տրամադրությունները:

30. Ավելի մեծ չափով առաջ քաշել միության ղեկավար մարմիններում (բլիշի բյուրո, կոմիտեներ) և հասարակական ակտիվ աշխատանքներում՝ կոմյերիտական գյուղատնտեսական բանվորներին, բատրակներին և չքավորներին՝ այդ կադրերի ճիշտ դասավորե-

լու և նրանց դաստիարակությունը կանոնավոր հիմքերի վրա դնելու միջոցով, ապահովելով նրանց համար վճռական ղեկավար դեր:

31. Զգտելով գոյությունն ունեցող, մասնավոր յերիտասարդ, բլիշների դասակարգային ձևավորմանը, նոր բլիշներ կազմակերպել միայն այն դեպքում, յեթե նրանց իրական ղեկավարությունն ապահովելու հնարավորություն և բավականաչափ ամուր բատրակային-չքավորական կորիզ կա:

32. Կուսկորիզի աճումը կոմյերիտմիության գյուղական կազմակերպություններում վերջին տարիները տեղի յե ունեցել, գլխավորապես, իհաշիվ ծառայողների—բատրակների և չքավորների թույլ ներգրավման պայմաններում: Համարելով այդ յերևույթն աննորմալ, համագումարն առաջարկում է ուժեղացնել կոմյերիտական գյուղատնտեսական բանվորների, բատրակների և չքավորների ներգրավումը, ամեն կերպ գյուղացնելով նրանց համար կանոնադրության պահանջների կատարումը, պահանջներ, վոր առաջադրվում են նրանց՝ Համկոմկուսի (բ) մեջ ընդունելիս:

Անհրաժեշտ է կուսակցության ուշադրությունը հրավիրել կոմյերիտմիության շարքերում կուսակցական նոր կադրեր դաստիարակելու խնդրի վրա:

33. Կոմյերիտական աշխատանքի բարդացած խնդիրները գյուղում՝ ավելի քան յերբիցե պահանջում են բարձրացնել կոմյերիտական ակտիվի թեորետիկական մակարդակը և գործնական կլավիֆիկացիան: Անբավարար համարելով գյուղական ակտիվի թեորետիկական և պրակտիկ պատրաստականությունը բարձրացնելու ասպարիզում կատարված աշխատանքը, բա-

ցառիկ ուշադրութիւն դարձնել այդ աշխատանքի ձեւերը բարելավելու վրա, ամեն կերպ ոգտադործելով գյուղական ակտիվի խորհրդակցութիւններ (գասընթացներ) հրավիրելու պրակտիկան:

Համապատասխան պարտավորեցնում է բոլոր տեղական կազմակերպութիւններին՝ առաջիկա աշնան ժամանակաշրջանում ամենուրեք կիրառել ստորին ակտիվի (գյուղըջիջների քաղաքացիներին) գալուստային շրջանային գասընթաց-համապատասխաններ և ռայոնական ու գալուստային ակտիվի (գյուղաշրջակայի) նահանգական գասընթացներ, այժմվանից իսկ ձեռնարկելով նրանց գումարման նախապատրաստական աշխատանքներին:

Դրա հետ միասին անհրաժեշտ է ավելի մեծ թվով կոմյերիտականներ ուղարկել ակտիվի վերապատրաստման գասընթացները, վոր կազմակերպվում են կուսակցութեան կողմից:

Նպատակ ունենալով ուժեղացնելու գյուղական աշխատանքի ղեկավարութիւնը, համապատասխան անհրաժեշտ է համարում, վոր ՀամԿՅՅԽՍՍ Կենտկոմին, արգշտնաբերական և խառն նահանգական և շրջանային կոմիտեներին կից՝ գյուղական բաժիններ կազմակերպվեն:

ՀԱՐԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՐՈՒՄԸ ՄԵՆՈՒԿՆԵՐԻ ՄԵՋ

(Թափանձել քնն. Խուսկիայի զեկուցման շուրջը)

I

1. Սոցիալիստական շինարարութեան ներկա շրջանն, ավելի քան չերեկցե, սուր կերպով առաջադրում է մարդկային նշույթի վերակերտման, հին տրադիցիաների, ունակութիւնների և սովորութիւնների վոչնչացման և աշխատանքի ու մարդկանց փոխհարաբերութիւնների նկատմամբ նոր հայացքներ մշակելու խնդիրը: Ուստի մանուկների լայն զանգվածների մեջ ՀամԿՅՅԽՍՍ կոմիտեի կողմից այդ ուղղութեամբ կատարվող աշխատանքը, մանավանդ պիտի կազմակերպութեան միջոցով, այժմ առանձնապէս կարևոր նշանակութիւն է ստանում:

2. ԽՍՀՄ-ում գաստիրարակութեան հիմնական ֆակտոր է հանդիսանում ամբողջ խորհրդային իրավակարգը, ամբողջ պրոլետարական կազմակերպված հասարակայնութիւնը, վորն ազդում է մանուկների հայացքների, ձգտումների, ցանկութիւնների և նրանց ամբողջ վարքի վրա: Խորհրդային իշխանութեան առաջ դրված խնդիրների լուծմանը զուգընթաց, այսինքն՝ մարդկային փոխ հարաբերութիւնների սոցիալիստական վերակառուցմանը զուգընթաց, հասարա-

կական միջավայրի այդ կրթիչ ազդեցութիւնը պետք է հետզհետեւ աճի ավելի ուժգին, ավելի անշեղ կերպով:

3. Խորհրդային պետութիւնն իր գոյութեան 10 տարվա ընթացքում խոշոր հաջողութիւններ է ունեցել թե դաստիարակութեան գործին նոր բովանդակութիւն տալու իմաստով և թե աշխատավորների յերեխաների կրթութեան ու դաստիարակութեան համար անհրաժեշտ պայմաններն ապահովելու գործում: Շատ բար և արված՝ թե յերեխայի իրավունքների և աշխատանքի տնտեսական պաշտպանութեան գծով, նրա առողջապահութեան (մանուկների մահացութեան պակասումը) Վերաբերյալ և թե մանուկների կուլտուրական ու հասարակական պահանջներն ու կարիքները բավարարելու գծով (պիոներ-կազմակերպութիւն, դպրոց, արտադպրոցական աշխատանք):

4. Սակայն մեր հասարակական դարգացման տվյալ շրջանում հինը թեև ջարդուփշուր է չեղել, բայց դեռ չի վերացել: Մանուկների այժմյան սերունդը աճում, կրթութիւն ու դաստիարակութիւն է ստանում բոլորովին հակադիր միջավայրում: Մանր բուրժուական և կապիտալիստական մեռնող տարրերը դանազան միջոցներով փորձում են իրենց հակապոլիտարական իդեոլոգիայով թունավորել մանուկների գիտակցութիւնն ու զգացմունքները: Դեռահաս սերունդի դաստիարակութեան խնդիրները այն բնագավառն են, վորտեղ հինը, մեռածը դեռ վերջնականապես չի վերացել հրապարակից:

5. Անցյալի ծանր ժառանգութիւնը, սոցիալիստական շինարարութեան դժվարութիւններն ու հա-

կասութիւնները կապիտալիստական շրջափակման պայմաններում—այն հիմնական պատճառն են, վորից առաջանում են այնպիսի բացասական յերեւոյթներ մանուկների դրութեան ու դաստիարակութեան մեջ, ինչպես՝

ա) անսպաստանութիւնը — ագրարային դերբնակչութեան պատճառով՝ գյուղում, հասակավորների և դեռահասների գործադրկութեան պատճառով՝ քաղաքում:

բ) անհակողութիւնը, վոր բացատրվում է դպրոցական ցանցի և մանուկների մեջ կատարվող աշխատանքի արտադպրոցական ձևերի անբավարարութեամբ, ընտանիքի անուշադրութեամբ, վոր զբաղվածութեան հետեանք է և այլն:

գ) մանուկների մասնակի շահագործումը, մանավանդ գյուղում:

Ազգային թշնամանքն ու խռովութիւնները, անտիսեմիտիզմը, կրոնական ազդեցութիւնները, մանկական հանցագործութիւնը, տղաների և աղջիկների տակավին աննորմալ փոխաբերութիւնները, — այդ բոլորը արդեւնք է վոչ միայն վերացած, այլև ուժեղացող մանր բուրժուական ազդեցութիւնների, ինչպես նաև վերոհիշյալ բացասական յերեւոյթների, վոր նկատելի յեն մանուկների դրութեան միջ:

6. Դեռ ամեն բան, վոր հնարավոր է գոյութիւն ունեցող պայմանների շրջանակներում, չի արվում՝ մանուկների կյանքը, կենցաղը և դաստիարակութիւնը բարելավելու, պրոլետարիատին խորթ ու հակադիր ազդեցութիւնների դեմ մանկական միջավայրում պայքարելու համար: Դեռահաս սերնդի դաս-

տիարակության գործը, հիրավի, պետք է անհամեմատ ավելի մեծ տեղ գրավի կուսակցության, կոմյերիտմիության, խորհրդային մարմինների և արհմիությունների աշխատանքի մեջ:

Հիմնական խնդիրն այն է, վոր պետք է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի կոմմունիստական դաստիարակությունն ընդգրկի բոլոր մանուկներին՝ առանց բացառության և առաջին հերթին՝ բանվորներին, բառրակներին և չքավորների չերեխաներին:

Այդ աշխատանքի ծավալումը պետք է նպատակ ունենա դաստիարակելու մանուկներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի, դասակարգային համերաշխության, կոլլեկտիվիզմի և դեպի սոցիալիզմի վրդով, ինչպես նաև՝ մանուկների մեջ նոր կյանքի շինարարության համար անհրաժեշտ աշխատանքային և կազմակերպչական ունակություններ պատվաստելու և մանուկներին հարկավոր գիտելիքներով սպառազինելու:

7. Այդ խնդիրների լուծումը վճռական բեկումն է պահանջում ամբողջ խորհրդային հասարակայնության՝ կուսակցության, կոմյերիտմիության, պետմարմինների և արհմիությունների կողմից պիոներ շարժվման վերաբերմամբ: Այն զգալի դժվարությունները, որ կրում է պիոներ-կազմակերպությունը, մեծ չափով բացատրվում են նրանով, վոր խորհրդային հասարակայնությունն այժմ թույլ ուշադրություն և ոգնություն է ցույց տալիս դեպի նրա գործունեությունը:

Միայն այն ժամանակ, չերը այդ բոլոր կազմակերպություններն իրենց ուշադրությամբ կշրջապատեն պիոներական շարժումը և իրական պրակտիկ

ողնություն ցույց կտան նրան, պիոներական շարժումն իրոք կգտնա մանուկների մասսաների կազմակերպող ու ղեկավար, իրականապես ապահովելով դեռահաս սերնդի կոմմունիստական դաստիարակությունը:

Համագումարը պարտավորեցնում է առաջ բերել այդ բեկումն ամենից առաջ իրեն՝ կոմյերիտմիության կազմակերպության մեջ: Համագումարն առաջարկում է կենտկոմին և միության բոլոր կազմակերպություններին՝ վճռականությամբ կոտրել նկատված չինովնիկական, բյուրոկրատիկ վերաբերմունքը դեպի պիոներ-աշխատանքը, վորպես դեպի մի մանր գործ, վորպես դեպի «մանկական» աշխատանք:

Համագումարը պարտավորեցնում է բոլոր կոմյերիտական կազմակերպություններին, սկսած ստորին բջիջներից մինչև կենտրոնական կոմիտեն, և կոմյետական մամուլի բոլոր որդաններին՝ ըստ հյուսթյան զբաղվել պիոներ-աշխատանքի խնդիրներով սիստեմատիկաբար, և վոչ այս կամ այն առթիվ, քննության առնելով ջոկատների աշխատանքի բովանդակությունն ու մեթոդները:

II

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՁԵՐԺՄԱՆ ԱՄՐԱՊՆԻՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8 Համլենկոմյերիտմիության Vll համագումարից մինչև Vlll համագումարն անցած ժամանակաշրջանում պիոներական շարժումը խոշոր դժվարությունների և կրել դժվարություններ, վորոնք շարունակվում են դեռ մինչև այժմ ել, և վորոնց հե-

տեանքով կրճատվել և մանուկները թիվը պիտոներական կազմակերպության մեջ: V համագումարի վորոշումները մեծ նախով կիրառված չեն կլանքում, մի հանգամանք, վ.ր բարդացրեց այդ դժվարությունները: Այդ դժվարությունների գլխավոր պատճառներն այն են, վոր մենք չենք կարողանում աշխատել խորհրդային չերկրի չերրորդ սերնդի մեջ, վոր բացակայում են մանուկների մեջ մասնագիտական կոմունիստական աշխատանք կատարելու բավականաչափ մտածված սխտեմ և մանկավարժորեն հիմնավորված մեթոդներ, վոր հասակավորների շրջանում կատարվող աշխատանքի մեթոդները մեխանիկաբար փոխադրում ենք մանկական միջավայրը: Դրա հետևանքը հաճախ լինում է այն, վոր մենք «չափազանց քաղաքականացում» ենք պիտոներական աշխատանքը ի քիսս հասարակական-աշխատանքային դաստիարակության, կուլտուր-կրթական գործունեության և մանուկների առողջ ժամանցի կազմակերպման: Միևնույն ժամանակ, յեթե մի կողմից մենք թեքում ունենք դեպի մանկական շարժման «քաղաքականացումը», ապա, մյուս կողմից, վորպես հակադրեցություն պիտոներ-աշխատանքի այդ թերություններին ու դժվարություններին, չերևան են չեկել առանձին տեղիներ, վորոնք հիմնով ն ժխտում են մանուկների հասարակական-քաղաքական դաստիարակությունը: Թե այդ և թե մյուս թեքումը պետք է վճռականությունը վերացվեն:

Համագումարը նմանապես սխալ է համարում բուրժուականների աշխատանքի այնպիսի մեթոդները տեղափոխումը պիտոներական կազմակերպության մեջ,

վորպիսիք են՝ աստիճանակարգերի, անհատական խրախուսումների, ինդիվիդուալ մրցությունների, թվանշանների ու հեծանակների (нашивки) սխտեմները, վորպես միանգամայն անընդունելի մանուկների կոմունիստական դաստիարակության գործում:

Մենք պետք է հաստատեն կերպով ու հետևողականորեն կիրառենք մանկական շարժման աշխուժացման գիծը, պիտոներական աշխատանքի հիմք դարձնելով հասարակական-աշխատանքային դաստիարակությունը, վորի հիմունքով միայն և կարելի է կազմակերպել մանուկների դաստիարակություն՝ կուլեկտիվիզմի և կոմունիզմի վոգով: Նոր ձևերն ու մեթոդները, վոր մշակվում են աշխատանքի պրոցեսում և վորոնք արդեն իրենց գործնական կիրառումն (применение) են դտել մի շարք պիտոներական կազմակերպություններում, պետք է հիմնովին յուրացվեն ամբողջ պիտոներական կազմակերպության կողմից:

9. Չնայած վերոհիշյալ թերություններին, պիտոներ-կազմակերպությունը հսկայական կրթիչ ազդեցություն է ունեցել մանուկների վրա: Վորպեսզի այդ կրթիչ ազդեցությունն ավելի էս ամրապնդվի, պիտոներ-կազմակերպությունը պետք է վառ ապրումներ տա մանուկներին. հետաքրքրական գրքերի միասնական ընթերցում, միասնական ղեկավարներ, խաղեր, չերգեցողություն, միասնաբար իրագործվող նպատակներ և այլն: Այդ ամբողջ աշխատանքը պետք է այնպես կազմակերպել, վորպեսզի նա համախմբի մանուկներին և նրանցից այնպիսի մարդիկ պատրաստի, վորոնք իրենց կլանքը չեն չերևակայում կուլեկտիվիզմի գուրս և իրենց զգում են կապված կուլեկտի-

վի հետ անքակտելի կապերով: Մանուկների մեջ դեպի շրջապատը գիտակցական վերաբերմունք զարգացնելը, այդ շրջապատը փոփոխելու, բարելավելու միասնական աշխատանքը ել ավելի պետք է համախմբեն մանուկներին, դաստիարակեն նրանց մեջ միասնաբար հասարակական նպատակներ առաջադրելու և այդ նպատակները միասնաբար իրագործելու ընդունակությունը: Այդպիսի կոլլեկտիվ աշխատանքն ամենից լավ դաստիարակում է այն ներքին դիսցիպլինան, վորը հետզհետե ավելի չէ ամրապնդվում աշխատավորության մեջ, վորն ոգնեց այդ աշխատավորության խորհրդային իշխանություն նվաճել և պահպանել խորհրդային իշխանությունը: Այն, վոր մանուկները միասնաբար լուծում են իրենց առաջ դրված հասարակական-պրակտիկ խնդիրները, նրանց մեջ դաստիարակում է այն սովորությունը, վոր նրանք զբաղվում են աշխատանքի կազմակերպմամբ, փոխադարձաբար ոգնում են միմյանց իրենց աշխատանքների ընթացքում, կարողանում են իրենց գիտելիքներն ու ընդունակություններն իսպաս դնել հանրության և զբաղմունքի բավարարություն գտնել:

10 Պիոներ-կազմակերպության մեջ մենք պետք է աշխատենք վոչ թե առանձին տաղանդավոր և ուժեղ մանուկներին առաջ քաշել, այլ աշխատենք միաձուլել կոլլեկտիվ ստեղծել, մանուկների մեջ ընկերական զգացմունք դաստիարակել: Պետք է հատուկ ուշադրություն դարձնել ընկերական զգացմունք դաստիարակելու տղաների և աղջիկների միջև, տարբեր

ազգութայինների մանուկների միջև, ավելի ուժեղ և ավելի թույլ մանուկների միջև, աշխատավորների բոլոր չերեսաների միջև՝ պիոներների և վոչ պիոներների: Անհրաժեշտ է ճշտել մանուկների վրա մանկավարժական ճնշում գործ դնելու միջոցների սխտեմը իրեն՝ պիոներական ջոկատի շարքերում, ժխտելով ճնշման միջոցների կիրարկումը (պայմանական վտարում, տուգանքներ և այլն):

Վոչ միայն պիոներական կազմակերպության մեջ, այլև տանը, դպրոցում և փողոցում պիոները պետք է պաշտպանի մյուս չերեսաներին ծեծից, կոպիտ վերաբերմունքից, շահագործումից: Նա պետք է առանձնապես ուշադիր լինի դեպի չքավորների չերեսաները, անապատանները և աշխատի ներգրավել նրանց պիոներ-կազմակերպության մեջ: Հենց այդ կողմից ել պետք է մոտենալ, բացատրելով ու պարզաբանելով պիոներների առաջ դասակարգային հակասությունները, բանվոր դասակարգի պայքարը, կրոնի դերը, կազմակերպության դերը, բանվորական շարժման միջազգային բնույթը և այլն:

Անհրաժեշտ է, վոր պիոներները հասկանան կուսակցության, կոմյունիստիկության, խորհրդային իշխանության նշանակությունը, արհեստակցական, կոոպերատիվ և կանանց կազմակերպությունների նշանակությունը, վորպեսզի իրենց ուժերի ներածին չափ դառնան այդ կազմակերպությունների ոգնականները:

11. Մանուկների իրավունքների և շահերի համար մղվող պայքարի պրոցեսում և կուսակցական, արհեստակցական, խորհրդային ու կոոպերատիվ կազ-

մակերպություններին ցույց տրվող ռզնության պրո-
ցեսսում պիտոներ կազմակերպությունն ամենից լավ
կարող է պիտոներների մեջ աշխատանքային և կազ-
մակերպչական ունակություններ դաստիարակել:

Կարևոր է վոչ միայն այն, վոր մանուկները
վորոշ գիտելիքներ և կարողություն (умение) ձեռք
բերեն,—ամենագլխավորն այն է, վոր պիտոներ-կազ-
մակերպությունը նրանց արտելային, կոոպերատիվ
աշխատանքի և ճիշտ հիմունքներով կազմակերպված
հանգստի ունակություններ տա: Կարևոր է, վոր
պիտոներները սովորեն իրենք իրենց առաջ դնել միաս-
նաբար իրագործվող հասարակական նպատակներ
(հարկավոր են այսպիսի կամ այնպիսի ուժեր, այս-
պիսի կամ այնպիսի կարողություն և հմտություն և
այլն), սովորեն հաշվի առնել իրենց աշխատանքի
արդյունքները (այսքան կամ այնքան արված է, լավ
կամ վատ է արված և այլն), սովորեն աշխատել, ռզ-
նելով միմյանց (չերկուսով, չերեքով, կոլլեկտիվով),
համակարգելով իրենց ուժերը, սովորեն բաշխել իրար
մեջ աշխատանքը ըստ ուժի ու կարողության:

12. Այդ հիմունքով անհրաժեշտ է միջոցներ ձեռք
առնել կարճ ժամանակում վորոշելու մանուկների հա-
մար հետաքրքրական ու մատչելի հասարակական
գործերի և զրանց հետ կապված համապատասխան ու-
նակությունների ու գիտելիքների ցանկ: Այդ գոր-
ծերի, ունակությունների և գիտելիքների ցանկը
պետք է աստիճանային բնույթ կրի (աստիճա-
նաբար բարդացող) և հարմարեցված լինի հասակնե-
րին և բաղադրի ու գյուղի պայմաններին:

13. Համագումարը քննության է առնում այն

չերեւելթը, վոր մի շարք կոմյերիտական կազմակեր-
պությունների մեջ պիտոներական կազմակերպություն-
ների աճումը մեխանիկորեն կասեցնելու տենդենց-
ներ գոյություն ունեն, ինչպես նաև անգործունիյու-
թյունը, վոր ցուցաբերում են կոմյերիտական կազմա-
կերպությունները պիտոներ-ջոկատների աճման վերա-
բերմամբ: Համագումարն անհրաժեշտ է համարում, վոր
պիտոներ-կազմակերպության աշխատանքի վորակը
բարելավելու հետ միասին ուժեղացվի նաև մանուկնե-
րի ներգրավումը կազմակերպության շարքերում, մա-
նավանդ գործարանային շրջաններում, միաժամանակ
աչալրջությամբ հետևելով, վոր պիտոներ-կազմակեր-
պության գյուղական ճյուղերն աճեն ի հաշիվ բատրա-
կային-չքավորական կորիզի: Համագումարն անհրա-
ժեշտ է համարում, վոր պիտոներ-կազմակերպության
շարքերում ներգրավվեն վոչ միայն դպրոցականները,
այլև դպրոցից դուրս մնացած չերխանները:

Նկատի առնելով կոլլեկտիվացման համար մղվող
պայքարի սրումը գյուղում, համագումարն անհրա-
ժեշտ է համարում, վոր կոլլեկտիվ և խորհրդային
տնտեսություններին կից նոր ջոկատներ կազմակերպ-
վեն:

Անհրաժեշտ է, վոր այն 20 հազար բջիջները, վո-
րոնք չունեն պիտոներական ջոկատներ, ամեն միջոց
ձեռք առնեն այդպիսի ջոկատներ կազմակերպելու:

Համագումարը միանգամայն անթույլատրելի չե
համարում այն, վոր արհմիությունները պատանի
պիտոներների ջոկատներին պաշտպանություն ցույց
տալու պայման են դնում, վոր պիտոներ-կազմակեր-
պությունն իր շարքերի մեջ ընդունի միայն սովյալ

արհմիությունների անդամների չերեխաներին: Անհրաժեշտ է վճռականությամբ վերացնել այդ համաքաղաքական տրամադրությունները արհմիութենական աշխատավորների միջից և միջոցներ ձեռք առնել կազմակերպելու գործն աջակցելով, վոր մասնակիներն ընդունվին ջողատների մեջ առանց այս կամ այն արհմիությունների բաժանելու, լիովին ապահովելով այդ ջողատները այն ընդհանուր ֆոնդերով, վոր հատկացվում են արհմիությունների կողմից:

14. Պիոներ-շարժման ամբողջ սիստեմում հսկայական նշանակություն ունի առաջնորդը: Առաջնորդը աշխատանքը, վոր մեծ պատրաստականություն և համապատասխան անհատական բարեմասնություններ ե պահանջում, մինչև այժմ նկատվել ե վորպես մի յերկրորդական և անկարևոր աշխատանք: Համագումարը միանգամայն անթույլատրելի չե համարում այդպիսի դրությունը և առաջարկում ե վորպես առաջնորդ առաջ քաշել կոմյերիտմիության ամենապատրաստված ու հեղինակավոր աշխատավորներին և միաժամանակ միջոցներ ձեռք առնել՝ առաջնորդների կայուն կադրեր ստեղծելու համար, պրակտիկ ոգնություն ցույց տալով նրանց կոմյերիտական բջիջների կողմից:

Համագումարը պարտավորեցնում ե կոմյերիտական կազմակերպություններին շարքային կոմյերիտականների հատուկ կադրեր տրամադրել պիոներ-կազմակերպությունը՝ պիոներական ջողատներում աշխատելու իբրև ոժանդակ ուժ ջողատների առաջնորդների համար:

Կոմյերիտմիությունը պետք ե ձգտի՝ մասնակիներին մեջ աշխատել ցանկացող առաջնորդներին կապել մանկավարժական աշխատանքների հետ, ուղարկելով

նրանց մանկավարժական բարձրագույն դպրոցներ, տեխնիկումներ և ժողովրդական կրթություն բաժիններ (լուսբաժիններ):

Համագումարը հանձնարարում ե կենտ. Կոմիտեին մոտակա ժամանակամիջոցում հատկապես ուսումնասիրել և մշակել պիոներշարժման աշխատավորների սիստեմատիկ պատրաստման ձևերի բարելավման խնդիրը, դնելով այդ հարցերը համապատասխան մարմիններում, Լուս-ժողկոմատում և Համկոմկուսի (բ) Կենտկոմի ագիտ-պրոպագանդում:

Համագումարը շատ կարևոր ե համարում Լուս-ժողկոմատի այն վորոշումը, վորի համաձայն պետք ե արտադպրոցական ֆակուլտետ բացվի, և անհրաժեշտ ե համարում, վոր նրա բացումն ապահովվի 1928 — 29 թ. աշնանից:

Անհրաժեշտ ե 1928 — 29 թ. շտառի մեջ մտցնել խոշոր դպրոցների ֆորպոստների առաջնորդներին:

Համագումարն առաջարկում Կենտկոմին և միության բրոր կոմիտեներին ավելի վճռական կերպով առաջ քաշել պիոներական ղեկավար աշխատանքներում ամենապատրաստված և հետևողական ու կայուն կոմյերիտական աշխատավորներին, պաշար մղելով այն տենդենցի դեմ, վորը չերևան ե գալիս պիոներաշխատանքը թերազնահատելու և մանկական մասսայի մեջ աշխատել չցանկանալու ձևով: Նպատակահարմար կերպով կիրառել այն պրակտիկան, վոր այդ աշխատավորներն ավելի չորհար ժամանակով կցվին պիոներ-կազմակերպությանը՝ պիոներ-աշխատանքի հետ կապված բոլոր խնդիրները հիմնավորապես ուսումնասիրելու համար:

15. Դրա հետ միասին համագումարն անհրաժեշտ է համարում, վոր սիստեմատիկ աշխատանք կատարվի նաև մեծացած պիոներական և մանկական ակտիվի շրջանում: Անհրաժեշտ է, վոր պիոներ-կազմակերպության կողմից կիրառվող ամեն մի կտրուր ձեռնարկում նախապես քննության առնվի մանուկների մասնակցությամբ, ինչպես նաև պատանի պիոներների բուլբուլներում, լիակատար հնարավորութուն տալով նրանց իրենց պատասխանատու զգալու ամբողջ կազմակերպության համար: Մանկական ակտիվի մեջ կատարվող աշխատանքի այնպիսի ձևեր, վորպիսիք են՝ պիոներական ակտիվի խորհրդակցությունները իրենց աշխատանքի առանձին ճյուղերի և կոնկրետ խնդիրների շուրջը, ակտիվ մանուկների դասընթացներ կազմակերպելը, պիոներական և մանկական կոնֆերենցիաներ կիրառելը, ակտիվ մանուկներին պատանի պիոներների բուլբուլների հանձնաժողովներում և վորպես ջոկատների առաջնորդների ոգնականներ ոգտագործելը, — այդ բոլորը պետք է կազմի պիոներ-կազմակերպության առօրյա աշխատանքի անբաժանելի մասը: Համագումարը հանձնարարում է կենտկոմին մանրամասն մշակել այդ խնդիրները և անհրաժեշտ է համարում, վոր հատուկ տպագրական որգան հրատարակվի, մի որգան, վորը կծառայի այդ մանկական ակտիվը համախմբելու ու միավորելու, ինչպես նաև ղեկավարելու նպատակներին: Այդ ակտիվի հետ կապված աշխատանքը պետք է այնպես կազմակերպել, վոր ակտիվը մոչ մի դեպքում չմեկուսանա և չկտրվի մանկական մասսայից ընդհանրապես, վորովհետև այդպիսի դրությունը հղի չէ մի շարք վտանգներով:

16. Համագումարը հանձնարարում է կենտկոմին մշակել կոմյերիտուկյան ղեկավար կոմիտեների և Պատ. Պիոներների ԿԲ-ի կողմից պիոներական շարժման նկատմամբ ցույց տրվող ղեկավարության ձևերի ու մեթոդների խնդիրը: Համագումարը հատուկ ուշադրութուն է դարձնում այն խնդրի վրա, վոր պետք է հավաքել և ընդհանրացնել պիոներ-կազմակերպության առանձին մարմինների աշխատանքի փորձը և տեղափոխել այն մյուս կազմակերպությունների մեջ:

17. Համագումարն անհրաժեշտ է համարում ձեռնարկել առանձին ղեկավար թերթի հրատարակության՝ գյուղի աշխատավորների համար:

18. Անհրաժեշտ է բարելավել հրատարակվող պիոներական ղեկավար գրականության վերակը: Կենտկոմը պետք է միջոցներ ձեռք առնի Կենտհրատի միջոցով ուժեղացնելու պիոներական գրականության հրատարակությունը՝ առանձին ազգությունների լեզուներով:

19. Համագումարն անհրաժեշտ է համարում, վոր ինտերնացիոնալ դաստիարակության վերաբերյալ մշտական սիստեմատիկ աշխատանք ծավալվի, այդ նպատակով կանոնավորելով արտասահմանյան և ազգային ջոկատների ու դպրոցների հետ չեղած կապերը, ոգնութուն ցույց տալով կատարվող աշխատանքներում, միմյանց մոտ փոխադարձաբար պատգամավորություններ ուղարկելով, պալքարելով ազգային թշնամանքի ու խռովությունների դեմ, ՄՈՊՐ-ին ոգնութուն կազմակերպելով և բացատրողական աշխատանք կիրառելով բոլոր պիոներ ու դպրոցական մանուկների մեջ:

20. Նկատի ունենալով այն, վոր Համլենկոմչերիտմիութեան 7-րդ համագումարի՝ հոկտեմբերիկնե-րի մեջ կատարվող աշխատանքի վերաբերյալ վորոշումները չեն կատարված, համագումարը հանձնարարում է կենտրոնին և տեղական կազմակերպութիւններին՝ ապահովել այդ վորոշումների մաքսիմալ կիրառումը կյանքում:

Հատուկ ուշադրութեան արժանի պետք է լինի նաև՝ հոկտեմբերիկների գրուպպաների առաջնորդներ (вожатый) պատրաստելու հատուկ գործը, համապատասխան գրականութուն հրատարակելը, հոկտեմբերիկների աշխատանքի պրակտիկան ուսումնասիրելն ու մշակելը, նրանց աշխատանքը, ազատ ժամերի ոգտադրծումը և առողջապահութեան գործը կազմակերպելը:

Անհրաժեշտ է, վոր հոկտեմբերիկների գուպպաների աճումը չդադարեցվի նաև հետագայում, այդ նպատակով ապահովելով նրանց ղեկավարներով և աշխատանքի համապատասխան պայմաններով:

III

Կոմյերիտի ու յուրեք լեվ գպրոցը

21. Խորհրդային աշխատանքային դպրոցի սկզբունքային գիծն այն է, վոր այդ դպրոցը մատերիալիստական աշխարհայացքի հիմունքներն է պատվաստում աշակերտութեան և ուսանողութեան մեջ և նրանց սպառազինում է այնպիսի գիտելիքներով, վորոնք անհրաժեշտ են նոր կյանքի կառուցման համար:

Այդ խնդիրների գործնական լուծման ճանապարհին դպրոցն արդեն մի շարք նվաճումներ է կատարել: Սակայն սխալ կլինե՞ր յենթադրել, վոր Խորհրդային դպրոցի համար միվող պայքարը վերջացած է: Այդ պայքարը դեռ շատ սուր է, դեռ ուժեղ են այն ազդեցութիւնները, վոր աշխատում են դպրոցի կենցաղի մեջ մտցնել այն ամենը, ինչ վոր «մեռած ու հեղափոխութեան կողմից դատապարտված է»: Ահա թե ինչու կոմյերիտիութեանը թե իր բջիջների միջոցով անմիջականորեն և թե մասնավանդ պիոներ-կազմակերպութեան միջոցով պետք ամեն կերպ ուժեղացնի իր ազդեցութիւնը դպրոցի վրա և իր պրակտիկ ոգնութիւնը նրա քանակական և վորակական զարգացման գործում:

22. Խորհրդային ուսանողութեանը ունենալով վերջին տարիները մանուկների գրագիտութեան համար մեղվող պայքարում, դպրոցը միևնույն ժամանակ չի կարողանում բավարար չափով մանուկների ստացած ունակութիւններն ու գիտելիքները կապել շրջապատող Խորհրդային հասարակայնութեան հետ և շատ քիչ կրթարտագրական դաստիարակութիւն է տալիս, վորպեսզի նրանք կարողանան պատրաստվել ինքնուրույն աշխատանքային կյանքի:

23. Համագումարը գտնում է, վոր դպրոցի առորջա աշխատանքին մասնակցելուց զատ, կոմյերիտմիութեանը և պիոներ-կազմակերպութիւնը պետք է իրենց գործունեիւթեան կենտրոն դարձնեն հետեյալ խնդիրների լուծումը:

ա) դպրոցի դաստիարակչական դերի ուժեղացումը, ձևական ունակութիւններ և գիտելիքներ

ձեռք բերելու աշխատանքի ղուգակցումը հասարակականորեն ոգտակար և ակմբային գործունեություն (ակմբային աշխատանքի ապահովում չիրկնեթափոխ դպրոցներում, մասնավորապես ոգտագործելով չեղած բանվորական և պրոֆեսսիոնալ ակումբները և չերեկոյան ակումբների կազմակերպում՝ միահեթթափոխ դպրոցներում) ծավալման հետ: Համագումարը Լուսժողկոմատի ուղադրությունն և հրավիրում ծրագրի մեջ հակակրոնական դաստիարակություն տարրեր մըտցընելու անհրաժեշտություն վրա:

բ) կրթաարտադրական աշխատանքի արմատացումը և ուժեղացումը դպրոցում, վոր պետք և արտահայտվի՝ քաղաքում — դպրոցական արհեստանոցներ ծավալելու և կապը արտադրության հետ ուժեղացնելու ձևով, իսկ գյուղում — դպրոցական արհեստանոցներ ծավալելուց բացի, դպրոցների գյուղատնտեսական և այդ աշխատանքը գյուղատնտեսություն կոլեկտիվացման և կոոպերացման խնդիրների հետ կապելու ձևով:

գ) աշակցություն ընդհանուր պարտադիր ուսում մտցնելու գործին՝ քառամյա դպրոցի հիմունքով, իսկ արդյունաբերական շրջաններում — գործարանային յոթնամյակի հիմունքով, այդ նպատակով ծավալելով լայն հասարակական կամպանիա, մոբիլիզացիայի յենթարկելով դրա համար բնակչության ուժերն ու միջոցները, նախաձեռնություն վերցնելով իր վրա՝ առաջին հերթին իր ռայոնում, գավառակում, գյուղում ընդհանուր պարտադիր ուսում կիրառելու գործում:

դ) բանվորների, բատրակների և չքավորների չեքելսաների համար դպրոցն իրապես մատչելի դարձնելու

անհրաժեշտ պայմաններ ստեղծել, այդ խնդիրների վրա հրավիրելով խորհրդային հասարակայնություն ուղադրությունը, աշակերտներին ձրիաբար հագուստ և վոտնաման մատակարարելու, հանրակացարաններ կազմակերպելու, չեքելսաներին դպրոց գնալու համար փոխադրական միջոցներ տրամադրելու և նրանց թոշակներով ապահովելու ձևով, այդ նպատակով միջոցներ ձեռք առնելով բարելավելու դպրոցական մասունկների սոցիալական կազմը, մասնավորապես միջնակարգ դպրոցներում: Անհրաժեշտ և հետևել, վոր 11 աստիճանի դպրոցների վարձովի ուսման վերաբերյալ վորոշումը ձշտություն մ կիրառվի:

Վերոհիշյալ խնդիրները լուծելու համար կոմյերիտական ըլիջներն ու պիոներ-կազմակերպությունները պետք և կոնկրետ ձեռնարկումներ մշակել և նրանց հիմունքով կազմակերպեն ֆորպոստների և դպրոցական ինքնավարությունների պրակտիկ աշխատանքը: Միաժամանակ Համլենկոմյերիտություն կազմակերպությունները պետք և ամենակտիվ մասնակցությունը ցույց տան խորհուրդների սեկցիաների աշխատանքներում, առաջին հերթին՝ կուլտուրական սեկցիայի, ինչպես նաև մասնակցություն ունենան դպրոցական խորհուրդներում, կոմյերիտություն քությունը դնելով այդ կազմակերպությունների աշխատանքը:

ե) համագումարն անհրաժեշտ և համարում բարձրացնել դպրոցի մանկական ինքնավարությունների, պիոներների և կոմյերիտություն կազմակերպությունների դերը և ակտիվ դարձնել նրանց մասնակցությունը դպրոցի բոլոր ուսումնա-մեթոդական աշխատանքին:

րում: Համագումարը Լուսժողկոմատի ուղադրութիւնն է հրաժիրում այն հանգամանքի վրա, վոր հին դըպրոցի վատթարացումն մեթոդներն ոգտադործելու տենդենցներ կան, ինչպես, որինակ՝ դասարանական դաստիարակների ինստիտուտի վերականգնում, պատիժների, թվանշանների, քննութիւնների սահմանում և այլն, և անհրաժեշտ է համարում, վոր վճռական պայքար մղվի այդ տենդենցների դեմ, մասնակից անկող ալդ պայքարին դպրոցական ինքնավարութիւններին և ֆորպոստներին:

զ) նկատի առնելով կրօնական դպրոցների գոյութիւնը մի շարք վայրերում (մասնավանդ ազգային շրջաններում), համագումարն անհրաժեշտ է համարում, վոր կոմչերիտմիութեան կազմակերպութիւնները միջոցներ ձեռք առնեն՝ ամբողջովին լիկվիդացիայի յենթարկելու կրօնական դպրոցները և նոր խորհրդային դպրոցներ հիմնելու:

24. Համագումարն սխալ է համարում առանձին կազմակերպութիւններում յեղած այն տենդենցները վորոնք կայանում են նրանում, վոր փորձեր են արվում ջոկատներն արտադրութիւնից դպրոցները տեղափոխելու:

25. Նպատակ ունենալով ուժեղացնելու կոմմունիստական ազդեցութիւնը դպրոցի աշխատանքներում, համագումարն անհրաժեշտ է համարում կուսակցական կազմակերպութեան և Լուսժողկոմատի առաջ գնիլ թե լուսբաժինների ասպարաւը և թե դպրոցները կոմմունիստ-մանկավարժներով ամրապնդելու անհրաժեշտութեան խնդիրը:

Պայքար անապաստանութեան դեմ յեւ մանուկների իրավունքների պաշտպանութիւնը

26. Մանուկների մեջ կատարվող աշխատանքի և սոցիալիստական շինարարութեան գործում մասնակցելու ասպարիզում կոմչերիտմիութեան աշխատանքի կարևորագույն բնագավառներից մեկը համագումարը համարում է անապաստանութեան դեմ և մանուկների կյանքն ու կենցաղն ընդհանրապես բարելավելու համար մղվող պայքարը: Առանց դրան անհնարին է մանուկների զգալի մասի բարեհաջող ուսուցումն ու դաստիարակութիւնը: Համագումարն արձանագրում է, վոր այդ ուղղութեամբ, իրաց առյալ համամիութենական շարաթորյալը, կոմչերիտական կազմակերպութիւնների կողմից արված է և արվում է շատ քիչ: Կոմչերիտմիութեան կազմակերպութիւնները պետք է աշխատանքը զննեն այնպիսի բարձրութեան վրա, վորը համապատասխանում է կոմչերիտմիութեան խնդիրներին ու պարտականութիւններին: Անհրաժեշտ է, վոր այդ բնագավառում Կենտրոնական Կոմիտեն իր առուրա աշխատանքի ընթացքում ավելի մեծ հսկողութիւն ու ղեկավարութիւն ցույց տա տեղական կոմչերիտական կազմակերպութիւնների վերաբերմամբ:

27. Հիմնականում կոմչերիտմիութեան աշխատանքն այդ բնագավառում պետք է կատարվի հետևյալ ուղղութեամբ.

ա) աջակցել փողոցային անապաստանութեան լիկվիդացիայի և անխնամ, կարիքավոր մանուկների վերաբերմամբ սխտեմատիկ հսկողութիւն կազմակեր-

պելու գործին, այդ նպատակով կոմյերիտականներից և կոմյերիտուհիներից մանկական սոցիալական տեսչութչան կադրեր ստեղծելով՝ հասարակական աշխատանքի կարգով.

բ) ուշադրութչունը կենտրոնացնել մանկատների աշխատանքի վրա, միջոցներ ձեռք առնելով բարելավելու նրանց նյութական բազան և ոգնելով նպատակահարմար ձևով կազմակերպելու նրանց աշխատանքը, միջոցներ ձեռք առնելով բարելավելու ղեկավարների վորակական կազմը, ամեն կերպ ուժեղացնելով մանուկների աշխատանքային դաստիարակութչունը՝ նրանցից անտիճանաբար աշխկոմմունաներ կազմակերպելու միջոցով (ոգտագործելով Միացյալ Պետքադվարչութչան աշխկոմմունայի փորձը, ուղարկելով այդ հաստատութչուններն աշխատելու ամենափորձված առաջնորդներին.

գ) կանխել անապաստանութչունը՝ փոխոգկոմների, խորհուրդների, արհմիութչունների, լուսարաժինների միջոցով ոգնութչուն կազմակերպելով այն կարիքավոր ընտանիքների համար, վորոնց յերեխաներն ապրում են նյութական ծանր պայմաններում, բանվորական աւկումբների, խրճիթ-ընթերցարանների, դրքի ու լրագրի միջոցով քաղաքական-լուսավորական աշխատանք կիրառելով աշխատավորների մեջ՝ մանուկների դաստիարակութչան խնդիրների շուրջը և ամեն կերպ ուժեղացնելով կոմյերիտմիութչան մասնակցութչունը «Մանուկների բարեկամ» ընկերութչան աշխատանքներում.

դ) հակոգութչուն ունենալ պատանի բատրակների, փոքրահասակների, տնայնագործների մոտ սովորող-

ների և պայմանագրական հիմունքներով դյուլացիական տնտեսութչուններին հանձնվածների աշխատանքի և կենցաղի պայմանների վրա՝ արհմիութչունների, խորհուրդների, փոխոգկոմների և լուսարաժինների մարմինների միջոցով.

ե) պաշտպանել աշխատավոր յերիտասարդութչան նախաձեռնութչունը՝ անապաստանութչան դեմ պայքարելու, և մասնավորապես կամավոր աշխատանքային շաբաթորյակներ և այլն ձեռնարկումներ կազմակերպելու գործում:

Վ

Արագպրոցական աշխատանքի մանուկների մեջ

28. Անցման շրջանի պայմաններում, յերբ դեռ շատ ուժեղ են մենող կենցաղի ազդեցութչունները, յերբ ընտանիքի և փողոցի ազդեցութչունները հաճախ բացասական բնույթ ե կրում, արտագպրոցական աշխատանքը կարեւորագույն նշանակութչուն ե ստանում: Միայն մասշտաբով լայն, վորակավ հետաքրքրական և ոգտակար արտագպրոցական աշխատանքը կարող ե լուրջ միջոց ծառայել՝ մանուկներին փողոցի բացասական կողմերից և վատ սովորութչուններից կտրելու և հեռացնելու և նրանց կոմմունիստական դաստիարակութչուն տալու համար:

29. Թեպետե կոմյերիտմիութչունը և պիոներ-կազմակերպութչունը արտագպրոցական աշխատանքի խնդիրը դրել են իրենց առաջ, բայց դեռ շատ չնչին արդյունքների յեն հասել: Նույնիսկ խոշոր արդյունաբերական շրջաններում, նոր կառուցվող բանվորա-

կան ավաններում՝ յերբեմն չի լինում մի հաստատություն, վորը կազմակերպեր մանուկների ժամանցը և նրանց կուլտուրական ոգտագործումը: Կոմյերիտմիությունը և պիոներ-կազմակերպությունը պետք է վճռականությամբ պայքարեն դեպի մանուկների շահերը յեղած անուշադիր վերաբերմունքի դեմ, ձգտելով մաքսիմալ չափով ապահովելու այդ շահերի բավարարումը: Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի պետության կողմից արտադպրոցական հաստատությունների հաստատուն միջնիմում սահմանվի, մանավանդ բանվորական ավաններում:

Մանկական ակումբի խնդիրները, հրապարակների, մանկական թատրոնի, կինոֆիլմի և մանկական գրքերակների կազմակերպումը, — այդ ամենը պետք է կազմի կոմյերիտմիության և պիոներ-կազմակերպության գործնական աշխատանքի անբաժանելի մասը, ըստ վորում կոմյերիտմության և պիոներ կազմակերպության պարտականությունն է՝ կազմակերպել հասարակական կարծիքը և միջոցներ ձեռք առնել, վորպեսզի մանուկների շրջանում կատարվող արտադպրոցական աշխատանքի բարելավման գործում վճռական բեկում կատարվի:

30. Համագումարն անհրաժեշտ է համարում, վոր մանուկների շրջանում լայն զարգացում ստանա տեխնիկական և աշխատանքային խմբակների ու արհեստանոցների կազմակերպման գործը, ոգտագործելով դրա համար տնտեսական մարմինների, արհմիությունների, ՕԴՔ-ի, Պաշլ-Ավիաբիմի, Տեխմասի և այլնի ուժերն ու միջոցները:

31. Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դար-

ձընել մանուկների առողջությունն ամրապնդելու և ֆիզկուլտուրան զարգացնելու վրա, ըստ վորում ֆիզկուլտուրան պետք է հարմարեցվի առողջական դրությանը և հասակի առանձնահատկություններին: Ռազմականացման ասպարիզում անհրաժեշտ է ուժեղացնել կապն ու գրագրությունը Կարմիր բանակի և նավատորմի մասերի հետ, զարկ տալ քիմիական խմբակների աշխատանքներին, նշանաբարության (СИГНАЛИЗАЦИЯ), տեղագրության և հրացանաձգության գործի ուսումնասիրությանը, կազմակերպելով մանուկների մասսայական ռազմական խաղեր, արշավանքներ և «արտելքներ» (ВЫЛАЗКИ). Պաշլ-Ավիաբիմի և Լուսժողովմատի մարմինները պետք է ոգնեն այդ գործում՝ դեկավարներ տրամադրելու, ձեռնարկներ մատակարարելու և մեթոդական ցուցմունքներ մշակելու միջոցով:

32. Արտադպրոցական աշխատանքի բուլանդակ ընթացքում կոմյերիտմիությունը և պիոներ-կազմակերպությունը պետք է վարեն այնպիսի գիծ, վոր այդ աշխատանքն առաջին հերթին ընդգրկի դպրոցից դուրս մնացած մանուկներին, ինչպես նաև անապատաններին և բանվորների, բարակների և գյուղական չքավորության չեքխաներին:

33. Մանուկների կոմիունիստական դաստիարակության ճանապարհին յեղած կարևորագույն խոչընդոտներից մեկը չափազանց սուղ նյութական բազան է: Դպրոցը, արտադպրոցական աշխատանքը, պիոներական շարժումը դեռ մինչև այժմ ել խոշոր նյութական դժվարություններ են կրում, դժվարություններ, վորոնք մեծապես թուլացնում են նրանց աշխատանքի թափը և ցածրացնում վորակը:

Ուստի Համլենկոմյերիտմիութեան համագումարն ամենակատեգորիկ կերպով առաջադրում է հետևյալ խնդիրը. իրապես կենսագործել 15-րդ կուսակցական համագումարի ցուցմունքները՝ կուլտուրական շինարարութեան և այդ կապակցութեամբ մանուկների դաստիարակութեան և կրթութեան հետ կապված այդ ամբողջ աշխատանքի նյութական բազան լուրջ կերպով ամրապնդելու (արդեն ընթացիկ տարվանից) վերաբերյալ:

Համագումարն անհրաժեշտ է համարում, վոր հանրապետական ֆոնդեր հատկացվեն, ֆոնդեր, վորոնք պետք է ոգտագործվեն այն ոգնութեան համար, վոր պետք է ցույց տրվի կուլտուրական հետաքննող շրջաններին հիմնական կուլտուրական խնդիրների լուծման գործում (ընդհանուր ուժում, մասսայական պրոֆիլթութիւն, քաղլուսավարական աշխատանք գյուղում, ոգնութիւն պիոներ-շարժման):

Կուլտուրական հաստատութիւնների շինարարութեան հնգամյա պլանի մեջ պետք է մտցվի մանկական ակումբների, տեխնիկական և գյուղատնտեսական կայանների շինարարութիւնը և մանուկների կարիքների համար անհրաժեշտ բուժական հաստատութիւնների (պրոֆիլակտիկական մանկական ամբուլատորիաների, ինչպես նաև ոժանդակ հաստատութիւնների) ցանցի ընդլայնումը:

Համագումարը գտնում է, վոր մանուկների շրջանում կատարվող կրթական և դաստիարակչական աշխատանքի նյութական սպասարկման լուրջ բարելավումն անհրաժեշտ է միայն պետական միջոցներով, ուստի և անհրաժեշտ է մեծ չափով ոգտա-

գործել նաև այն միջոցները, վոր հավաքվում են ինքնահարկման կարգով՝ մանուկների մեջ դաստիարակչական աշխատանք կատարելու համար: Տնտեսական, կոոպերատիվ և մանավանդ աշխատակերպութիւնները պետք է ավելի մեծ չափով, քան այժմ, ոգտագործեն իրենց միջոցներն աշխատավորների լեռնայաների կուլտուրական կարիքները հոգալու համար: Իրենց բանվորների և գյուղացիների բյուջեում դեռ շատ ծախքեր կան (կրօնի, ողու և այլն), վորոնք կոմյերիտմիութեան և պիոներ-կազմակերպութեան ջանքերով պետք է լեռ խլվեն՝ մանուկների մեջ կատարվող կուլտուրական աշխատանքի համար:

34. Նպատակ ունենալով միացնելու պետական, արհեստակցական և հասարակական կազմակերպութիւնների գործունեութիւնը՝ արտադպրոցական աշխատանքի և այդ աշխատանքը ճիշտ դեկավարելու գրծով, համագումարն անհրաժեշտ է համարում, վոր ժողովրդական կրթութեան բաժիններին (լուսբաժիններին) կից արտադպրոցական աշխատանքի խորհուրդներ կազմակերպվեն, խորհուրդներ, վորոնք պետք է լինեն այդ աշխատանքի դեկավար կենտրոնները:

35. Համագումարը կոմյերիտական կազմակերպութեան ուղադրութիւնն է դարձնում՝ մինչդպրոցական դաստիարակութեան գործին ավելի մեծ ուղադրութիւն նվիրելու անհրաժեշտութեան վրա:

36. Արտադպրոցական աշխատանքի մեջ հիմնական կազմակերպչական կորիզ և կենտրոն պետք է հանդիսանան պիոներական ջոկատները: Պիոներական ջոկատներն այն հիմնական ուժն են, վորի ոգնութեամբ պետք է կազմակերպվի արտադպրոցական աշ-

խատանքը չկազմակերպված մանուկների մասսաների մեջ: Պետք է վճռական հակահարված տալ պիոներական ջոկատներն աչդ իմաստով անտես առնելու բոլոր տենդենցներին:

VIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԸՆԴՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

1. 1928 թվի ոգոստոսի 1-ից կիրառել անգրագիտության վերացման ամսորյալ՝ ՀամԼԿՅԵՄ համագումարի՝ անգրագիտության վերացման վերաբերյալ վորոշումները կենսագործելու և կոմյերիտմիության կողմից այդ աշխատանքներում ցուցաբերվող մասնակցությունն ստուգելու համար:

2. Մոբիլիզացիայի յենթարկել, պատրաստել (լուսբաժինների մարմինների միջոցով) 1000 կոմյերիտական անգրագիտության վերացման ցանցային աշխատանքի համար (տեղական գրագչեկանների տրամադրության տակ):

3. Յուրաքանչյուր գրագետ կոմյերիտական (և քաղաքում և գյուղում) պետք է մեկ անգրագետի գրագիտություն սովորեցնի:

4. Վերացնել անգրագիտությունը ՀամԼԿՅԵՄ անդամների միջից:

5. Կոմյերիտականներին մանկավարժական տեխնիկոսներ ներգրավելու լայն կամպանիա կիրառել I աստիճանի դպրոցների համար կոմյերիտական ուսուցիչների կադրեր պատրաստելու (սիստեմատիկաբար) նպատակով:

6. Յուրաքանչյուր աշուն ուսման սկզբի ժամ

տահմանել (բոլոր դպրոցների, դասընթացների և բարձրագույն կրթական հաստատությունների համար):

7. ՀամԼԿՅԵՄ լավագույն բջիջի մրցանակաբաշխություն կիրառել, նկատի առնելով այդ բջիջների կատարած աշխատանքը՝ «Ժողովրդի բարեկամների ընկերության» աշխատանքներում ցուցաբերած մասնակցության և անգործադիտության վերացման ասպարիզում:

8. Կոմյերիտմիության յուրաքանչյուր կոմիտե (և ՀամԼԿՅԵՄ բջիջ) պետք է մեկ լիազոր տրամադրի լեռնաօդային կոմիտեի և ԺԲԸ-յան մեջ անգործադիտության վերացման աշխատանք կատարելու համար, նրա միջոցով սխտեմատիկաբար ստուգելով և ղեկավարելով կոմյերիտմիության մասնակցությունը անգործադիտության և կիսագործադիտության վերացման գործում:

ՀԱՄԼԵՆԿՈՐՑԵՐԻ ՏՄԻՈՒԹՅԱՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՏՆԵՐԸ

(ՀամԼԵՆԿՈՐՑԵՐԻ ՏՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԻՐՈՒԹՅՆԱԿԱՆ VIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ)

Առաջին ազգային խորհրդակցությունից հետո կոմյերիտմիությունը խոշոր հաջողություններ է ունեցել ազգային հանրապետություններում և շրջաններում: Կոմյերիտական կազմակերպությունները դարձացել և դարձել են մասսայական կազմակերպություններ, ներգրավելով իրենց շարքերում հիմնական ազգությունների բանվորա-գյուղացիական լեռնաօդային կոմիտեներ, բարելավվել են ազգամիջյան փոխհարաբերությունները, առաջ են քաշվել ազգային ակտիվի խոշոր կադրեր՝ ղեկավար աշխատանքի համար, և ուժեղացել է կոմյերիտմիության ազդեցությունը ազգային գյուղում: Մի շարք հաջողություններ են ունեցել Հոմ. ԼԿՅԵՄ ազգային կազմակերպությունները նաև Հոմ. ԼԿՅԵՄ 7-րդ համամիութենական համագումարի և 5-րդ համամիութենական կոնֆերենցիայի՝ միութենական աշխատանքն աշխուժացնելու վերաբերյալ վորոշումները կիրառելու ասպարիզում: Սակայն պետք է խոստովանել, վոր ՀամԼԿՅԵՄ ազգային հանրապետությունների կազմակերպությունների մեծամասնու-

թյունը (գլխավորապես Արևելքում) այդ բնագավառում ավելի դանդաղ և շարժվում, քան ամբողջ կոմյերիտմիությունը: Այդ բացատրվում է վոչ միայն որպեսզի հանգամանքներով, այլև նրանով, վոր այդ կոմյերիտական կազմակերպությունները չեն կարողանում կոմյերիտական աշխատանքի աշխուժացման խնդիրները սերտ կերպով կապել իրենց հանրապետությունների տնտեսական և կուլտուրական զարգացման առանձնահատկությունների հետ:

Այդ տարիների ընթացքում կուսակցության կողմից ազգային հանրապետություններում կիրառված են մի շարք խոշոր տնտեսական ձեռնարկումներ, վորոնք ընթանում են ազգային հանրապետությունների կուլտուրական և եկոնոմիկական լիբերալիզմով և աշխատավորների շահերը պրոլետարիատին հակադիր ու թշնամի դասակարգերի դիմաց ապահովելու գծով:

Հողա-ջրային ռեֆորմ է կիրառված Միջին Ասիայի հանրապետություններում, ուժեղացել է արդյունաբերական շինարարության թափը, և ավարտված է շրջանացումը հանրապետությունների միջամասնության մեջ: Այդ հիմունքով ուժեղացել է աշխատավորների, և առաջին հերթին, չքավորության քաղաքական ակտիվության և դասակարգային գիտակցականության (СОЗНАТЕЛЬНОСТЬ) աճումը:

Դրա հետ միասին աճում է կուսակցության հակառակորդ ու թշնամի նացիոնալիստական-բուրժուական տարրերի ակտիվությունը: Այդ արտահայտվում է մահմեդական հոգևորականության գործունեությունը աշխուժացմամբ, ինչպես նաև այն փորձերի ձևով, վոր արվում են տնտեսական-կուլտուրական շինա-

րարության բնագավառում (որինակ՝ հողային հարցը լուծելիս, արաբական այբուբենը լատինացման չենթարկելիս) կուսակցության քաղաքականության դեմ մղվող պայքարի շուրջը նացիոնալիստական տարրերին համախմբելու ու միավորելու համար: Նացիոնալիստական տարրերի ակտիվության աճումը նմանապես արտահայտվում է այն շովինիստական տրամադրությունների ուժեղացմամբ, վոր մուտք են գործում նույնիսկ կոմյերիտական կազմակերպությունների մեջ:

Ընդամենը պետք է նկատի ունենալ, վոր նացիոնալիստական-բուրժուական տարրերը, շարունակելով իրենց պայքարը կուսակցության քաղաքականության դեմ՝ տնտեսական բնագավառում վերջին ժամանակներն ուժեղացրել են իրենց ակտիվությունը նաև իդեոլոգիական ֆրոնտում, պայքար մղելով՝ դպրոցը, գրականությունը տիրելու և հենց գրանով էլ դեռահաս կադրերի դաստիարակության վրա ազդեցություն ձեռք բերելու համար: Այդ ցույց է տալիս, վոր վերջին շրջանում ազգային հանրապետությունների պամանեում սրվել է չերիտասարդության վրա ազդեցություն ձեռք բերելու համար մղվող պայքարը: Յեկներով այն անհրաժեշտությունից, վոր պետք է իրապես ինտերնացիոնալիստական, բալչիկյան կադրեր դաստիարակել կոմունիստական կուսակցությունների համար, համազումարը գտնում է, վոր ազգային կազմակերպությունների հիմնական խնդիրը առաջիկա օրը չեղանում՝ իրենց օարբերի դասակարգային ձեզավորումը չեղ կոմունիստական դաստիարակություն և, հիմք ունենալով իրենց հանրապետությունների ու շրջ-

ջանքերի տնտեսական ու կուլտուրական կյանքում ցուցաբերվող կոնկրետ մասնակցությունը: Հենց այդ հիմնական խնդրից պետք է յեղնեն կոմյերիամիությունն ազգային հանրապետությունների կազմակերպություններն իրենց առօրյա աշխատանքներում:

I

Ազգությունների փաստացի անհավասարության լիկվիդացիան, ֆեոդալիզմի մնացորդների դեմ մղվող պայքարը (Արևելքում) աշխատավոր մասսաների տնտեսական մակարդակը սոցիալիստական հիմունքով բարձրացնելու միջոցով՝ կուսակցության հիմնական խնդիրներից մեկն է հանդիսանում: Այդ կարելի չէ իրագործել տնտեսական շինարարության բնագավառում միշտ կոնկրետ միջոցներ՝ կիրառելով, ինչպես, որինակ՝ ճիշտ կերպով լուծելով հողային ու ջրային խնդիրները, զարկ տալով գյուղատնտեսության հատուկ ճյուղերին և նպաստելով արդյունաբերության զարգացմանը ազգային հանրապետություններում: Այդ ձեռնարկումների կիրառմանը զուգընթաց, կուսակցությունը պետք է ակտիվ աշխատանք կատարի չքավորությունը դասակարգայնորեն կազմակերպելու և տնտեսական կախումից, բայությունից (байство) և կախվածությունից վերջնականապես ազատելու ուղղությամբ:

Այգիլիսի պայմաններում կոմյերիամիության առջև դրված են հետևյալ խնդիրները.

1. Ակտիվ մասնակցություն և ոգնություն կուսակցությանը հողային հարցի լուծման գործում: Այն շրջաններում, վորտեղ հողա-ջրային ռեֆորմն արդեն

վերջացած է, գլխավոր ուղադրությունը պետք է դարձվի այդ ռեֆորմի արդյունքներն ամրապնդելու, բեկություն ու կուլակության դեմ պայքարելու վրա, սարրեր, վորոնք ձգտում են վարձակալության (аренда) և այլ պրիոմների (պետապարասի առանձին ողակներն ոգտագործելու փորձերի) միջոցով յետ ստանալ աչն հողը, վոր տրված է չքավորներին ու միջակներին: Ուստի և բոլոր ուժերով պետք է լաչն աշխատանք ծավալել՝ ոգնելու կուսակցությանը գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման գործում, մանավանդ աչն շրջաններում, ուր հողային ռեֆորմ է կիրառված և նոր վորոգում է մտցված, ինչպես նաև պետք է ոգնել կուսակցությանը, լիակատար հողաշինարարություն կիրառելու ազգային հանրապետություններում և շրջաններում: Մասնավորապես անհրաժեշտ է հաշվի առնել ՀամԿՅՑՄ փորձը՝ կոմյերիտական-տնտեսերի մեջ կատարվող աշխատանքի վերաբերյալ և տարածել այն մյուս կազմակերպությունների վրա:

2. Մասնակցություն տնտեսության առանձին ճյուղերի զարգացման մեջ, հատուկ ուղադրություն նվիրելով բամբակագործության բարձրացմանը (Միջին Ասիայում, Անդրկովկասում), քոչվորական տնտեսությունների վերակազմությանը (Կազակստանում և իրգիդիայում) նստակյացության ուղղությամբ և անասնաբուծության զարգացմանը (Թաթարիայում, Բաշկիրիայում և այլն): Այդ ամբողջ աշխատանքը պետք է զարգանս կոոպերացման հիմունքով և պահանջում է, վոր ազգային հանրապետության յուրաքանչյուր կազմակերպության մեջ ալդ գործին մաս-

ճակցելու կոճկրես պլան մշակվի: Մասնավորապես անհրաժեշտ է աչժմ հեթ աջակցութուն ցույց տալ Գլխամբակկոմի մարմիններին՝ բամբակացանների (пекханство) կոնտրակտացիա կնքելիս: Բացի դրանից Միջին Ասիայի և Անդրկովկասի կազմակերպութունների համար բացառիկ նշանակութուն ունի այն մասնակցութունը, վոր նրանք պետք է ցույց տան վոռոգման հետ կապված պետական և հասարակական աշխատանքների զարգացման գործում:

Հողա-ջրային ուժերի կիրառումը, ինվենտարի մասնակի եքսպրոպրիացիան և այլն կրճատում են բեկության և կուլակության դերը գյուղատնտեսության մեջ: Սակայն այդ բեկութունն ու կուլակութունը իր գործունեությունը վորոշ հափով տեղափոխել և առևտրական վոլորտը (сфера): Այդ հանգամանքը ազգային հանրապետությունների և շրջանների միութենական կազմակերպությունների առաջ սուր կերպով դնում է այն ոգնության խնդիրը, վոր պետք է ցույց տրվի կուսակցությանը՝ պետական առևտրական ապալարատը և սպառողական կոոպերացիան ամրապնդելու և զարգացնելու և իրենց շարքերից կոոպերատոռներին կադրեր պատրաստելու գործում:

3. Նկատի առնելով ազգային հանրապետությունների ինդուստրիացման պլանի իրագործումը (Անդրկովկասում—Ձագեսը, Թուրքեստան-Սիբիրի ձանապարհը և այլն),—ՀամԼԿՅԵՄ ազգային կազմակերպությունների հիմնական խնդիրներից մեկը՝ բատրակային-չքավորական լերիտասարգության հիմնական զանգվածներին, կիրառվող շինարարական աշխատանքներին և նոր բացվող ձեռնարկություններին մասնակից անելն

և հանդիսանում: Ազգային հանրապետություններում հիմնական (коренная) լերիտասարգութունը, գաղով նոր բացվող և ընդարձակվող գործարանները, առաջին անգամն է գործ ունենում գործարանային արտադրություն հետ: Ուստի և անհրաժեշտ է, վոր ՀամԼԿՅԵՄ կազմակերպությունները, հաշվի առնելով այդ լերիտասարգության ըլորը առանձնատկությունները, ուշադրությամբ կանոնավորեն նրա արտադրական դաստիարակության գործը (հատուկ բաժանմունքների կազմակերպում՝ գործուաներին կից, արտադրական պրոպագանդ՝ մայրենի լեզվով, պրոֆաշխատանքին մասնակից անելը և այլն) և մասնակից անեն նրան արդյունարբություն ռացիոնալացման աշխատանքներին:

Միաժամանակ անհրաժեշտ է լայն պրոպագանդ ծավալել աշխատավոր լերիտասարգության մասսաների մեջ ազգային հանրապետությունների ինդուստրիացման ելութան և այն արդյունքների վերաբերյալ, վոր նա տալիս է այդ հանրապետությունների ժողովուրդների տնտեսական և կուլտուրական զարգացման համար:

4. Բացառիկ նշանակութուն է ստանում պետական և տնտեսական ապալարատի համար անհրաժեշտ դասակարգայնապես կաշուն ու հետևողական կուլտուրական աշխատավորների պատրաստումն ու դաստիարակումը, վորով և ատիճանաբար չքանում են պետապալարատից մեզ խորթ և թշնամի, նացիոնալիստոռեն տրամադրված տարրերը: Այդ նպատակով անհրաժեշտ է, վոր կազմակերպություններն ավելի մեծ չափով կոմյերիտականներին մասնակից անեն պետա-

բոլոր արտահայտութիւններով հանդերձ, մասնավորապէս՝ արմատավորացման (коренизация) գործին ընդլիմութիւն ցույց տալու ուղղութեամբ, և վոր այդ թեքումի դեմ պետք է ամենալճուկան պայքարը մղել, համագումարը միաժամանակ նշում է տեղական նացիոնալիստական թեքումների դեմ ուղղված հակահարվածն ու ժեղացնելու անհրաժեշտութիւնը, թեքումներ, վորոնք արտահայտվում են ԽՍՀՄ-ից անջատվելու ձգտումներ ցուցահանելու, ազգային փոքրամասնութիւնների շահերը մոռացութեան տալու, պրոլետարիատի ղեկավարութեանը չվստահելու, արմատավորացման խնդիրներում կուսակցութեան քաղաքականութիւնը խեղաթուրելու ձևով: Նմանապէս յեռանդուն կերպով պետք է պայքարել այն աստիճանատորական արմատադրութիւնների դեմ, վորոնք մուտք են գործում թե ազգային յերիտասարդութեան շարքերը և թե ակտիվի ու կոմյերիտմիութեան շարքերը:

3. Այն պայմաններում, յերբ ազգային ինտելիգենցիայի վորոշ, մեզ թշնամի, տարրերը պայքար են մղում դպրոցն իրենց ազդեցութեան տակ գցելու համար, դպրոցների իրական խորհրդացնացման ամենաեյակական միջոցները՝ նոր ուսուցչութեան կադրեր պատրաստելը և քաղաքականապէս հետեւողական գիծ պարունակող դասագրքեր հրատարակելն է:

Ուստի և Համլենկոմյերիտմիութեան կազմակերպութիւններից պահանջվում է՝

ա) կազմակերպել կոմյերիտականների ընտրանք (подбор) բանվորա-բատրակային և չքավորական տարրերից, ավելի մեծ թվով ուղարկելով նրանց մանկավարժական և բարձրագոյն դպրոցները:

բ) ուժողացնել դաստիարակչական աշխատանքը կրթական հաստատութիւններում:

գ) մասնակցել՝ ուսումնական և գեղարվեստական-քաղաքական գրականութեան հրատարակութեան պլան մշակելու և այդ գրականութեան բովանդակութեանը հսկելու աշխատանքներին:

Միաժամանակ պետք է շարունակել՝ խորհրդայնորեն տրամադրված ազգային ինտելիգենցիայի հետ ունեցած գործակցութիւնն ամրապնդելու գիծը, մասնակից անելով նրան հասարակական աշխատանքներին, բայց միաժամանակ քննադատելով նրա կողմից արտահայտվող նացիոնալիստական հայացքները: Միևնույն ժամանակ պետք է պայքարել ազդեցութիւն ձեռք բերելու ազգային ինտելիգենցիայի տատանվող խավերի վրա, նրանց՝ ամենակարճ ժամանակամիջոցում հասարակական ակտիվ գործունեցութեան մասնակից անելու պայմաններ ստեղծելով՝ կուսակցութեան և խորհրդային իշխանութեան խնդիրների հիմունքով:

4. Կոմյերիտմիութեան կոմիտեները պետք է սխտեմատիկ աշխատանք կազմակերպեն, յերիտասարդ գրականագետներին պրոլետարական վոգով դաստիարակելու համար: Լրագրերի ու հանդեսների խմբագրութիւնների շուրջը պետք է յերիտասարդ գրականագետների, վորոնց թվում նաև անկուսակցական յերիտասարդ բանվորների ու գյուղացիների միավորութիւններ (об'единения) ու խմբակներ ստեղծվեն: Այդ տեսակետից անհրաժեշտ է ոգտագործել և տարածել Բելոռուսիայի և Ուկրաինայի փորձը, վորոնք այդ ասպարիկում խոշոր հաջողութիւններ են ունեցել («Յերիտասարդ» գրական խմբակները): Միաժամա-

նակ անհրաժեշտ է մեզ մոտ ու հարազատ ազգային դյուղացիական բանաստեղծներին ու գրողներին ավելի մեծ չափով ներգրավել պրոլետարական գրողների հետ աշխատակցելու համար:

5. Կոմյերիտմիության անդրկովկասյան կազմակերպությունների առաջ դարձյալ դրված է յերիտասարդության հակակոմունիստական կազմակերպությունների դեմ (մենշևիկների, դաշնակիների, մուսավաթականների) պայքարելու խնդիրը: Անդրկովկասի կոմյերիտմիության կողմից կիրառված յեռանդուն աշխատանքի հետևանքով հակակոմունիստական կազմակերպությունները, մասնավորապես «յերիտասարդ մարքսիստների միությունը», խոշոր պարտություն կրեցին և բանվոր յերիտասարդության ու գյուղացիական յերիտասարդության ստվարագույն զանգվածներում վոչ մի տղեցություն չունեն: Ձևայած դրան, «յերիտասարդ մարքսիստները» չեն դադարեցնում իրենց գործունեությունը և իրենց աշխատանքը կենտրոնացնում են դպրոցական յերիտասարդության մեջ: Ուստի և ֆլասակար պետք է համարել Անդրկովկասի կոմյերիտմիության համար այն տրամադրությունները, վոր առաջ են չեկել նրա առանձին անդամների մեջ և արտահայտվում են նրանում, վոր այդ տարրերը վերջացած են համարում «յերիտասարդ մարքսիստների» դեմ մղվող պայքարը: Այդ ֆլասակար է նաև այն պատճառով, վոր մենշևիկյան-դաշնակցական իդեոլոգիան իր արտահայտությունն է դսնում նախկին ուղղողիցիոն գրուպպաների մեջ՝ կոմյերիտմիության ներսում (որինակ՝ «յերիտասարդ Թրոցկիստների միությունը» Հայաստանում): Անդրկովկասյան կազմակեր-

պությունը պետք է ավելի լայն և ակտիվ իդեոլոգիական պայքար ծավալի մեզ հակադիր ու թշնամի կազմակերպությունների դեմ, այդ նպատակով ուժեղացնելով աշխատանքը գյուղացիական յերիտասարդության առանձին խավերի մեջ, տարրեր, վորոնք վարակված են նացիոնալիստական դադափաբներով՝ շնորհիվ այդ կազմակերպությունների մղած պրոպագանդի: Մասնավորապես անհրաժեշտ է ուժեղացնել կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքը դպրոցական յերիտասարդության մեջ: Այդ միևնույն ժամանակ պետք նպաստի այն կոմյերիտականների բալլշևիկյան դաստիարակությանը, վորոնք համեմատաբար ուշ են մտել կոմյերիտմիության շարքերը և հնարավորություն չեն ունեցել մասնակցել Անդրկովկասի հակակոմունիստական կազմակերպությունների դեմ մղվող պայքարի նախորդ փուլերին:

6. Կոմյերիտմիության կազմակերպությունները մինչև այժմ բավականաչափ ուժեղ ղեմադրություն ցույց չեն տվել հոգևորականության, մասնավորապես մահմեդական հոգևորականության աճող ակտիվությանը: Այդ ասպարեզում անհրաժեշտ է ակտիվ հարձակման դիմել, հատուկ ուշադրություն դարձնելով «առաջագեմ» հոգևորականության դեմ մղվող պայքարի վրա, մի հոգևորականության, վորն իր գործունեություն մեջ վարագուրվում է խորհրդային լոգունդներով և այնպիսի մեթոդներով, վորախին են մուլաների մասնակցությունը խորհուրդների ընտրություններին, նրանց կողմից սեպարատորներ ձեռք բերելը, կրոնական դպրոցներ հիմնելը և այլն: Մահմեդական հոգևորականության դեմ մղվող պայքարը չի կարելի վարել

բացառապէս հակակրօնական պրօպագանդի մեթոդներով, վորովհետեւ մենք գործ ունենք ազգային բուրժուազիայի վորոշ խավերի հետ, վորոնք իրենց գործունեությունը բավական շատ են դուրս դալիս «կրօնական պաշտամունքի սպասավորներին» շրջանակներէց: Այլ բնագավառում գլխավոր խնդիրն այն է, վոր պետք է ողնել կուսակցութեանը չքավորութեան կազմակերպման և խորհրդային դպրոցներ հիմնելու գործում: Համլենկոմէրիտմիութեան կազմակերպութեան կողմից պահանջվում է հետևյալը. ա) խոչընդոտներ հարուցել կրօնական դպրոցներ հիմնելու դեմ, ղեկավարվելով գոյություն ունեցող որենսդրություններով, հակադրելով նրանց՝ խորհրդային դպրոցներին հիմնումն ու ամրապնդումը, կազմակերպելով այդ առթիվ բնակչության հասարակական կարծիքը. բ) յերևան հանել անլեգալ կերպով կազմակերպվող կրօնական դպրոցները, «գնելով խորհուրդներին՝ հոգևորականությունը դատական պատասխանատվության կանչելու դրա համար, գ) մերկացնել բնակչության մեջ, մանավանդ քաղաքական կամպանիաների ժամանակ, հոգևորականություն գործողությունները վորպէս կուլակություն շահերն արտահայտող գործողություններ, դ) միջոցներ ձեռք առնել՝ աշխուժացնելու բջիջների հակակրօնական աշխատանքը, և մասնավորապէս բարելավելու «Անաստված» ընկերության խմբակների աշխատանքը մայրենի լիզվով, ե) ազիտացիոն բացատրական աշխատանք կատարել պուղապիություն մեջ, համոզելով, վոր նրանք հրաժարվեն կրօնական նպատակների համար միջոցներ հանգանակելուց:

7. Ավելի մեծ ուշադրություն պետք է նվիրվի

մանկական կոմմունիստական շարժմանը, վորն ազգային հանրապետություններն պայմաններում առանձնապէս կարևոր միջոց է հանդիսանում՝ ինտերնացիոնալիստական վոգով նոր մարդիկ դաստիարակելու համար: Այլ պետք է ապահովվի՝ ա) պիտներական ջուկատների համար իդեոլոգիապէս ամուր ղեկավարներ տրամադրելով ու դաստիարակելով, ըստ վորում պիտներական աշխատավորների պատրաստման (զանազան դասընթացներ, խորհրդակցություններ) ամբողջ սխտեմը պետք է ստուգվի այդ տեսակետով, բ) զանազան ազգությունների մանուկների համար եժանագին գեղարվեստական և կրթական գրականություն հրատարակելով, մի գրականություն, վորը պետք է դասակարգայնապէս և իդեոլոգիապէս հետևողական լինի և համապատասխանի կոմմունիստական դաստիարակություն խնդիրներին, և գ) պատանի պիտներների ջուկատների աշխատանքի բովանդակության մեջ ինտերնացիոնալիստական դաստիարակության տարրեր մտցնելով, ազգային թշնամանքի դեմ պայքար մղելով մանուկների շրջանում, իրենց հանրապետությունների կյանքի կոնկրետ փաստերի հիմունքով:

8. Արեւելքի կանանց ազատագրման հետ կապված աշխատանքը խոշոր հեղափոխական գործ է հանդիսանում, մի գործ, վորով պետք է դաստիարակվեն կոմյերիտմութեան անդամները: Զնայած դրան, կոմյերիտմութեան մասնակցությունն այնպիսի մի կարևոր միութեան մասնակցություն «փառանջի» հանելն էր (Ուզբեկստանում), շատ թույլ է չեղել. կազմակերպությունները պարտավոր են տոբոյա մասնակցություն ցուցաբերել կանանց ազատագրման համար

մղվող ամբողջ պայքարում: Այդ աշխատանքի արդյունքներն ամրապնդելու համար նրանք պետք է ոգնեն համապատասխան մարմիններին ճշտությամբ կիրառելու կենցաղային հանցագործությունների վերաբերյալ հատուկ որենսդրությունը, նպաստեն կանոնադրության աշխուժացմանը, կոլլեկտիվներ կազմակերպեն սեպարատորների շուրջը և այլն: Անհրաժեշտ է կոմյերիտականներից պահանջել, վոր նրանք որինակելի կոմունիստական վերաբերմունք ցույց տան դեպի կանայք, դարձնելով այդ նրանց հասարակական պարտականությունը: Համլենկոմյերիտությունն աղջիկներին ինքնուրույն բջիջներ կազմակերպելու փորձը, վորը հիմնականում արգարացրել է իրեն, բայց վորը դեռ բավականաչափ տարածված է, անհրաժեշտ է լայն կերպով տարածել ազգային գյուղում, ուղղելով չերեան յեկած աննորմալությունները, վերադարձնեն, որինակ, աղջիկներին բջիջներ ստեղծելը բացառապես չեվրոպական աղջիկներից, այդ բջիջների կազմակերպումը ղլխալորապես կրթական հաստատություններին կից և նրանց կտրվածությունը կոմյերիտությունն ընդհանուր բջիջների աշխատանքից:

9. Անհրաժեշտ է ակտիվ մասնակցություն ունենալ ազգային գյուղի կուլտուրական վերակառուցման գործում, առաջադրելով կոնկրետ խնդիրներ. պայքար մաքրություն համար, բժշկական ոգնություն կազմակերպում, պայքար սոցիալական ախտերի դեմ, կապվելով այդ աշխատանքների ասպարեզում ԿԽՌԸ կազմակերպությունների հետ: Յերիտասարդություն և առաջին հերթին կոմյերիտականների անդրագիտություն

վերացման խնդիրը, վոր մինչև այժմ բավարար լուծում էր ստացել, պետք է իրականապես կենտրոնական տեղ գրավի գյուղում կատարվող կուլտուրական աշխատանքի մեջ: Այդ ամբողջ աշխատանքի ընթացքում պետք է ավելի մեծ չափով հաշվի առնել ազգային փոքրամասնությունների յերիտասարդության պահանջներն ու կարիքները: Անհրաժեշտ է ամեն կերպ ընդարձակել կուլտ-կրթական աշխատանքը, կապելով այն ազգային կուլտուրայի զարգացման հետ. կինոյի ոգտագործում, ռադիո-սիրողության զարգացում, ներկայացումների կազմակերպում, ֆիզկուլտուրաժաման լայն ծավալում, մասնավորապես ֆիզկուլտուրայի հրահանգիչներ պատրաստելով ազգային փոքրամասնություններից:

10. Կազմակերպությունները պետք է ակտիվ պաշտպանեն արաբական այլուբենի փոխադրումը լատինական շրիֆտի, հասարակական կարծիք ստեղծելով այդ հարցի շուրջը, նախաձեռնություն հայտաբերելով այդ կարևորագույն աշխատանքի գործնական կիրառման մեջ, լատինացման յենթարկելով իրենց լրագրերը, գրքեր հրատարակելով լատինական շրիֆտով, «Յանալիֆ» կամավոր ընկերության բջիջներիցանց ծավալելով, ավելի մեծ չափով ներգրավելով այդ ընկերության մեջ բանվոր յերիտասարդությունը և մանավանդ կոմյերիտական ակտիվին:

11. Համագումարն անհրաժեշտ է համարում, վորը զարկ տրվի ազգային հանրապետությունների ու շրջանների յերիտասարդության ռազմականացման աշխատանքներին, կապելով իրենց գործունեությունն այդ հարցում ազգային գորամասերի խնդիրների հետ:

այնտեղ, ուր այդպիսիք գոյութիւն ունեն, պատրաստելով այդ ուղղութիւնը չերիտասարդութեան մասսաներին, լայն մասնակցութիւն ցուցաբերելով նախակոչալին պատրաստութեան գործում: Բազմականացման աշխատանքը պետք է հարմարեցնելի ու կապելի այս կամ այն ազգային կազմակերպութեան կենդանալին ունակութիւնների հետ (Նիգիտովկա, վորսորգութիւն և այլն):

12. Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել՝ ազգային փոքրամասնութիւնների կուլտուր-լուսավորական սպասարկման աշխատանքը մալրենի լիզվով կիրառելու, մատակարարելով նրանց համապատասխան գրականութիւն, ինչպէս նաև՝ հնարավորութիւններ ընձեռելու նրանց՝ հիմնական ազգութիւնների հետ հասար սովորելու կրթական հաստատութիւններում:

III

Արձանագրելով մի շարք հաջողութիւնների պրոլետարական ղեկավարութեան ամրապնդման գործում, ամենից առաջ, կոմիտիտմիութեան կուսակցական ղեկավարութիւնը բարելավելու իմաստով, համագումարը դրա հետ միասին նշում է հետեւյալ աննորմալութիւնները. բանվոր յերիտասարդութեան՝ միութեան մեջ ունեցած ղեկավար դերի թերազնահատումը մի շարք դեպքերում, կուսակցութեան ղեկավար մարմինների կողմից ցույց տրվող ղեկավարութիւնը կուսակցութեան ներսում պաքարող առանձին գրուպպաների ղեկավարութեամբ փոխարինելու փորձեր, կոմիտիտական ղեկավար ակտիվի և կուսակցական կորիզի տակալին անբավարար սոցիալական կազմ (բացի Ուկ-

րալինալից և Բելուսուսիալից և այլ առանձին կազմակերպութիւններից, ուր ակտիվի սոցիալական կազմը բարելավվել է): Պրոլետարական իդիոկրիտի համար մղվող պայքարը, տնտեսական-կուլտուրական շինարարութեան մեջ ցույց տրվող մասնակցութիւնը պետք է ապահովելի պրոլետարական-կուսակցական ղեկավարութեան հետագա ամրապնդմամբ: Համագումարը հաստատում է ՀամԼԿՅԵՄ կենտկոմի վորոշումը՝ ղեկավարութիւնն ամրապնդելու նպատակով ազգային հանրապետութիւնները բանվորական ակտիվի կազմեր ուղարկելու վերաբերյալ, ինչպէս նաև՝ աշխատանքի ավելի մեծ փորձառութիւն ձեռք բերելու նպատակով արդշունաբերական կազմակերպութիւնների մեջ նացիոնալներ ուղարկելու վերաբերյալ:

Նկատի առնելով այդ, անհրաժեշտ է հետեւյալը.

1. Շարունակել կուսակցութեան և կոմիտիտմիութեան փոխհարաբերութիւնների ամրապնդումը, հաղթահարելով կուսակցական ղեկավարութիւնը խմբակայնութեամբ (գրուպպալինով) փոխարինելու ամեն տեսակի փորձերը, բացատրելով կոմիտիտմիութեան անտեսակի փորձերը, բացատրելով կոմիտիտմիութեան անհամաձայնութիւնը կուսակցական կոմիտեների ղեկավարման հետ, վոր ընդհանուր-կուսակցական գծի միակ դաժներին, վոր ընդհանուր-կուսակցական կոմիտեների ղեկավարութիւնն է, և վոր առանձին գրուպպաների կամ անձանց ղեկավարութիւնը: Ընդամին անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ուժեղացնելու բանվորների, բաւրակների և չքավորների ներգրավումը ՀամԿոմկուսի (Բ) մեջ և մաքսիմալ չափով սահմանափակել «այլնի» ներգրավումը կուսակցութեան մեջ:

2. Կոմիտիտական ակտիվի սոցիալական կազմի վճռական բարելավումը՝ բանվորներին և բաւրակ-

ներին ղեկավար աշխատանքներում (գավկոմներ, շըր-
ջանային կոմիտեներ, մարզկոմներ և ներստկոմ) առաջ
քաշելու միջոցով, շարունակում է մնալ վորպես կա-
րեորագույն մի խնդիր: Անհրաժեշտ է սխտեմատիկա-
բար ոգտագործել բանվոր նացիոնալ-ակտիվիստներին
կազմակերպության հիմնական կետերում:

Հաստատելով ազգային խորհրդակցության վո-
րոշումը չեղրոպական ակտիվ աշխատավորների դերի
վերաբերյալ և հաշվի առնելով ազգային ակտիվիս-
տումը վերջին շրջանում, անհրաժեշտ է միջոցներ
ձեռք առնել բարձրացնելու նրա կուլտուրական մա-
կարդակը, պայքարել նրա ԵՐԱՆՈՒՄ լեռնվաճ յեկող
բացասական գծերի դեմ (պոլիտիկանություն, անպա-
տասխանատվություն, արտաքին հատկանիշների դե-
րակշռումը գործի շահերի վերաբերմամբ, թույլ կապ
մասսաների հետ, բնիշում աշխատել չցանկանալը և
այլն): Այդ բանին պետք է նպաստի ԵՆԿԵՐԱԿԱՆ ԻՃԲ-
ՆԱԲՆԱՊԱՏՈՒՄԱՆ զարգացումը: Կուլտուրական և
թեորետիկական մակարդակը բարձրացնելու համար
անհրաժեշտ է կոմհամալսարաններին և կուսդպրոց-
ներին կից ազգային ակտիվի հատուկ դասընթացներ
կամ գրուպականեր հիմնել:

3. Պետք է ամենայն սրությամբ դրվի կազմա-
կերպության պրոլետարական կորիզի ամրապնդման
խնդիրը: Անհրաժեշտ է համառությամբ բացատրել
գյուղացիական չերիտասարդությանը, վոր, չնայած
ազգային հանրապետութունների բանվոր չերիտա-
սարդության փոքրաթվության, ղեկավար գերը նրան
և պատկանում: Պետք է պայքարել բանվոր չերիտա-
սարդության ղեկավար դերը նսեմացնելու ամեն տեսա-

կի փորձերի դեմ: Յելնելով այդ հիմնական խնդիրնե-
րից, անհրաժեշտ է ամրացնել ազգային հանրապե-
տությունների բոլոր արտադրական բնիշները և կար-
գավորել կազմակերպության սոցիալական կազմը.
ա) կոմչերիտմիության մեջ ներգրավել ամբողջ բան-
վոր և բատրակ չերիտասարդությանը, բ) միության
մեջ ներգրավել միայն լավագույն միջակներին, գ) վըճ-
ուական կերպով մաքրել կոմչերիտմիությունը այն
տարրերից, վորոնք արտահայտում և պաշտպանում են
բայերի (бай) և կուլակներին շահերը:

4. Ազգային հանրապետութունների արդյունա-
բերական բանվոր չերիտասարդության փոքրաթվութ-
յան պատճառով հատուկ նշանակություն է ստանում
այն աշխատանքը, վոր կատարվում է բատրակային և
տնայնագործական-վարձու չերիտասարդության շըր-
ջանում: Մինչև այժմ այդ ասպարիզում շատ քիչ բան
է արված: Կազմակերպություններից պահանջվում է
վճուական բեկում կատարել այն ուղղությամբ, վոր ու-
ժեղացվի աշխատանքը պրոլետարական և կիսապրոլե-
տարական չերիտասարդության այդ մասի շարքերում:
Արեկելում, բատրակության տնտեսական շահերը պաշտ-
պանելիս անհրաժեշտ է կոնկրետ լուղուղներ առաջա-
դրել, պայքար բատրակի ստրկական վիճակի դեմ:
Ավելի լայն կերպով տարածել բատրակ չերիտասար-
դության հատուկ կոնֆերենցիաներ և ժողովներ վու-
մարելու պրակտիկան, ինչպես նաև աջակցել բատրա-
կության արհեստակցական կազմակերպությունների
ամրապնդմանը:

5. Ազգային հանրապետութուններում պրոլետա-
րական ղեկավարություն կիրառելու հետ կապված այն

դժվարությունները, վորոնք առաջ են գալիս նրանից, վոր բանվոր չերիտասարդությունն իր մեծամասնությամբ չի տիրապետում հիմնական ազգության լեզվին, կարող են հաղթահարվել ա) բանվոր կոմիերիտականներին և ակտիվիստներին, պրոլետարական ղեկավարության համար պատասխանատվություն կրելու և կուսակցության ազգային քաղաքականությունը հասկանալու վորով դաստիարակելու միջոցով, բ) կոմիերիտականության կոմիտեների ապագարաաններն ավելի չեռանդուն կերպով մայրենի լեզվի փոխադրելու, ինչպես նաև հիմնական ազգությունների լեզուն ակտիվի կողմից սովորելու միջոցով:

Ուկրաինայի և Բելուսուսիայի կազմակերպություններում պետք է իրական բեկում ստեղծվի բանվոր-կոմիերիտականների մեջ՝ այն ուղղությամբ, վոր ավելի վճռականությամբ չենթարկվի ուկրաինացի ման ու բելուսուսացի ման նրանց ամբողջ աշխատանքը:

IV

Աուլային, կիշլակային և գյուղական բջիջների մեծամասնության հիմնական թերությունն այն հանգամանքն է, վոր նրանք իրենց աշխատանքի մեջ շատ աննշան չափով են արտահայտում իրենց գյուղի հասարակական կյանքի շահերը և շատ քիչ են զբաղվում տեղական տնտեսական և հասարակական խնդիրների լուծմամբ:

Ուստի և միութենական ղեկավարության գլխավոր ուշադրությունը պետք է կենտրոնացվի բջիջի ամբողջական վրա, քիչ չի պրակտիկ ոգնություն ցույց տալու վրա:

Այդ իրավորեցելու համար անհրաժեշտ է, վոր՝

1. Բջիջների աշխատանքի բովանդակության մեջ դերակշռեն այն խնդիրներն ու գործերը, վորոնք կապված են իրենց գյուղի հասարակական կյանքի հետ (կուլտուրական վերաշինություն, կուլեկտիվների կազմակերպում, հողաշինարարություն իր շրջանում և այլն):

2. Վորպես կանոն, բոլոր կոմիտեների աշխատավորները (работники) աշխատեն մասսաների մեջ (կիշլակներում, գյուղում), պահելով ապագարաաններում միայն մարդկանց անհրաժեշտ միևնույն:

3. Ռայոնական և գավառակային կոմիտեները (քարտուղարներ) ամբողջով են ավելի լավ ուժերով, և նրանց վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու սխառեմ կիրառվի:

4. Կոմիտեների ղեկավարությունը խստիվ դիֆֆերենցիացիայի չենթարկվի, նկատի առնելով ՀամԿՅԵՄ ազգային փոքրամասնությունների, ռուսական և կադակային բջիջների սպառարկումը:

5. Բարեկամվի տեղական թերթերի բովանդակությունը այն իմաստով, վոր նրանք իրական ոգնություն ցույց տան գյուղական բջիջներին նրանց աշխատանքի մեջ:

Համագումարը հանձնարարում է նոր կենտկոմին՝

1. Ավելի մեծ ուշադրություն դարձնել տեղական թերթերի բովանդակությունը բարելավելու, ինչպես նաև նրանց նյութական ոժանդակություն ցույց տալու վրա, միջոցներ հատկացնելով տեղական ազգային թերթերի համար:

2. Կիրառել վաչկատուն և հյուսիսային ժողովուրդների մեջ կատարված աշխատանքի փորձի ուսումնասիրությունը:

3. Կանոնավորել ՀամԼԿՅՆՄ աղգային հանրապետությունների և շրջանների կազմակերպությունների կյանքի, աշխատանքի ու փորձի սխառմատիկ լուսաբանությունը կենտրոնական կոմիտեի տական մասնակցով:



ՀԱՄԼԵՆԿԱՐՏՅԵՐԻ ՏՐԻԱՌԹՅԱՆ VIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՓԵՋԿՈՒՆՏՈՒՆՈՒՄԵՅԻ ՄԵՍԻՆ

Համագումարը դտնում և, վոր ֆիզիկուլա-շարժման զարգացման հիմնական արգելակն այդ շարժման ստրուկտուրան և (կառուցվածքը), վորը չի համապատասխանում այն հասարակական-քաղաքական խնդիրներին, վոր զրված են ֆիզիկուլտուրնիկների առաջ: Այդ ամենացայտուն կերպով ցույց են տալիս շարժման ներսում յեղած վեճերի և անհամաձայնությունների փատերն ու որինակները և շարժման թերությունների ամբողջ կոմպլեքսը, ինչպես նաև այն ապոլիտիկությունը, վորը ղեկավարություն ներկա սխտեմի հետեանք և հանդիսանում: Համագումարը նշում և, վոր չնայած ֆիզիկուլտուրայի խորհուրդների, արհմիությունների և կոմիտեի միությունների կողմից ձևաբանված զանազան միջոցներին, աշխատանքի վորեև զգալի բարեկալում չի նկատվում: Շարժման ղեկավարություն այժմյան ստրուկտուրան պայմաններ չի ստեղծում ֆիզիկուլտուրայի շինարարությունը լայն մասսաներին մասնակից անելու համար, մի հանգամանք, վոր չոր-ցամաքություն և կաղյոնշինա չե առաջ բերում խմբակներում: Յենելով այդ զրությունից և հաշվի առնելով խորհրդակցության կողմից ուրվագծված զործնական խնդիրները բարեհաջող կերպով լուծելու անհնարինությունը առանց ստրուկտուրան արմատա-

այն փոփոխելու և միասնական կազմակերպչա-քաղա-քական և մեթոդական ղեկավարութիւնն ստանանելու, համագումարն անհրաժեշտ և համարում, վոր խոշորա-գուն արդյունաբերական կենտրոններում ֆիզկուլտ-շարժումն աստիճանաբար անցնի կամավորութեան սկզբունքի կիրառմանը, այսինքն ստեղծվի ֆիզկուլտուրային կամավոր ընկերութիւն՝ կազմակերպված վարից-վեր ղեկավար մարմինների ընտրովիութեան և ֆիզկուլտուրնիկների լիակատար ինքնադրժունեցութեան հիմունքներով:

Յ Ո Ւ Յ Ա Կ

ՀԱՎԵՆՆԿՈՒՄԵՐԻՏԵՄՈՒՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԱՆՊԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՔԵԼՆԱԾՈՒՆՆԵՐԻ

- | | |
|----------------|-----------------|
| 1. Ազամատով | 22. Ժեզլով |
| 2. Անդրեյկ | 23. Ժելեզով |
| 3. Ախունդ-Ջադե | 24. Ջապլատկին |
| 4. Բեսպալով | 25. Ջիմա |
| 5. Բորրիշ | 26. Ջիմին |
| 6. Բոլարուկիչ | 27. Ջինենկո |
| 7. Բորդադին | 28. Ջոտկին |
| 8. Վասիլյե | 29. Ջունդա |
| 9. Վարդանյան | 30. Իվանով Գ. |
| 10. Վերշկով | 31. Իվանով |
| 11. Վորոնով | 32. Իլյինսկի |
| 12. Գրիգորյե | 33. Կամյոնսկի |
| 13. Գոլովաչ | 34. Կարակուլովա |
| 14. Գոլուբ | 35. Կապլան |
| 15. Գորբովա Մ. | 36. Կապլուն |
| 16. Ջավախիձե | 37. Կենտման |
| 17. Դիվանով | 38. Կորսունով |
| 18. Յեվսեյկ | 39. Կոզլով |
| 19. Յեվստիֆեյկ | 40. Կլիմով |
| 20. Յելագին | 41. Կուրգանով |
| 21. Ժդանով | 42. Կուտեպով |

43. Կոստորով
44. Կոստարյով
45. Լերեդե
46. Լուկյանով
47. Մացիլեիչ
48. Մակարով Վ.
49. Մամենտյե
50. Մատվեյե
51. Մաբալսկի
52. Մարտիրոսյան
53. Միլյայե
54. Միլչակով
55. Մուկլևիչ
56. Նազարով
57. Նուբալիսով
58. Ուլչինսիևով
59. Պավլով
60. Պավլով
61. Պանտյուխով
62. Պերսիևով
63. Պիսկալա
64. Պրեմալե
65. Ռոզենբերգ
66. Ռախմանով
67. Րեպին

68. Սայկին
69. Սամոյլով
70. Սալտանով
71. Սեգալ
72. Սերիևով
73. Սերգեյե
74. Սիրիրյակով
75. Սուրկին
76. Ստալին
77. Ստալ
78. Սևերյանովա
79. Սկոտնիևով
80. Տիտով
81. Տիտովա
82. Ֆայնբերգ
83. Ֆյոդորով
84. Խիթարով
85. Խուսիդ
86. Չերոտարյով
87. Չեմոդանով
88. Շալոխման
89. Շարովյե
90. Շելկովիևով
91. Յանով

Թեկնածուներ

1. Ատամուրազով
2. Բիկբուլատով
3. Բլինով
4. Վոյչենկո
5. Վինոգրադով
6. Գալպերին

7. Գորբին
8. Գուսև
9. Գուստրիկին
10. Յերոֆիցկի
11. Յեսսյակ
12. Իվանով
13. Իլյին
14. Կոնստանտինովա
15. Կուլմատով
16. Մազուս
17. Մուրադով
18. Նաումով
19. Նիկիտին
20. Պոլյակով
21. Պրոկոֆյե
22. Ռամազանով
23. Տոմաշևիչ

24. Տյուլկով
25. Ուլարովա
26. Խուզին
27. Շալիովա
28. Շելյարենկո
29. Շչիպանով

Կ. Բ. Զ.

1. Կառլանի
2. Կրաչենինիևով
3. Միխայլենկո
4. Ոսիպով
5. Պալյուցե
6. Սիլաձե
7. Մեկակով
8. Ֆուրլետով
9. Խարխուրով

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՃ

Կոմյերիտականներ՝ Սորհրդային Միության լե- րիտասարդ պրոլետարներ, լերիտասարդ գյուղացիներ	3
Համլենկոմյերիտմիության Կենտրոնական Կոմի- տեյի հաշվետվությունը	7
ԿԻՄ-ի Համլենկոմյերիտմիության պատգամավո- րության հաշվետվությունը	23
Յերիտասարդության աշխատանքի և կրթության մասին՝ Ժողովրդական տնտեսության զար- գացման հնգամյա պլանի կապակցությամբ	35
Կոմյերիտմիության աշխատանքը գյուղում	74
Համլենկոմյերիտմիության աշխատանքը մանուկ- ների մեջ	111
VIII համագումարի վերոշումը անդրադիտությամբ վերացման մասին	139
Համլենկոմյերիտմիության՝ ազգային հանրապե- տությունների ու շրջանների կազմակեր- պությունների աշխատանքի հիմնական խնդիրները	141
Համլենկոմյերիտմիության VI համագումարի վո- րոշումը ֆիզկուլտուրայի մասին	165
Ցուցակ Համլենկոմյերիտմիության Կենտրոնա- կան Կոմիտեի անդամների և թեկնածուների	167

ՀՀ Ազգային գրադարան



NL0187268

